# ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Թողարկողի ֆիրմային անվանումը

**փակ բաժնետիրական ընկերություն**
Կազմակերպա-իրավական ձևը

**Վազգեն Սարգսյան 2, Երևան 0010, ՀՀ**
**Հեռ՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33**
**Էլ.-փոստ՝ info@ameriabank.am**
**Կայք՝ www.ameriabank.am**

**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

**փակ բաժնետիրական ընկերություն**
Կազմակերպա-իրավական ձևը

**Վազգեն Սարգսյան 2, Երևան 0010, ՀՀ**
**Հեռ՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33**
**Էլ.-փոստ՝ info@ameriabank.am**
**Կայք՝ www.ameriabank.am**

---

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:**

---

| | |
|---|---|
| **Արժեթղթերի տեսակը՝** | անվանական, արժեկտրոնային պարտատոմս |
| **Արժեթղթերի ձևը՝** | ոչ փաստաթղթային |
| **Արժեթղթերի քանակը՝** | համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի |
| **Արժեթղթերի անվանական արժեքը՝** | 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար |
| **Արժեթղթերի թողարկման ծավալը՝** | **Թողարկման ծրագրային ծավալ**՝ 25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ, 70,000,000 (յոթանասուն միլիոն) ԱՄՆ դոլար |
| **Արժեկտրոնը՝** | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| **Շրջանառության ժամկետը՝** | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՄԱՍ 1 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ՄԱՍ 2 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6

2.1 Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ 6
2.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր 11
2.3 Բանկի զարգացման միտումները 13
2.4 Աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ 14
2.5 Ղեկավարությունը և բաժնետերերը 14
2.6 Պարտատոմսերի հիմնական տվյալները 17
2.7 Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը 17
2.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը 18
2.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ 18

ՄԱՍ 3 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 21

3.1 Ռիսկային գործոններ 21
3.2 Հիմնական տեղեկատվություն 23
3.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն 24
3.4 Առաջարկի ժամկետները և պայմանները 38
3.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 49
3.6 Լրացուցիչ տեղեկատվություն 50

ՄԱՍ 4 ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 52

4.1 Անկախ աուդիտորներ 52
4.2 Ռիսկային գործոններ 52
4.3 Տեղեկատվություն թողարկողի մասին 56
4.4 Բիզնեսի նկարագիրը 61
4.5 Թողարկողի կառուցվածքը 65
4.6 Զարգացման վերջին միտումները 66
4.7 Բանկի կառավարման մարմինները և դրանց անդամները 71
4.8 Հսկող անձինք 88
4.9 Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ 89
4.10 Մասնագիտական կարծիքներ 90
4.11 Այլ տեղեկատվություն 90

ՄԱՍ 5 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 91
ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/ 91
ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ/ 95
ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 100
ՀԱՎԵԼՎԱԾ 4: Բանկի կազմակերպչական կառուցվածքը 101
ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման պայմաններ 102
ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ 108

# ՄԱՍ 1 *ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ*

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Անդրեյ Մկրտչյան** | **Խորհրդի նախագահ** | | 10/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Ռիչարդ Օգդոն** | **Խորհրդի անկախ անդամ** | | 10/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Տիգրան Դավթյան** | **Խորհրդի անկախ անդամ** | | 10/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի** | **Խորհրդի անկախ անդամ** | | 10/FEB/21 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Լինդսի Ֆորբս** | **Խորհրդի անդամ** | | 10/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Ֆիլիպ Լինչ** | **Խորհրդի անկախ անդամ** | | |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Կախաբեր Կիկնավելիձե** | **Խորհրդի անկախ անդամ** | | |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |

| | | | |
|---|---|---|---|
| **Արտակ Հանեսյան** | *Տնօրինության նախագահ, Գլխավոր փնօրեն* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Գևորգ Թառումյան** | *Տնօրինության անդամ, Գլխավոր փնօրենի տեղակալ, ֆինանսական գծով փնօրեն* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | (ստորագրություն) | **(ամսաթիվ)** |
| **Երեմ Շահբազյան** | *Տնօրինության անդամի ժ/պ* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Անդրանիկ Բարսեղյան** | *Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման գծով փնօրեն* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Արման Բարսեղյան** | *Տնօրինության անդամ, Մանրածախ բանկինգի փնօրեն* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Արմինե Ղազարյան** | *Տնօրինության անդամ, Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով փնօրեն* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |
| **Գոհար Խաչատրյան** | *Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Արտակ Հանեսյան** | *Տնօրինության նախագահ, Գլխավոր փնօրեն* |  | 09/02/2021 |
| **(անուն, ազգանուն)** | **(պաշտոն)** | **(ստորագրություն)** | **(ամսաթիվ)** |

Կ.Տ.



# ՄԱՍ 2 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.ameriabank.am:

## 2.1 Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ

### 2.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

**Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է**

**Հայերեն՝** Ամերիաբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
**Ռուսերեն՝** Закрытое Акционерное Общество “Америабанк”
**Անգլերեն՝** “Ameriabank” Closed Joint Stock Company

**Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է**

**Հայերեն՝** «Ամերիաբանկ» ՓԲԸ
**Ռուսերեն՝** ЗАО “Америабанк”
**Անգլերեն՝** “Ameriabank” CJSC

| | |
|---|---|
| **Բանկի պետական գրանցման վայրն է՝** | Վազգեն Սարգսյան 2, Երևան 0010, ՀՀ |
| **Բանկի պետական գրանցման համարն է՝** | 50 |
| **Բանկի գտնվելու վայրն է՝** | Վազգեն Սարգսյան 2, Երևան 0010, ՀՀ |
| **Կապի միջոցները՝** | Հեռ.՝ (+37410) 56 11 11<br>Ֆաքս՝ (+37410) 51 31 33<br>էլ. Փոստ՝ info@ameriabank.am<br>կայք՝ www.ameriabank.am |

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ Թողարկող կամ Բանկ) հաճախորդի մենեջերների հետ, որակավորված ներդրողները կարող են նաև կապվել Ներդրումային Բանկային ծառայության Կապիտալի Շուկաների բաժնի որևէ աշխատակցի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37410) 56 11 11:

### 2.1.2 **Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը**

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) ստեղծվել է 1992թ. հուլիսի 24-ին ՀՀ օրենսդրության համաձայն: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 1992թ-ի սեպտեմբերի 8-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0154: Նույն թվականի դեկտեմբերի 8-ին Բանկին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 50 լիցենզիան:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկը ՀՀ ավանդների երաշխավորման համակարգի անդամ է:

Ստորև ներկայացված է Բանկի զարգացման համառոտ պատմական ակնարկը՝ ժամանակագրական կարևոր նշումներով՝

- 2007թ. Հայներարտբանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը (96%) ձեռք բերվեց «Թի Դի Էյ Հոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից: (2011թ. անվանափոխվել է «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդ» ընկերության): 2007-2013թթ. ընթացքում ընկերության մասնակցության

չափը Բանկի կանոնադրական կապիտալում աստիճանաբար ավելացվելով դարձել է 100%:

- 2008թ. «Հայներարտբանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի:
- 2010թ. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն և «Կասկադ բանկ» ՓԲԸ-ն վերակազմակերպվել են միացման միջոցով, որի արդյունքում «Կասկադ բանկ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարել է, իսկ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն պահպանել է իր գործունեությունը նաև որպես «Կասկադ բանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդ:
- 2015թ. ընթացքում Բանկը և Վերակառուցման ու Զարգացման Եվրոպական Բանկը (EBRD) կնքեցին 40 մլն ԱՄՆ դոլարի բաժնետիրական կապիտալի ներգրավման պայմանագիր, որից 30մլն ԱՄՆ դոլարը ներդրվեց 2015թ.-ի դեկտեմբեր ամսին, իսկ մնացած 10 մլն ԱՄՆ դոլարը կտրամադրվի Բանկին կոնսոլիդացիոն ծրագրերի իրականացմանն աջակցելու համար: Նույն թվականին IFC-ն Բանկին հատկացրեց 50 մլն դոլարի ստորադաս փոխառություն:
- 2018 թվականին Ասիական Զարգացման Բանկը (ADB) Բանկի բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով 30 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարեց:
- 2019թ. Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդ ընկերությանը լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում «Ամերիաբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը համալրվեց 46,720,000 (քառասունվեց միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամով:
- 2020թ. փետրվարին Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդ ընկերությանը լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում «Ամերիաբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը համալրվեց 39,680,000 (երեսունինը միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամով:
- 2020թ. մարտին Ամերիա Գրուպ /Սի-Ուայ/ Լիմիթեդ ընկերությանը պատկանող Բանկի թվով 8788 հատ, 2.812.160.000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով և Բանկի կանոնադրական կապիտալի շուրջ 7,52 տոկոսը կազմող բաժնետոմսերը փոխանցվել են «Աֆեյան Ֆաունդեյշն ֆոր Արմենիա» Ինկ. /Afeyan Foundation for Armenia Inc./ ոչ առևտրային հիմնադրամին, ինչ արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալում Ամերիա Գրուպ /Սի-Ուայ/ Լիմիթեդ ընկերության մասնակցությունը նվազել է:

- 2020թ. սեպտեմբերի 8-ին «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթեդ»-ը անվանափոխվեց «ԻՄԱՍՏ ԳՐՈՒՊ (Սի-Ուայ) Լիմիթեդ»-ի:
- 2021թ. մարտին Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդ ընկերությանը լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում «Ամերիաբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը համալրվեց 40,000,000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամով:

### 2.1.3 Բանկի կանոնադրական կապիտալը

2020թ.-ի չորրորդ եռամսյակի դրությամբ Բանկի կանոնադրական կապիտալը կազմել է ավելի քան 37 (երեսունյոթ) միլիարդ ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 116,834 (հարյուր տասնվեց հազար ութ հարյուր երեսունչորս) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 320,000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի բաժնետերերն են ԻՄԱՍՏ ԳՐՈՒՊ (Սի-Ուայ) Լիմիթեդը, Աֆեյան Ֆաունդեյշն ֆոր Արմենիա Ինկ. ոչ առևտրային հիմնադրամը, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը, Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդը և Ասիական Զարգացման Բանկը, որոնց պատկանում են Բանկի բաժնետոմսերի համապատասխանաբար 48.90%-ը, 7.51%-ը, 17.74%-ը, 11.92%-ը և 13.93%-ը:

### 2.1.4 Բանկի մասնաճյուղերը

Բանկն ունի 20 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Մասնաճյուղերի հասցեները մանրամասն ներկայացված են **Ազդագրի 4.3.1.5 մասում**:

### 2.1.5 Բանկի խմբի կառուցվածքը

Բանկի բաժնետեր է հանդիսանում «ԻՄԱՍՏ ԳՐՈՒՊ (Սի-Ուայ) Լիմիթեդ» ընկերությունը, վերջինս հանդիսանում է նաև հետևյալ ընկերությունների բաժնետեր՝

- ԱՄԵՐԻԱ ՓԲԸ
- ՓՐՈՓԵՐԹԻ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ ՔԱՄՓՆԻ ՓԲԸ

### 2.1.6 Բանկի կազմակերպչական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը ներկայացված է **Հավելված 4-ում**:

### 2.1.7 **Բիզնեսի նկարագիրը**

Բանկը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 1992թ սեպտեմբերի 8-ին և դեկտեմբերի 8-ին ստացել է թիվ 50 բանկային գործունեության լիցենզիան: 2020 թվականի չորրորդ եռամսյակի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 109.7 մլրդ ՀՀ դրամ:

2020թ-ի չորրորդ եռամսյակի արդյունքներով Բանկի ընդհանուր ակտիվները կազմել են 1,090.6 մլրդ ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 980.9 մլրդ ՀՀ դրամ: Լրացուցիչ տեղեկությունները մատչելի են Բանկի ինտերնետային կայքում:

### 2.1.8 **Ակտիվների որակը**

#### 2.1.8.1 ***Ակտիվների համարժեքությունը***

2020 թվականի չորրորդ եռամսյակի արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 9 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունն կապիտալի միջին մեծությանը)՝ 8.51%: Լևերիջի գործակիցը (ընդհանուր կապիտալի միջին մեծության հարաբերությունն ընդհանուր ակտիվների միջին մեծությանը) կազմել է 11.11%:

#### 2.1.8.2 ***Ակտիվների որակը***

2020 թ.-ի չորրորդ եռամսյակի դրությամբ Բանկի համախառն վարկային պորտֆելը կազմել է 719,5 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Բանկի վարկային պորտֆելում չաշխատող ակտիվների մասնաբաժինը կազմել է 4.2% (ըստ 3րդ փուլի դասակարգման):

#### 2.1.8.3 ***Ակտիվների իրացվելիությունը***

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար: Ստորև ներկայացվում են ՀՀ ԿԲ իրացվելիության նորմատիվները՝

| Նորմատիվներ | ՀՀ ԿԲ-ի սահմանած թույլատրելի մեծությունը | Փաստացի մեծություն 2020 | Փաստացի մեծություն 2019 | Փաստացի մեծություն 2018 | Փաստացի մեծություն 2017 |
|---|---|---|---|---|---|
| $Ն_2^{1*}$ | 15% | 22.53% | 27.85% | 21.90% | 29.74% |
| $Ն_2^{2**}$ | 60% | 85.32% | 94.46% | 78.78% | 93,35% |

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն

## 2.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր

### 2.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի համալիր նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ Ազդագրի 4.2 մասում:

**Աճող մրցակցություն:** Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը, հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

**Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ:** Չնայած Բանկը ներդրել է բավականին ճկուն և արդյունավետ գնագոյացման համակարգ իր կողմից առաջարկվող ծառայությունների համար՝ պետք է նկատի ունենալ, որ, կախված Թողարկողի կողմից ծառայությունների գնային առաձգականության և եկամուտների առաձգականության բնութագրիչներից, Բանկի հասույթը կարող է նվազել ՀՀ-ում սպասվելիք գնաճի պայմաններում:

**Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ:** Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Հնարավոր է, որ հաջորդող տարիների ընթացքում Բազել-3 ստանդարտների ներդրման արդյունքում ռիսկի գնահատման որոշակի սկզբունքներ կիրառվեն, որոնք միտված են լինելու Բանկի ռիսկերի կառավարման համակարգի ամրապնդմանը:

**Աշխարհաքաղաքական ռիսկեր:** Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, որն իր հերթին կարող է մեծացնել չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, ավելացնել պահուստավորման ծախսերը ու իջեցնել Բանկի շահութաբերությունը:

**Վարկային ռիսկ**: Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկի չաշխատող վարկերի ու ակտիվների վերաբերյալ

մանրամասն տեղեկություն ներայացված է Ազդագրին կից ֆինանսական հաշվետվություններում:

**Շուկայական ռիսկ:** Շուկայական գործոնների ազդեցության ներքո Բանկի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը: Այս ռիսկի բացասական ազդեցությունը Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա նվազեցնելու համար Բանկի Ռիսկերի կառավարման կենտրոնը սահմանել է Բանկի ռիսկի ախորժակի մեծությունը, մշակել է շուկայական ռիսկի սահմանաչափեր, դրանց հետևելու և պահպանելու վերահսկման արդյունավետ մեխանիզմներ:

**Արտարժութային ռիսկ:** Թողարկողն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժութային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Այնուամենայնիվ, ՀՀ դրամի փոխարժեքի հնարավոր էական արժեզրկումը հիմնական արժույթների նկատմամբ կարող է բացասական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա:

**Տոկոսադրույքի ռիսկ**: Ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը մշտապես կրում է շուկայական տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների ռիսկը:

**Իրացվելիության ռիսկ**: Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Թողարկողն այս ռիսկը մեղմելու համար կիրառում է մի քանի գործիքներ, ինչպիսիք են՝ իրացվելի միջոցների (կանխիկ, պարտատոմսեր և այլ արագ իրացվելի ակտիվներ) բավարար մակարդակի մշտական պահպանումը Բանկում և ֆինանսական գործընկերների հետ առկա վարկային գծերի մատչելիության ապահովումը:

### 2.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համալիր նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ **Ազդագրի 3.1** մասում:

**Տոկոսադրույքի ռիսկ:** Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության մակարդակի վերանայման՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

**Շուկայական ռիսկ:** Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ցուցանիշների փոփոխությունների և/կամ նման փոփոխությունների սպասումների հետ կապված:

**Վարկային/դեֆոլտի ռիսկ:** Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

**Իրացվելիության ռիսկ:** Թողարկողը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

**Վարկանիշի փոփոխության ռիսկ:** Այլ հավասար պայմաններում պարտատոմսի գինը սովորաբար ուղղակի կախվածության մեջ է գտնվում Թողարկողի և/կամ հենց պարտատոմսի վարկային ռիսկը նկարագրող վարկանիշից/վարկանիշներից (S&P, Moody's, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում սովորաբար պարտատոմսի գինն ընկնում է:

## 2.3 Բանկի զարգացման միտումները

### 2.3.1 Զարգացման միտումները

Կանխատեսվող ժամանակահատվածում Բանկի գործունեությունը նպատակաուղղվելու է որակապես նոր ծառայությունների տրամադրմանը, ակտիվային գործառնությունների հուսալիության բարձրացմանը և դրանով իսկ ներդրողների և ավանդատուների շահերի առավելագույնս պաշտպանմանը: Զգալիորեն կավելացվի մանրածախ բանկային ծառայությունների (ներառյալ ՓՄՁ-ներին տրամադրվող) տեսակարար կշիռը Բանկի գործունեությունում: Բանկը նախատեսում է էականորեն ավելացնել մանրածախ հաճախորդների քանակը, ինչի համար զգալի ներդրումներ է պատրաստվում կատարել նաև թվային բանկային ծառայությունների զարգացման ուղղությամբ:

Միաժամանակ, Բանկը կշարունակի հատուկ ուշադրություն ցուցաբերել մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և հաճախորդների աշխարհագրության ընդլայնմանը: Բանկային ծառայությունների հետագա

թվայնացման, ինչպես նաև ներկա համաճարակի տնտեսական ազդեցության մեղման միջոցառումների արդյունավետ իրականացման հարցերում Բանկն ակտիվ համագործակցում է պետական մարմինների հետ ու ակնկալում փոխշահավետ համագործակցություն ի շահ տնտեսական կայուն զարգացման:

## 2.4 Աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ

Բանկի 2016-2018 թթ. ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ի կողմից: 2019թ.-ի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ կողմից:

## 2.5 Ղեկավարությունը և բաժնետերերը

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը՝ Բանկի կառավարման բարձրագույն մարմինը,
- Տնօրենների Խորհուրդ,
- Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ
- Տնօրինությունը և Գլխավոր տնօրենը - Տնօրինության Նախագահը:

### 2.5.1 **Բանկի բաժնետերերը**

Բանկի բաժնետերերն են՝

- ԻՄԱՍՏ ԳՐՈՒՊ (Սի-Ուայ) - 48.90%
- Աֆեյան Ֆաունդեյշն ֆոր Արմենիա Ինկ. – 7.51%
- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ - 17.74%
- Ասիական Զարգացման Բանկ – 13.93%
- Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդ – 11.92%

### 2.5.2 **Բանկի խորհուրդը**

Սույն Ծրագրային Ազդագիրը կազմելու պահին Բանկի Խորհուրդը բաղկացած էր 7 անդամներից՝ նախագահ և վեց անդամ:

| Անուն ազգանուն | Զբաղեցրած պաշտոն | Փորձառությունը |
|---|---|---|
| **Անդրեյ Մկրտչյան** | Խորհրդի նախագահ | Ավելի քան 25 տարի |
| **Ռիչարդ Օգդոն** | Խորհրդի անկախ անդամ | Ավելի քան 30 տարի |
| **Տիգրան Դավթյան** | Խորհրդի անկախ անդամ | Ավելի քան 25 տարի |
| **Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի** | Խորհրդի անկախ անդամ | Ավելի քան 25 տարի |
| **Լինդսի Ֆորբս** | Խորհրդի անդամ | Ավելի քան 35 տարի |
| **Կախաբեր Կիկնավելիձե** | Խորհրդի անկախ անդամ | Մոտ 25 տարի |
| **Ֆիլիպ Լինչ** | Խորհրդի անկախ անդամ | Ավելի քան 30 տարի |

### 2.5.3 Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ

Տնօրենների խորհրդին կից կոմիտեների գործունեության հիմնական նպատակն է օժանդակել Խորհրդի աշխատանքներին և օգնել խորհրդին ընդունել հիմնավորված որոշումներ: Կոմիտեների գործունեությունը որևէ կերպ չի սահմանափակում Տնօրենների խորհրդի իրավասությունները ու պարտականությունները:

| | |
|---|---|
| **Աուդիտի կոմիտե** | Կոմիտեի հիմնական նպատակն է ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը, բարձրացնել բանկում ֆինանսական հաշվետվողականության, արտաքին աուդիտի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության արդյունավետությունը: |
| **Վարձատրության կոմիտե** | Կոմիտեի նպատակն է աջակցել բանկում վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորմանը, ապահովել նշված համակարգի որակի գնահատումը, իրականացնել վարձատրության կիրառվող մեխանիզմների մոնիտորինգ՝ լավագույն որակավորում ունեցող մասնագետներին ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորություն բացառելու նպատակով: |
| **Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե** | Կոմիտեի նպատակը բանկի Տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների և ղեկավարության համար արհեստավարժ, հմուտ, փորձառու, առաքինի մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, ըստ անհրաժեշտության նրանց համապատասխան պաշտոններում ներգրավումը, այդ թվում՝ փոխարինելիության ապահովումն ու կադրային |

| | |
|---|---|
| | բարելավումը, ինչպես նաև կիրառելի օրենսդրական կարգավորմանը համապատասխան՝ կորպորատիվ կառավարման ոլորտում միջազգային լավագույն փորձի ներդնումը: |
| **Ռիսկերի կոմիտե** | Կոմիտեի նպատակն է աջակցել Տնօրենների խորհրդին վարկային, շուկայական, գործառնական, ռազմավարական, իրացվելիության և այլ էական ռիսկերի կառավարման/գնահատման, ռիսկի նկատմամբ ունեցած դիրքի և Բանկի կապիտալի համարժեքության բնագավառներում վերահսկողական գործառույթներ իրականացնելիս: |

Տնօրենների խորհրդին կից կոմիտեների կառուցվածքը ներկայացված է 4.7.3.2 կետով:

### 2.5.4 **Բանկի տնօրինությունը**

Բանկի Տնօրինությունը բաղկացած է 7 անդամից:

| Անդամներ | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|
| Արտակ Հանեսյան | Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն |
| Գևորգ Թառումյան | Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, Ֆինանսական գծով տնօրեն |
| Անդրանիկ Բարսեղյան | Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն |
| Գագիկ Սահակյան | Տնօրինության անդամ, Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն |
| Արման Բարսեղյան | Տնօրինության անդամ, Մանրածախ բանկինգի տնօրեն |
| Արմինե Ղազարյան | Տնօրինության անդամ, Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն |
| Գոհար Խաչատրյան | Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ |

Բանկի աշխատակիցների քանակը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,109 է (2019՝ 1050):

## 2.6 Պարտատոմսերի հիմնական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն, իսկ տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի դեպքում՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դեպքում՝ ԱՄՆ դոլարով:

Թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի դիմաց կատարվում են ՀՀ դրամով, իսկ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց՝ ԱՄՆ դոլարով:

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է առավելագույնը 25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ և 70,000,000 (յոթանասուն միլիոն) ԱՄՆ դոլար:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը  ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տարեկան արժեկտրոնի մեծությունը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

## 2.7 Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Ընդ որում միևնույն

սերիայի շրջանակներում թողարկված պարտատոմսերը կարող են տեղաբաշխվել ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման:

Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

## 2.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

## 2.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ստորև ներկայացվում են Բանկի 2018-2020 թվականների ամփոփ ֆինանսական տվյալները՝

| Ցուցանիշի անվանումը (հազար ՀՀ դրամ) | 2020 (աուդիտ չանցած) | 2019 (աուդիտ անցած) | 2018 (աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| **Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո** | 9,000,204 | 12,114,968 | 10,502,444 |
| **Սեփական կապիտալի միջին մեծություն** | 105,807,653 | 94,762,163 | 83,101,233 |
| **Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)*** | **8.51%** | **12.78%** | **12.64%** |
| | | | |
| **Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո** | 9,000,204 | 12,114,968 | 10,502,444 |
| **Ընդհանուր ակտիվների միջին մեծություն** | 952,690,092 | 829,429,318 | 704,249,345 |
| **Ակտիվների շահութաբերություն (ROA)*** | **0.94%** | **1.46%** | **1.49%** |
| | | | |
| **Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո** | 9,000,204 | 12,114,968 | 10,502,444 |

| Ցուցանիշի անվանումը (հազար ՀՀ դրամ) | 2020 (աուդիտ չանցած) | 2019 (աուդիտ անցած) | 2018 (աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| **Գործառնական եկամուտ** | 44,804,201 | 39,948,808 | 36,782,298 |
| **Զուտ շահույթի մարժա (NPM)** | **20.09%** | **30.33%** | **28.55%** |
| | | | |
| **Գործառնական եկամուտ** | 44,804,201 | 39,948,808 | 36,782,298 |
| **Ընդհանուր ակտիվների միջին մեծություն** | 952,690,092 | 829,429,318 | 704,249,345 |
| **Ակտիվների օգտագործման գործակից (AU)*** | **4.70%** | **4.82%** | **5.22%** |
| | | | |
| **Ընդհանուր ակտիվների միջին մեծություն** | 952,690,092 | 829,429,318 | 704,249,345 |
| **Սեփական կապիտալի միջին մեծություն** | 105,807,653 | 94,762,163 | 83,101,233 |
| **Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)** | **9.00** | **8.75** | **8.47** |
| | | | |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | 34,980,168 | 30,998,614 | 27,331,071 |
| **Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն** | 734,786,083 | 629,571,540 | 564,274,089 |
| **Զուտ տոկոսային մարժա (NIM)*** | **4.76%** | **4.92%** | **4.84%** |
| | | | |
| **Տոկոսային եկամուտ** | 66,544,857 | 60,360,766 | 53,640,166 |
| **Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն** | 734,786,083 | 629,571,540 | 564,274,089 |
| **Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն*** | **9.06%** | **9.59%** | **9.51%** |
| | | | |
| **Տոկոսային ծախսեր** | 31,564,689 | 29,362,152 | 26,309,095 |
| **Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր** | 826,759,999 | 720,297,205 | 613,569,893 |
| **Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր*** | **3.82%** | **4.08%** | **4.29%** |
| | | | |
| **Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո** | 9,000,204 | 12,114,968 | 10,502,444 |
| **Բաժնետոմսերի միջին կշռված թիվը** | 116,809 | 116,681 | 113,306 |
| **Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)*** | **77.05** | **103.83** | **92.69** |
| | | | |
| **Սպրեդ*** | **5.24%** | **5.51%** | **5.22%** |

* Աղյուսակում ներկայացված միջին մեծությունները հաշվարկված են աուդիտ չանցած եռամսյակային ցուցանիշների հիման վրա:

Ամփոփ Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են **Հավելված 3**-ում:

# ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

# ՄԱՍ 3 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 3.1 Ռիսկային գործոններ

*Այն ռիսկային գործոնները, որոնք անհրաժեշտ են առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի շուկայական ռիսկը գնահատելու համար:*

**Տոկոսադրույքի ռիսկ:** Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության մակարդակի վերանայման, ընդ որում ընդունված է համարել, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

**Շուկայական ռիսկ:** Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ցուցանիշների փոփոխությունների և/կամ նման փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացքում կարող են իջնել և/կամ բարձրանալ: Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի, որ, անկախ շուկայական պայմանների փոփոխություններից և սպասումներից, Թողարկողի կողմից վճարվող անվանական արժեկտրոնների վճարման և պարտատոմսի անվանական գումարի մարման մեծությունները, արտահայտված թողարկման արժույթով, չեն փոփոխվում:

**Վերաներդրման ռիսկ:** Այն բոլոր ներդրողները, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն ձեռք բերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռք բերման/գնման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավարությունների հավանական բացակայությամբ: Հավանական է, որ վերաներդրման ռիսկը ներդրումային որոշում կայացնելու գործընթացում էական գործոն չի

հանդիսանա ընթացիկ կամ կարճաժամկետ (մեկ արժեկտրոնային ժամանակամիջոցից ոչ ավել) ներդրումային հորիզոն ունեցող ներդրողների համար:

**Վարկային/դեֆոլտի ռիսկ:** Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

**Իրացվելիության ռիսկ:** Թողարկողը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով (թողարկողի վարկանիշ, պարբերական արժեկտրոնային վճարումներ, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և առևտրին թույլատվություն կարգավորվող շուկայում, ինչպես նաև շուկա ստեղծող ընկերության կամ ընկերությունների հետ համապատասխան պայմանագրի կնքման բանակցությունների վարում): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ելնելով տնտեսական միջավայրի բացասական փոփոխություններից և/կամ ֆինանսական շուկայի անբարենպաստ միտումներից ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

**Արտարժութային ռիսկ:** Թողարկվող պարտատոմսերն արտահայտված են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, և հետևապես նեդրումները և ներդրումների ետ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստիպված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի:

**Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ:** ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել ավելի ցածր (գնաճի չափով) անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից:

**Վարկանիշի փոփոխության ռիսկ:** Այլ հավասար պայմաններում պարտատոմսի գինը սովորաբար ուղիղ կախվածության մեջ է գտնվում Թողարկողի և/կամ հենց պարտատոմսի վարկային ռիսկը նկարագրող վարկանիշից/վարկանիշներից (S&P, Moody's, Fitch): Վարկանիշի իջեցման արդյունքում սովորաբար պարտատոմսի գինն ընկնում է կամ նույնն է, որ պարտատոմսի եկամտաբերության մեծության նկատմամբ սպասումները բարձրանում են:

## 3.2 Հիմնական տեղեկատվություն

*Առաջարկի նպատակը և, հնարավորության դեպքում, հնարավոր ներգրավվող զուտ գումարների մեծությունը՝ բաժանված ըստ օգտագործման նախատեսվող ուղղությունների: Այդ ուղղությունները պետք է դասակարգել ըստ առաջնահերթության: Այստեղ զուտ գումար ասելով հասկանում ենք հավաքագրված համախառն գումարի և այդ գումարները հավաքագրելու համար կատարված ծախսերի տարբերությունը:*

Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվելու են միջնաժամկետ վարկերի տրամադրմանը, սակայն միևնույն ժամանակ Բանկն այս թողարկմամբ նպատակ ունի հասնելու հաշվեկշռի պասիվային մասի կառավարման արդյունավետության բարձրացմանը, այլ հավասար պայմաններում ավելի քիչ ծախսատար միջոցների ներգրավմանը, հնարավոր ավանդատուների բազայի ընդլայնմանը և տարատեսականացմանը (դիվերսիֆիկացիա), նախքան Բանկի առաջնային հանրային տեղաբաշխումը (IPO) հնարավոր ներդրողներին Բանկի ներդրումային գործիքների հետ ծանոթացմանը, Բանկի վարկային ռիսկի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը հնարավոր ներդրողների լայն շրջանակում:

Բանկի կողմից երկար տարիներ շարունակ իրականացվել է ֆինանսավորման աղբյուրների տարատեսականացման (դիվերսիֆիկացիա) գործուն քաղաքականություն, որի նպատակն է եղել բանկի համար ապահովել մեկ ֆինանսավորողի կամ մի քանի ֆինանսավորողների խմբի ռիսկի նվազեցումը, հաշվեկշռի երկարաժամկետ պարտավորությունների մասի ֆինանսավորման կայուն ենթակառուցվածքների ու հարմոնիկ գործարար հարաբերությունների ստեղծումը:

### 3.2.1 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

*Ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, ընդ որում, եթե ծրագրային ազդագրի գրանցման պահին թողարկողը դեռևս չի որոշել թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, նշվում է, թե հասարակությունը ինչպես և երբ կարող է տեղեկություններ ստանալ այդ մասին.*

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

## 3.3 Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

### 3.3.1 Արժեթղթերի տեսակը և դասը

*Արժեթղթերի տեսակը և դասը, ներառյալ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր (առկայության դեպքում)*

Թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

### 3.3.2 Երկիրը

*Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել են փվյալ արժեթղթերը*

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

### 3.3.3 Արժեթղթերի ձևը

*Արժեթղթերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային արժեթղթերի դեպքում պետք է նշել այն անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային արժեթղթերի ռեեստրը*

Թողարկված պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1 5-րդ հարկ, հեռ.՝ (+374) 60 615555)՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) համապատասխան կանոնների, ընթացակարգերի:

### 3.3.4 Արժեթղթի անվանական արժեքը և քանակը

*Արժեթղթի անվանական արժեքը և քանակը (առկայության դեպքում)*

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով թողարկումների դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կհաշվարկվի Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

### 3.3.5 **Թողարկման արժույթը**

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է և ԱՄՆ դոլարը:

### 3.3.6 **Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն**

***Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (սփորադասությունը): Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչ պայմանների դեպքում է հնարավոր այդ արժեթղթերի վերադասակարգումը***

Համաձայն ՀՀ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին օրենքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.
- երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.
- երրորդ՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով:
- չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.

- հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
- վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.
- յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Պարտատոմսերի վերադասակարգում չի նախատեսվում:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ Պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից), ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով՝

- եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը տասնվեց միլիոն ՀՀ դրամ է.
- եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկայի ավանդ, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը յոթ միլիոն ՀՀ դրամ է.
- եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային բանկային ավանդի գումարը՝ մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամով.
- եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդի գումարը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները:

Ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ): Հիմնադրամի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010 Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, հեռախոսահամարը՝ (37410) 583514, ինտերնետային կայքը՝ www.adgf.am:

Երաշխավորված ավանդների հատուցման դեպք (այսուհետ՝ հատուցման դեպք) է համարվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին անվճարունակ ճանաչելը և ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը հաստատելը կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկին սնանկ ճանաչելը (այսուհետ՝ բոլոր դեպքերի համար՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ՝ Պարտատոմսերում ներդրումները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ ներդրողի բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում ներդրողի ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանված կարգով:

Եթե ներդրողն անվճարունակ բանկում ունի առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր է, ապա երաշխավորվում է ներդրողի առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում ներդրողի մասնաբաժնի հանրագումարը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

Եթե ներդողն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի

ներդրողի բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ներդրողն ուշացրել է պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի: Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ներդրողի բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:Ներդրողի բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- Ներդրողը հանդիսանում է տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- Ներդրողը հանդիսանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- Ներդրողը, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել է ավանդի՝ իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- Ներդրողի ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Ներդրողը հակառակը չի ապացուցել,
- Ներդրողի ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- Ներդրողի ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին:

Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել ներդրողի բանկային ավանդների հատուցման գործընթացը ստորև նշված ժամկետներում.

- ✓ հատուցման դեպքի օրվան հաջորդող 15-րդ աշխատանքային օրվանից սկսած, եթե դեպքը տեղի է ունեցել 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը,
- ✓ հատուցման դեպքի օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից սկսած, եթե դեպքը տեղի է ունեցել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը,
- ✓ հատուցման դեպքի օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվանից սկսած, եթե դեպքը տեղի է ունեցել 2023 թվականի հունվարի 1-ից հետո:

Ներդրողը կարող է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում ներդրողի կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ներդրողի երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

### 3.3.7 Արժեթղթերից բխող իրավունքները

***Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը,***

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվել են պարտատոմսերից բխող հետևյալ իրավունքները՝

1) ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից,
2) Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող

իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,

3) Գրավադրել պարտատոմսերը օրենսդրությամբ սահմանված կարգով,

4) Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ տեքստում՝ Օրենք) սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր,

   - ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները, դրանք ՀՀ ԿԲ և ֆին. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
   - թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

Միաժամանակ, պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

### 3.3.8 Անվանական տոկոսադրույքը և վճարման պայմանները

***Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները, մասնավորապես, տոկոսների վճարման պարբերականությունը, կոնկրետ օրերը (օրերի հաշվարկման կարգը), տոկոսի սպացման հայտերի ներկայացման թույլատրելի ժամանակահատվածը և մայր գումարի վերադարձման կարգը: Եթե տոկոսադրույքը ֆիքսված չէ (փոփոխուն է), ապա՝ ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է սրանալ այդ ցուցանիշի (դրա փոփոխության) մասին տեղեկատվություն: Այս դեպքում պետք է նաև նկարագրել, թե շուկայական ինչպիսի պայմաններ կարող են ազդել այդ ցուցանիշների վրա, ինչպես նաև այն մասին, թե ով է իրականացնելու այդ փոփոխուն տոկոսադրույքի հաշվարկը***

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի

Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

Արժեկտրոնների հաշվարկման օրերը ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրը Դեպոզիտարիայի աշխատանքային օրվա ավարտի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի հիման վրա պատրաստում է տեղեկանք պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր) վերաբերյալ՝ ներառյալ արժեկտրոնների գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0,1 ՀՀ դրամ և 0,01 ԱՄՆ դոլար ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Թողարկողը արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային

հաշվեհամարների ճիշտ չլինելու դեպքում Բանկը հարցում է ուղարկում Դեպոզիտարիա բանկային հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու համար: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կփոխանցվի/կսառեցվի Բանկում՝ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև՝ Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերման ու գումարի փոխանցման ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը մուծելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
- C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
    - DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];
    - DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];
    - D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;
    - D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;
    - D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

### 3.3.9 Արժեթղթերի մարման ժամկետը

*Արժեթղթերի մարման ժամկետը: Մասնակի մարումների դեպքում, դրա նկարագիրը: Վաղաժամկետ մարման հնարավորության դեպքում (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ), դրա ժամկետները և պայմանները:*

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրը՝ Դեպոզիտարիայի աշխատանքային օրվա ավարտի դրությամբ: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/ անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կփոխանցվի/կսառեցվի Բանկում՝ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև՝ Բանկը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերման ու գումարի փոխանցման ուղղությամբ: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը մուծելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ՀՀ դրամային կամ ԱՄՆ դոլարով հաշիվը չի գտնվում հաշվարկային բանկում), ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համապատասխան Բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների:

Պարտատոմսերի մասնակի մարումներ կամ վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

### 3.3.10 Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

*Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը: Համառոտ նկարագրել նաև դրա հաշվարկման մեթոդը:*

Արժեթղթերի եկամտաբերությունը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ սույն **Ազդագրի 3.4.3.1 մասում** բերված բանաձևի համաձայն:

### 3.3.11 Նոր թողարկման մասին տեղեկատվություն

*Եթե առաջարկվող արժեթղթերը նոր թողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը այդ նոր թողարկման մասին:*

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Բանկի Խորհրդի 2021թ փետրվարի 5-ի արտահերթ նիստում (Որոշում թիվ 01-1/21/01): Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Բանկի Տնօրինությունը առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացնել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատված են համարվում համաձայն պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ կայացված Բանկի Տնօրինության որոշման (որոշումների), այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում օրենսդրությանը և Բանկի Խորհրդի թիվ որոշման պայմաններին:

### 3.3.12 Շրջանառության սահմանափակումներ

*Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը*

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր, բացառություն են կազմում.

- ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները. դրանք ՀՀ ԿԲ և ֆին. շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:

### 3.3.13 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

*Արժեթղթերից սրացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը*

**Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքի, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և /կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:**

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտն ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

### 3.3.13.1 *Շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը*

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի: ՀՀ Հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

*Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը*

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

*Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը*

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձիք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամուտի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից:

### 3.3.13.2 *Եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը*

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե Հայաստանի Հանրապետությունում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

*Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում*

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների յուրաքանչյուր վճարման դեպքում:

2020թ.-ի մարտի 1-ից ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից, բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

*Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում*

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

## 3.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

### 3.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

***Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար***

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (աճուրդ կամ ուղղակի վաճառք), ինչպես նաև տեղաբաշխումն սկսելու օրը ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Տնօրինության որոշմամբ է սահմանվում նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով կամ ֆոնդային բորսայից դուրս:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է համաձայն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

*Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով, ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա 16:30-ը: Եթե համապատասխան գումարները վճարվում են պարտատոմսերի ձեռքբերման օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված հատուկ այդ նպատակով բացված բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ բանակային հաշվի վրա մնալը՝ մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:*

*Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝*

$V = P \times Q$ *, որտեղ՝*

- *V-ն պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:*
- *P-ն պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 3.4.3.1 բաժնի համաձայն:*
- *Q-ն պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:*

#### 3.4.1.1 ***Առաջարկի ընդհանուր ծավալը***

***Թողարկման և (կամ) առաջարկի ընդհանուր ծավալը: Եթե թողարկման կամ առաջարկի ծավալը դեռևս որոշված չէ, նկարագրել, թե ինչ ժամկետներում կհրապարակվեն վերջնական ծավալի մասին տեղեկությունները, ինչպես նաև ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները***

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ և 70,000,000 (յոթանասուն միլիոն) ԱՄՆ դոլար:

Միևնույն սերիայի շրջանակներում թողարկված պարտատոմսերը կարող են տեղաբաշխվել ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով՝ համաձայն Բանկի Տնօրինության որոշման:

Մաս-մաս տեղաբաշխման դեպքում թողարկման հերթական վերաբացված ծավալն ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է տվյալ սերիայի տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծավալը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

#### 3.4.1.2 *Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը*

***Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխությունները)***

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային Ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 աշխատանքային օրը՝ Ծրագրային Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման

դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում՝ Օրենք) համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

#### 3.4.1.3 ***Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը***

***Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրությունը, այսինքն, նկարագրել, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի այն անձը, որը որոշել է ընդունել առաջարկը և ներդրում կատարել արժեթղթերում***

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում ներդրողները պետք է առաջնորդվեն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրում կատարելու համար պետք է կատարել հետևյալ քայլերը.

*Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/երը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Բանկ ներկայացումից հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Բանկում բացված հատուկ հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար՝ Ազդագրի 3.4.1 մասում նշված անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:*

*Թողարկման նպատակով Բանկում բացված հատուկ հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:*

*Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկման նպատակով բացված հատուկ հաշվեհամարից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ--հանձնարարականում նշված դրամական միջոցները:*

*Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված հատուկ հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ--հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Բանկին, եթե այն առաքվել է Բանկի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:*

*Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝*

- ***Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ», Ներդրումային բանկային ծառայություն, Կապիտալի Շուկաների Բաժին,*

  ***կամ***

- ***Էլեկտրոնային փոստ**: **CapitalMarkets@ameriabank.am***

  ***կամ***

- *այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ և հաճախորդի մենեջերների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*

- ***կամ***

  *ինտերնետ բանկինգ համակարգը:*

*Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի **Հավելված 1**-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի **Հավելված 2**-ում:*

*Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:*

*Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:*

*Հայտում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը» դաշտում ներդրողները պետք է նշեն «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:*

#### 3.4.1.4 ***Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը***

***Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը, ինչպես նաև այդ պարագայում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եղանակը և ձևը***

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է հայտ-հանձնարարականը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված հայտ-հանձնարարականների դեպքում, եթե հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում գումարների վերադարձն իրականացվում է համաձայն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

### 3.4.1.5 *Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը*

***Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայտը կարելի է հետ կանչել՝ նախատեսելով, որ ներդրողները կարող են հետ ստանալ վճարված գումարները***

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

### 3.4.1.6 *Նվազագույն և առավելագույն գումարները*

***Այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման հայտերում: Այդ սահմանաչափերը կարող են նշվել կամ որպես արժեթղթերի նվազագույն և առավելագույն թույլատրելի քանակներ, կամ որպես ձեռքբերման նվազագույն և առավելագույն թույլատրելի համախառն գումարներ***

Թողարկման ընթացքում կարող են լինել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ, եթե նման որոշում կայացվի Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

### 3.4.1.7 *Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը*

***Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը***

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվեհամարին: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո

ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձիք պետք է նախապես կատարեն դրամական միջոցներ դեպոնացում՝ համաձայն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

### 3.4.1.8 *Առաջարկի արդյունքների հրապարակումը*

*Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը*

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

### 3.4.1.9 *Նախապատվության իրավունքը*

*Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը*

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը Թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման հայտերի բավարարման հերթականությունը կախված է տեղաբաշխման համար ընտրված աճուրդի եղանակից և ձևից և կարգավորվում է Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

### 3.4.2 Տեղաբաշխման պլանը

#### 3.4.2.1 *Ներդրողների խմբերը*

*Ներդրողների որ խմբերին է ուղղված առաջարկը (հանրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն)*

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև որակավորված ներդրողներին: Սույն առաջարկի ներքո պարտատոմս ձեռքբերող բոլոր անձիք, բացառությամբ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության պահանջները» Կանոնակարգ 4/07-ի 14-րդ կետով նշված անձանց, ինչպես նաև ԿԲ կողմից որպես որակավորված ներդրող գրանցված անձանց, Բանկի կողմից դասակարգվում են որպես «ոչ պրոֆեսիոնալ հաճախորդներ»:

#### 3.4.2.2 *Հայտերի բավարարման մասին տեղեկացումը*

*Ինչպես են ներդրողները տեղեկացվում իրենց հայտերի բավարարման մասին*

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում ներդրողները Թողարկողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկացվում են Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով սահմանված ձևով և կարգով:

### 3.4.3 Առաջարկի գինը

#### 3.4.3.1 *Արժեթղթերի գինը*

*Այն գինը, որով արժեթղթերն առաջարկվելու են: Եթե գինը հայտնի չէ, ապա պետք է նշել առաջարկի առավելագույն գինը և վերջնական գնի որոշման մեթոդը կամ պայմանները, ինչպես նաև առաջարկի գնի բացահայտման գործընթացի նկարագրությունը: Այստեղ պետք է ներկայացնել նաև այն ծախսերը և հարկերը, որոնք գանձվելու են գնորդից:*

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

### 3.4.4 Տեղաբաշխումը

#### 3.4.4.1 *Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները*

*Այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել երաշխավորված տեղաբաշխում (անդերռայթինգ)*

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն:

### 3.4.4.2 *Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները*

*Այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել չերաշխավորված տեղաբաշխում, այդ թվում՝ լավագույն ջանքերի սկզբունքով տեղաբաշխում*

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն լավագույն ջանքերի գործադրմամբ, չերաշխավորված եղանակով տեղաբաշխելու է իր կողմից թողարկվող անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսերը մինչև 25,000,000,000 (քսանհինգ միլիարդ) ՀՀ դրամ և 70,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար ծավալներով:

### 3.4.4.3 *Տեղաբաշխման պայմանները*

*Երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները և տեղաբաշխման համար գանձվող միջնորդավճարները: Եթե երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը թողարկման ոչ լրիվ ծավալն է ընդգրկում, ապա պետք է նշել թողարկման այն մասը, որը չի ծածկում այդ պայմանագիրը: Այստեղ պետք է նշել նաև յուրաքանչյուր տեղաբաշխողի մասը տեղաբաշխման ընդհանուր ծավալում*

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն է՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

### 3.4.4.4 *Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը*

*Երբ է կնքվել կամ երբ է նախատեսվում կնքել երաշխավորված տեղաբաշխման (անդերռայթինգի) պայմանագիրը,*

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

### 3.4.4.5 *Վճարում ընդունող բանկերը և պահառուները*

*Այն բանկերի անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է վճարում կատարել արժեթղթերի դիմաց, ինչպես նաև այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է արժեթղթերի հաշիվ բացել*

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխում իրականացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2) բացված հատուկ հաշվեհամարին:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում ներդրողներն արժեթղթերի դիմաց վճարումներ կատարում են գումարների նախնական դեպոնացմամբ: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է

Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ (հեռ.՝ (+374) 60 615555):

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է Ամերիաբանկ ՓԲԸ:

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ:

## 3.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

### 3.5.1 Առևտրին թույտվությունը

*Արդյո՞ք առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում (նշել նաև շուկայի անվանումները) առևտրին թույլտվություն: Այստեղ պետք է նշել, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Եթե հնարավոր է, պետք է նաև նշել առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը*

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Բանկը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:

### 3.5.2 Շուկաները

*Այն շուկաների անվանումները (այնքանով, որքանով դրանք հայտնի են թողարկողին), որտեղ առաջարկվող արժեթղթերի նույն դասը կամ առևտրին թույլտվության առարկա արժեթղթերի նույն դասն արդեն իսկ թույլատրված են առևտրին*

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

### 3.5.3 Շուկա ստեղծողները

*Այն անձանց անվանումները, որոնք ունեն պարտավորություն առաջարկվող կամ առևտրին թույլտվության առարկա արժեթղթերի մասով ապահովել իրացվելիություն երկրորդային շուկայում (հանդիսանալ շուկա սփեղծող)՝ ներկայացնելով այդ պարտավորության հիմնական պայմանները*

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում Թողարկողը մտադիր է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Ներդրողները Թողարկողի պարտատոմսերի համար ներգրավված շուկա ստեղծող(ներ)ի մասին կարող են տեղեկանալ Հայաստանի ֆոնդային բորսայի կայքից՝ www.amx.am:

## 3.6 Լրացուցիչ տեղեկատվություն

### 3.6.1 Խորհրդատուներ

*Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության հետ կապված ներգրավված է եղել որևէ խորհրդատու, ապա նշել այդ խորհրդատուի իրավասությունների շրջանակը*

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

### 3.6.2 Աուդիտորական եզրակացությունը

*Ներկայացնել տեղեկատվություն, թե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության որ մասն է թողարկողի անկախ աուդիտորը աուդիտի ենթարկել և արդյո՞ք այդ մասով առկա է աուդիտորական եզրակացություն: Եթե առկա է եզրակացությունը, ապա ներկայացնել այդ եզրակացության համառոտ բովանդակությունը կամ շարադրել այն ամբողջությամբ*

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվությունների, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 6-ում:

### 3.6.3 Թողարկողի վարկանիշը

*Թողարկողին կամ նրա կողմից թողարկված պարտատոմսերին շնորհված վարկանիշը՝ նշելով արդյո՞ք նման վարկանիշը շնորհվել է թողարկողի նախաձեռնությամբ, թե ոչ: Այստեղ պետք է ներկայացնել նաև այդ վարկանիշի համառոտ իմաստը*

Թողարկողն ունի վարկանիշներ շնորհված «Moody's» և «S&P Global Ratings» միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից, որոնց համար Թողարկողը դիմել է սեփական նախաձեռնությամբ:

| S&P Global Ratings | |
|---|---|
| վերջին թարմացումը | 02.02.2021 |

| | |
|---|---|
| երկարաժամկետ | B+ |
| կարճաժամկետ | B |
| հեռանկարը | բացասական |
| հաշվարկված սեփական վարկունակության ցուցանիշ (SACP) | bb- |

| **Moody's** | |
|---|---|
| վերջին թարմացումը | 09.12.2020 |
| երկարաժամկետ ավանդներ | Ba3/NP |
| վարկունակության բազային գնահատական | B1 |
| կոնտրագենտի ռիսկի գնահատական | Ba3(cr)/NP |
| հեռանկարը | Բացասական |

# ՄԱՍ 4 ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 4.1 Անկախ աուդիտորներ

Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի «Ամերիաբանկ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

2017-2018 թթ.-ին Բանկի անկախ աուդիտորական ստուգումներն իրականացվել է «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից: 2019թ.-ի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվելու է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ կողմից: «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի հասցեն է ՀՀ, 0010, Երևան, Վ. Սարգսյան 26/1, 8-րդ հարկ («Էրեբունի-Պլազա» բիզնես կենտրոն), հեռ.՝ (+37410) 595999, կայքի հասցեն է www.kpmg.am:

«Էրնսթ ընդ Յանգ»-ը գլոբալ «Էրնսթ ընդ Յանգ» (EY) միջազգային աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպության անդամ է: Ընկերությունն իր գործունեությունը Հայաստանում սկսել է 2008թ-ից: «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ի հասցեն է ՝ ՀՀ ք. Երևան 0001, Հյուսիսային պողոտա, 1 շենք, գրասենյակ 27, հեռ.՝ (+37410) 50 07 90, (+37410) 50 07 05, կայքի հասցեն է՝ www.ey.com/am էլ. փոստ՝ yerevan@am.ey.com:

## 4.2 Ռիսկային գործոններ

Ներքոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Թողարկողի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի վատթարացմանը, ինչպես նաև շուկայական դիրքի, մրցունակության և հեռանկարային զարգացման վատթարացմանը, ինչը հավանական է, որ կարող է հանգեցնել Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չկատարմանը կամ որոշակի կերպով դժվարացնել ներդրողների կողմից ապագայում պարտատոմսերի արագ և շահավետ գնով իրացումը, արժեկտրոններով նախատեսված տոկոսագումարների ստացումը և մարումը: Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև, որ ստորև ներկայացվող ռիսկերից բացի հնարավոր է նաև այլ խնդիրների առաջացում, որոնք հետագայում կարող

են անցանկալի հետևանք ունենալ Թողարկողի ֆինանսական վիճակի, արդյունքերի, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների (իրացվելիություն, եկամտաբերություն) վրա:

Ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել Բանկը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ Բանկի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի կամ շահույթի վրա:

**Աճող մրցակցություն շուկայի համակենտրոնացման արդյունքում:** Բանկային ոլորտին բնորոշ է բարձր մրցակցությունը հետևաբար շուկայում մրցակիցների ակտիվության բարձրացումը կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

**Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ:** Չնայած Բանկը ներդրել է բավականին ճկուն և արդյունավետ գնագոյացման համակարգ իր կողմից առաջարկվող ծառայությունների համար՝ պետք է նկատի ունենալ, որ կախված Թողարկողի կողմից ծառայությունների գնային առաձգականության և եկամուտների առաձգականության բնութագրիչներից, Բանկի հասույթը կարող է նվազել ՀՀ-ում սպասվելիք սղաճի պայմաններում: Այնուամենայնիվ, տոկոսադրույքների վերանայման և տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների ու պարտավորությունների ճեղքվածքի կառավարման ճկուն քաղաքականությունը Բանկում թույլ են տալիս համարել, որ մակրոտնտեսական միջավայրի կտրուկ փոփոխության արդյունքում առաջացող վերոնշյալ ռիսկերը չեն կարող էական ազդեցություն ունենալ Բանկի ընդհանուր շահութաբերության և իրացվելիության վրա:

**Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ:** Թողարկողը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում: Հնարավոր է, որ հաջորդող տարիների ընթացքում Բազելյան 3-րդ համաձայնագրի ներդրման արդյունքում ռիսկի գնահատման լրացուցիչ սկզբունքներ սկսվեն կիրառվել, որոնք միտված են լինելու Բանկի ռիսկերի կառավարման համակարգի ամրապնդմանը:

**Աշխարհաքաղաքական ռիսկեր:** Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա և, որպես հետևանք, Բանկի ակտիվների որակի վրա:

**Վարկային ռիսկ**: Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի

նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (ինչպես ճանաչված ֆինանսական ակտիվների, այնպես էլ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար), ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ու Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը, որոնք ակտիվորեն վերահսկում են վարկային ռիսկը: Ստեղծված ռիսկերի կառավարման համակարգի արդյունքում Բանկի վարկային պորտֆելում չաշխատող ակտիվների մասնաբաժինը չի գերազանցում 5%-ը, ինչն, առնվազն 2 տոկոսային կետով ցածր է ՀՀ բանկային համակարգի համանման գնահատված ցուցանիշից միևնույն ժամանակաշրջանում: Վարկային պորտֆելի որակի կառավարման նպատակով սահմանված է նաև որոշում կայացնող մարմինների սահմանաչափերի հստակ համակարգ, վարկերի և վարկունակության նվազագույն պահանջների վերանայման և թեստավորման սկզբունքներ: Սթրես թեստավորման արդյունքների համաձայն, վատագույն սցենարի դեպքում վարկային ռիսկի ազդեցությունը կապիտալի համարժեքության գործակցի վրա  չի գերազանցում 2.5 տոկոսային կետը:

**Շուկայական ռիսկ:** Շուկայական գործոնների ազդեցության ներքո Բանկի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը:

**Արտարժութային ռիսկ:** Թողարկողն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժութային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Ռիսկերի կառավարման գործող ներքին համակարգի պայմաններում վատագույն սթրեսային սցենարների դեպքում նույնիսկ, արտարժութային ճեղքվածքի գծով վնասները չեն գերազանցի ընդհանուր կապիտալի 1%-ը: Այնուամենայնիվ, ՀՀ դրամի փոխարժեքի հնարավոր էական արժեզրկումը հիմնական արժույթների նկատմամբ բացասական ազդեցություն կարող է ունենալ Բանկի հաճախորդների վրա արտարժույթով արտահայտված վարկային պարտավորությունների սպասարկման մասով և որը կարող է վատացնել ակտիվների որակը ու նվազեցնել Բանկի շահութաբերությունը: Ընդհանուր առմամբ Բանկը ունակ է կլանել ՀՀ դրամի էական արժեզրկման ռիսկը առանց հիմնական տնտեսական նորմատիվները վտանգելու և իրացվելիության լուրջ խնդիրների:  Հարկ է նշել, որ արտարժույթի փոխարժեքի տատանման հանդեպ

բարձր զգայունությունը ընդհանուր խնդիր է ՀՀ բանկային համակարգում՝ տնտեսության դոլարիզացման բարձր մակարդակի պատճառով:

**Տոկոսադրույքի ռիսկ**: ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Շուկայական տոկոսադրույքների տատանումները կարող են ազդել Բանկի ֆինանսական վիճակի, եկամուտ/ծախսերի և դրամական հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում: Բանկի ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը: Արդյունքում, 100 բազիսային կետով տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխության դեպքում գոյացած հանրագումարային վնասը, ըստ հաշվարկների, չի գերազանցի Բանկի ընդհանուր կապիտալի 1%-ը:

**Գնային ռիսկ**: Նյութական ակտիվների (գույք, գրավ) գների փոփոխության արդյունքում բանկի կորստի ռիսկն է: Գրավների արժեզրկման ռիսկի կառավարման տեսակետից կիրառվում է վարկ/գրավ ցուցանիշի ճկուն կառավարում, գրավների կենտրոնացվածության կառավարում, ինչի արդյունքում չաշխատող ակտիվների կեսից ավելին վերադարձվում են առնվազն մեկ տարվա ընթացքում:

**Իրացվելիության ռիսկ**: Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը: Բարձր իրացվելի ակտիվների մեծ կշիռը ընդհանուր ակտիվներում թույլ է տալիս

Բանկին գործել իրացվելիության ռիսկի ցածր պայմաններում, նույնիսկ այն սթրեսային սցենարի դեպքում, երբ տեղի է ունենում խոշորագույն 5 ավանդատուների միջոցների միաժամանակյա արտահոսք և միջբանկային միջոցների դուրսգրում. նկարագրված իրավիճակում իրացվելիության ցուցանիշների վրա ազդեցությունը չի գերազանցում 5 տոկոսային կետը՝ թողնելով իրացվելիության ռիսկի ներքին պարամետրերը ցածր ռիսկի գոտում:

**Այլ ռիսկեր**: Այլ ռիսկերը ներառում են իրացվելիության, վարկային, գործառնական և շուկայական ռիսկերից բացի բոլոր այլ ռիսկերը, ինչպես օրինակ շրջակա միջավայրի և սոցիալական, ռազմավարական, հեղինակության և իրավական ռիսկերը: Թվարկված ռիսկերի կառավարման նպատակով Բանկում ստեղծված են մասնագիտացված ստորաբաժանումներ և ներդրված են ներքին գործընթացների մշակված համակարգեր, որոնք անընդհատորեն վերանայվում և բարելավվում են՝ Բանկի աճին և բիզնեսի բարդությանը համընթաց:

## 4.3 Տեղեկատվություն թողարկողի մասին

### 4.3.1 Թողարկողի պատմությունը և զարգացումը

#### 4.3.1.1 *Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը*

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

**հայերեն՝** «Ամերիաբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն,
**ռուսերեն՝** Закрытое Акционерное Общество “Америабанк”,
**անգլերեն՝** “Ameriabank” Closed Joint Stock Company:

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

**հայերեն՝** «Ամերիաբանկ» ՓԲԸ,
- Տնօրենների Խորհրդի անդամների կազմում առանձնացնել Բանկի կառավարման գործընթացում մշտական հսկողություն իրականացնող անդամ/ներ/ /Տնօրենների Խորհրդի Լիազոր անդամ/, որի կարգավիճակը և գործունեության պայմանները սահմանվում են Տնօրենների Խորհրդի որոշմամբ և նրա հետ կնքված պայմանագրով, ընդ որում նշված անդամի համար կիրառելի է Բանկի ղեկավարների/աշխատակիցների համար սահմանված արտոնությունները և երաշխիքները:

### 4.7.2.5 ***Տնօրինությունը***

Տնօրինությունն իրականացնում է իր գործունեությունը նիստերի միջոցով, որոնք ենթակա են հրավիրման ամիսն առնվազն մեկ անգամ: Տնօրինությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման, որոշումների ընդունման կարգը: Բանկի Տնօրինության իրավասության մեջ է մտնում՝

1. Տնօրենների Խորհրդի հաստատմանը ներկայացվող Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի նախնական քննարկումն ու նախնական/պայմանական հաստատումը,
2. Բաժնետերերի ժողովի և/կամ Տնօրենների Խորհրդի հաստատմանն ենթակա Բանկի ներքին իրավական ակտերին նախնական հավանություն տալը, բացառությամբ Կանոնադրության, Բաժնետերերի ժողովի, Տնօրենների Խորհրդի, կից կոմիտեների ու հանձնաժողովների, Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի,
3. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների և սակագների սահմանումը,
4. Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված որոշումների ճիշտ և ժամանակին իրականացման ապահովումը,
5. Բանկի ակտիվների և պասիվների կառավարման իրականացումը,
6. Բանկի ընթացիկ, ամենօրյա գործունեությունը կանոնակարգող, օպերատիվ ղեկավարում պահանջող ու նկարագրողական բնույթ կրող ակտերի հաստատումը,
7. Բանկի հրապարակային պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատումը,
8. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող կամ Տնօրինության իրավասությանը վերապահված վարկավորման պայմանների շեղումով բանկային գործիքների տրամադրման հաստատումը,
9. Բանկի կողմից ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող գույքի կամ այլ ակտիվների ձեռքբերման կամ վաճառքի գործարքների, ներառյալ՝ փոխկապակցված գործարքների կնքման հաստատումը,

10. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված գումարը գերազանցող՝ Բանկի կողմից իրականացվող ներդրումների, ներառյալ փոխկապակցված ներդրումների, հաստատումը,
11. Բանկի կողմից մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման հարցի քննարկումն ու նախնական հավանություն տալը,
12. Բանկի ներքին և արտաքին աուդիտորների կամ այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքների քննարկում և բացահայտված թերությունների մասով Տնօրենների Խորհրդի կողմից սահմանված միջոցառումների իրականացում,
13. Տնօրենների Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում՝ Բանկի աշխատատեղերի հաստատումը,
14. Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գլխավոր տնօրենի իրավասությանը չվերապահված այլ հարցերի լուծումը,
15. Բանկի ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարների նշանակումը,
16. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

#### 4.7.2.6 ***Գլխավոր տնօրենը***

Բանկի Գլխավոր տնօրենը՝

1. Տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ.
2. Ներկայացնում է Բանկն այլ անձանց հետ հարաբերություններում ՀՀ տարածքում և արտերկրում.
3. Գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր.
4. Սահմանված կարգով կնքում է աշխատանքային և այլ պայմանագրեր.
5. Տնօրենների Խորհրդի հաստամանն է ներկայացնում Տնօրինության կողմից հավանություն ստացած ներքին իրավական ակտերը.
6. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը.
7. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին, բացառությամբ Ընդհանուր Ժողովի և Տնօրենների Խորհրդի կողմից նշանակվող անձանցից.

8. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
9. Կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ.
10. Ստորագրում է Տնօրինության նիստերի արձանագրություններն ու որոշումները.
11. Բացում է բանկային հաշիվներ.
12. Կազմակերպում է Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի և Տնօրինության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ընդհանուր Ժողովին, Տնօրենների Խորհրդին, Տնօրինությանը և իրավունք չունի Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու.
13. Իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ընդհանուր Ժողովի, Տնօրենների Խորհրդի, ներքին վերահսկողության ծառայության իրավասությանը չվերապահված իրավազորությունները.
14. Իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Տնօրինության անդամներից մեկին Գլխավոր տնօրեն-Տնօրինության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հարցը.
15. Մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները.
16. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

Գլխավոր տնօրենը Տնօրենների Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում Տնօրինության և իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Տնօրենների Խորհրդի կողմից սահմանած կարգով: Նշված կարգով պետք է սահմանվեն առնվազն հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը, վերջիններիս ներկայացման կարգը և դրանցում ներառման ենթակա տեղեկությունների ցանկը:

### 4.7.3 Թողարկողի կառավարման մարմինների անդամները

#### 4.7.3.1 *Բանկի խորհրդի անդամները*

Սույն Ազդագիրը կազմելու պահին Բանկի Տնօրենների Խորհուրդը բաղկացած էր յոթ անդամներից՝ նախագահ, մեկ անկախ անդամ և հինգ անդամ, որոնց կազմը, անդամների թիվը և որակավորումը, ինչպես նաև փոխլրացնող փորձառությունն ու հմտություններն անմիջականորեն անդրադառնում են Խորհրդի արդյունավետության վրա:

| Անուն ազգանուն | Զբաղեցրած պաշտոն | Փորձառությունը | Թողարկողից դուրս գործունեության ոլորտ |
|---|---|---|---|
| Անդրեյ Մկրտչյան | Խորհրդի նախագահ | Ավելի քան 25 տարի | չկա |
| Ռիչարդ Օգդոն | Խորհրդի անկախ անդամ | Ավելի քան 30 տարի | Ռուսաստանի «Անկախ տնօրենների ասոցիացիայի» Դիտորդ խորհրդի անդամ |
| Տիգրան Դավթյան | Խորհրդի անկախ անդամ | Ավելի քան 25 տարի | Եվրասիական համագործակցության ֆինանսաբանկային ասոցիացիայի համակարգող խորհրդի անդամ |
| Ռոբերտ ֆոն Ռեկովսկի | Խորհրդի անկախ անդամ | Ավելի քան 25 տարի | Ներդրումային ֆոնդերի կառավարում |
| Լինդսի Ֆորբս | Խորհրդի անդամ | Ավելի քան 35 տարի | Մի շարք միջազգային ընկերությունների խորհրդի անդամ |
| Կախաբեր Կիկնավելիձե | Խորհրդի անկախ անդամ | Մոտ 25 տարի | չկա |
| Ֆիլիպ Լինչ | Խորհրդի անդամ | Ավելի քան 30 տարի | Ներդրումային գործունեություն |

#### 4.7.3.2 *Բանկի Տնօրենների խորհրդին կից կոմիտեների անդամները*

| ԿՈՄԻՏԵՆԵՐ | Աուդիտի կոմիտե | Վարձատրության կոմիտե | Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե | Ռիսկերի կոմիտե |
|---|---|---|---|---|
| **Կազմը** | Լինդսի Ֆորբս, Ռիչարդ Օգդոն, Տիգրան Դավթյան | Ռոբերտ ֆոն Ռեկովսկի, Ֆիլիպ Լինչ, Կախաբեր Կիկնավելիձե | Կախաբեր Կիկնավելիձե, Ռոբերտ ֆոն Ռեկովսկի, Ֆիլիպ Լինչ | Ռիչարդ Օգդոն, Լինդսի Ֆորբս, Տիգրան Դավթյան |

#### 4.7.3.3 *Բանկի տնօրինության անդամները*

Բանկի Տնօրինությունը կազմված էր 7 անդամներից՝

| Անուն, ազգանուն | Բնակության վայրը | Զբաղեցրած պաշտոնը |
|---|---|---|
| Արտակ Հանեսյան | ք. Երևան | Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն |
| Գոհար Խաչատրյան | ք. Երևան | Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ |
| Անդրանիկ Բարսեղյան | ք. Երևան | Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն |
| Գագիկ Սահակյան | ք. Երևան | Տնօրինության անդամ, Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն |
| Գևորգ Թառումյան | ք. Երևան | Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, Ֆինանսական գծով տնօրեն |
| Արման Բարսեղյան | ք. Երևան | Տնօրինության անդամ, Մանրածախ բանկինգի տնօրեն |
| Արմինե Ղազարյան | ք. Երևան | Տնօրինության անդամ, Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն |

Տնօրինության անդամներն իրենց իրավասություններն իրականացնում են Տնօրինության նիստերի միջոցով, Տնօրինության լիազորությունների շրջանակներում, նիստերին մասնակցելու և քվեարկությամբ որոշումներ ընդունելու միջոցով:

### 4.7.4 Թողարկողի մասնաճյուղերի կառավարիչները

Սույն Առևտրի Ազդագրի պատրաստման պահին Բանկի ոչ մի մասնաճյուղ չէր կենտրոնացրել Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը:

### 4.7.5 Շահերի բախումը

Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախումը բացակայում է:

## 4.8 Հսկող անձինք

Արժեթղթերի շուկայի մասին" ՀՀ օրենքի իմաստով Բանկը գտնվում է ներքոնշյալ անձանց ուղղակի հսկողության տակ՝

1. ԻՄԱՍՏ ԳՐՈՒՊ (Սի-Ուայ) Լիմիթեդ, որը հանդիսանում է Բանկի 48.90% բաժնետոմսերի սեփականատեր:

2. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ, որն հանդիսանում է Բանկի 17.74% բաժնետոմսերի սեփականատեր:
3. «Ի ԷՍ ՓԻ ԷՍ Հոլդինգ Լիմիթեդ», որին պատկանում են Բանկի բաժնետոմսերի 11.92%-ը:
4. Ասիական Զարգացման Բանկ, որը հանդիսանում է Բանկի 13.93% բաժնետոմսերի սեփականատեր:

Արժեթղթերի շուկայի մասին" ՀՀ օրենքի իմաստով Բանկը գտնվում է ներքոնշյալ անձանց **անուղղակի** հսկողության տակ՝

1. Ռուբեն Վարդանյան - բաժնետեր ԻՄԱՍՏ ԳՐՈՒՊ (Սի-Ուայ) ԼԻՄԻԹԵԴ ընկերությունում, RKVF Հիմնադրամի հիմնադիր:

## 4.9 Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ

### 4.9.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2019 և 2018 թվականների աուդիտորական եզրակացությամբ հաստատված հաշվետվությունները ներկայացված են սույն Ազդագրի **Հավելված 6-ում**: Ցանկացողները տվյալ հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝ http://ameriabank.am/Page.aspx?id=179&lang=33:

### 4.9.2 Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2020 թվականի չորրորդ եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներակայացված են Ազդագրի **Հավելված 6-ում**: Ցանկացողները տվյալ հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով ՝http://ameriabank.am/Page.aspx?id=176&lang=33:

### 4.9.3 Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություններ

Թողարկողի ֆինանսական վիճակի վրա ազդող էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

### 4.9.4 **Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ**

Ընկերությունը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Ընկերության ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

## 4.10 Մասնագիտական կարծիքներ

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, Ծրագրային Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

## 4.11 Այլ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.ameriabank.am հասցեով:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆԸ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

# ՄԱՍ 5 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական**

**(իրավաբանական անձանց համար)**

**Հայտ-հանձնարարականը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը** _____
**(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)**

**Իրավաբանական անձի անվանումը** _____
**(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)**

**Պետական գրանցման տվյալները** _____
**(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)**

**Գտնվելու վայրը** _____

**ՀՎՀՀ** _____

**Ռեզիդենտությունը** _____
**(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)**

**Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝**

***Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը*** _____
**(օր, ամիս, տարի)**

***Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ*** _____
**քանակը թվերով**

***Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը*** _____
**գինը թվերով**

***Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց*** _____
**ընդհանուր գումարը թվերով**

***վճարված ընդհանուր գումարը*** _____

**Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը** _____

_____

**Բանկի անվանումը** _____

**Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը** _____

**Արժեթղթերի հաշվի համարը** _____

**Սույնով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:**

**Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:**

**Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:**

## Լրացվում է Բանկի կողմից

***Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ*** _____

***Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ*** _____

**քանակը թվերով**

**Ստորագրություն** _____

**Անուն Ազգանուն** _____

**(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)**

Կ.Տ.

*Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043120372900 բանկային հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են*

*տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:*

## «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

**(իրավաբանական անձանց համար)**

**Հայտ-հանձնարարականը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը** _____
**(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)**

**Իրավաբանական անձի անվանումը** _____
**(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)**

**Պետական գրանցման տվյալները** _____
**(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)**

**Գտնվելու վայրը** _____

**ՀՎՀՀ** _____

**Ռեզիդենտությունը** _____
**(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)**

**Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝**

***Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը*** _____
**(օր, ամիս, տարի)**

***Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ*** _____
**քանակը թվերով**

***Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը*** _____
**գինը թվերով**

***Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը*** _____
**ընդհանուր գումարը թվերով**

**Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը** _____

**Բանկի անվանումը** _____

**Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը** _____

**Արժեթղթերի հաշվի համարը** _____

**Սույնով, հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն ենք դրանցում նշված պայմաններին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:**

**Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:**

**Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ մեր կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:**

## Լրացվում է Բանկի կողմից

***Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ*** _____

***Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ*** _____

**քանակը թվերով**

**Ստորագրություն** _____

**Անուն Ազգանուն** _____

**(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն, ազգանունը)**

Կ.S.

*Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043100494501 բանկային հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:*

## ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ/

## «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ Ընկերության թողարկած դրամային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

**(Ֆիզիկական անձանց համար)**

| | |
|---|---|
| **Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամը** | **(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)** |
| **Հայտ-հանձնարարական ներկայացնողի անունը** | **(անուն, ազգանուն)** |
| **Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ** | **(փաստաթղթի համար)** |
| **Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը** | **(օր, ամիս, տարի)** |
| **Գրանցման վայրի հասցեն** | |
| **Ռեզիդենտությունը** | **(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)** |

**Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝**

| | |
|---|---|
| ***Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը*** | **(օր, ամիս, տարի)** |
| ***Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ*** | **քանակը թվերով** |
| ***Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը*** | **գինը թվերով** |
| ***Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը*** | **ընդհանուր գումարը թվերով** |

**Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը** _____

**Բանկի անվանումը** _____

**Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը** _____

**Արժեթղթերի հաշվի համարը** _____

**Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:**

**Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:**

**Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:**

**Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա իմ և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ իմ կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:**

**Կողմերիս միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:**

## Լրացվում է Բանկի կողմից

***Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ*** _____

***Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ*** _____

**քանակը թվերով**

**Ստորագրություն** _____

**Անուն Ազգանուն** _____

**(ստորագրող անձի անուն, ազգանունը)**

*Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043120372900 բանկային հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի*

*ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:*

## «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ Ընկերության թողարկած դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

**(Ֆիզիկական անձանց համար)**

**Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը և ժամը** _____
**(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)**

**Հայտ-հանձնարարական ներկայացնողի անունը** _____
**(անուն, ազգանուն)**

**Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ** _____
**(փաստաթղթի համար)**

**Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը** _____
**(օր, ամիս, տարի)**

**Գրանցման վայրի հասցեն** _____

**Ռեզիդենտությունը** _____
**(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)**

**Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝**

***Պարտատոմսերի ձեռքբերման ամսաթիվը*** _____
**(օր, ամիս, տարի)**

***Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ*** _____
**քանակը թվերով**

***Ձեռք բերվող պարտատոմսերի միավորի ձեռքբերման գինը*** _____
**գինը թվերով**

***Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը*** _____
**ընդհանուր գումարը թվերով**

**Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը** _____

**Բանկի անվանումը** _____

**Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը** _____

**Արժեթղթերի հաշվի համարը** _____

**Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:**

**Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:**

**Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:**

**Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա իմ և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ իմ կողմից պարտատոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ:**

**Կողմերիս միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:**

## Լրացվում է Բանկի կողմից

***Ձեռք բերվող պարտատոմսերի ԱՄՏԾ*** _____

***Թողարկված պարտատոմսերի ընդհանուր քանակ*** _____

**քանակը թվերով**

**Ստորագրություն** _____

**Անուն Ազգանուն** _____

**(ստորագրող անձի անուն, ազգանունը)**

*Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1570043100494501 բանկային հաշվին են մուտքագրվում մինչև պարտատոմսերի ձեռքբերման օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են փվյալ աշխատանքային օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:*

## ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

## ՀԱՎԵԼՎԱԾ 4: Բանկի կազմակերպչական կառուցվածքը

AMERIABANK

«Ամերիաբանկ» ՓԲԸ Վարչակազմակերպական կառուցվածք
(ամփոփ տարբերակ)

Հավանության է արժանացել
Տնօրինության 17.09.2019 թ-ի
թիվ 01/107/19 որոշմամբ

Տնօրինության նախագահ-
Գլխավոր տնօրեն
Արտակ Հանհսյան

Հաստատվել է տնօրենների խորհրդի
29.11.2019 թ-ի թիվ N 08/19/02 որոշմամբ

Տնօրենների խորհրդի նախագահ՝
Անդրեյ Սկրոբոտ

Ուժի մեջ է՝ 13.12.2019 թ-ից

Էջ. 15



## ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման պայմաններ

…… 20..թ.

Ամերիաբանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ------- ---------- 20--թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-ում 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ հասցեում:

| Ընդհանուր տեղեկություններ<br>(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:) | | |
|---|---|---|
| | Թողարկողը (թողարկողի անվանումը) | “ԱՄԵՐԻԱԲԱՆԿ” ՓԲԸ |
| | Երաշխավորողը | Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր: |
| | Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը) | |
| | Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության | Ամենայն մանրամասնությամբ ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 3.3.6** մասում |
| | Թողարկման արժույթը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից |

| | | |
|---|---|---|
| | | առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Առաջարկի գինը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Անվանական արժեքը | 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար |
| | Քանակը | համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի, այսինքն Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին |
| | Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները) | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր | |
| | Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի») | Ամերիաբանկի Տնօրենների Խորհրդի 202-թ --- թիվ ---- որոշում<br><br>«Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինության 202-թ. -----ի թիվ ------ որոշում |
| **Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ** | | |
| | Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից |

| | | |
|---|---|---|
| | | առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի) | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն) | Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual) |
| | Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| **Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ** | | |
| | Մարման ժամկետը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից |

| | | |
|---|---|---|
| | | առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը | 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ/ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար |
| | Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն) | Չի նախատեսվում |
| | Վաղաժամկետ մարմ7ան հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | ոչ կիրառելի |
| | Ժամկետ(ներ)ը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| | Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում), | Չի նախատեսվում |
| | Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը | Չի նախատեսվում |
| | Այլ տեղեկություններ | |
| | Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի») | Չի նախատեսվում |
| | Ժամկետ(ներ)ը | |
| | Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում), | Չի նախատեսվում |
| | Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը) | |
| **Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ** | | |
| | Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ<br>2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ |
| | Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում) | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոծող ամսաթվից |

| | | |
|---|---|---|
| | | առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |
| **Այլ տեղեկություններ** | | |
| | Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը) | Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի |
| | Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում)) | Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:<br>Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը: |
| | Արժեթղթի վարկանիշը | Արժեթղթերը դեռևս վարկանշված չեն |
| | Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը | ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ |

*Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:*

| | | | |
|---|---|---|---|
| **Արտակ Հանեսյան** | *Տնօրինության նախագահ, Գլխավոր փնօրեն* | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Գևորգ Թառումյան** | *Տնօրինության անդամ, Գլխավոր փնօրենի* | | |

| | | | |
|---|---|---|---|
| | *փեղակալ, ֆինանսական գծով փնօրեն* | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Գագիկ Սահակյան** | *Տնօրինության անդամ, Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով փնօրեն* | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Անդրանիկ Բարսեղյան** | *Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման գծով փնօրեն* | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Արմինե Ղազարյան** | *Տնօրինության անդամ, Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով փնօրեն* | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Արման Բարսեղյան** | *Տնօրինության անդամ, Մանրածախ բանկինգի փնօրեն* | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Արտակ Հանեսյան** | Գլխավոր տնօրեն | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Կ.Տ.

# ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ

# «Ամերիաբանկ» ՓԲԸ

## Ֆինանսական հաշվետվություններ

*2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*
*Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

# Բովանդակություն

## Անկախ աուդիտորական եզրակացություն

## Ֆինանսական հաշվետվություններ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ..... 1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ..... 2
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ..... 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ..... 4

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ներածություն ..... 5
2. Պատրաստման հիմունքներ ..... 5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում ..... 10
4. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն ..... 26
5. Զուտ տոկոսային եկամուտ ..... 29
6. Միջնորդավճարների գծով եկամուտ ..... 29
7. Միջնորդավճարների գծով ծախս ..... 30
8. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ/(վնաս) ..... 30
9. Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ ..... 30
10. Այլ գործառնական եկամուտ ..... 30
11. Այլ գործառնական ծախսեր ..... 31
12. Կարկային կորուստների համար ծախս, այլ արժեզրկում և պահուստներ ..... 31
13. Այլ ընդհանուր վարչական ծախսեր ..... 32
14. Շահութահարկի գծով ծախս ..... 32
15. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ..... 34
16. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ ..... 35
17. Իրական արժեքով՝ այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ ..... 36
18. Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ ..... 37
19. Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ ..... 38
20. Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ ..... 38
21. Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ ..... 51
22. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ..... 52
23. Այլ ակտիվներ ..... 53
24. Բանկերի ավանդներ և մասնագրություններ ..... 53
25. Հետգնման պայմանագրերով գծով վճարվելիք գումարներ ..... 54
26. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ ..... 54
27. Թողարկված պարտքային արժեթղթեր ..... 55
28. Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ ..... 55
29. Այլ պարտավորություններ ..... 56
30. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ ..... 56
31. Ռիսկերի կառավարում ..... 56
32. Կապիտալի կառավարում ..... 73
33. Պարկային պարտավորվածություններ ..... 74
34. Գործառնական վարձակալություն ..... 75
35. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ ..... 76
36. Գործարքներ կապակցված կողմերի հետ ..... 76
37. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում ..... 80
38. Ֆինանսավորման գործունեության հետևանքով առաջացած ֆինանսական պարտավորությունների փոփոխություններ ..... 83
39. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր ..... 83

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001 Armenia
Tel +374 (10) 500 780
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող., գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 780
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

## *Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների):

## *Կարծիքի արտահայտման հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունները նկարագրված են ստորև *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի *Պրոֆեսիոնալ Հաշվապահների Վարքագրքի* (ՀՎՄՍԽ Վարքագիրք), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն ՀՎՄՍԽ Վարքագրքի: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են դրանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## *Աուդիտի առանցքային հարցեր*

Աուդիտի առանցքային հարցերը այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համատեքստում ընդհանրապես, և այդ հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս: Մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:

## Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

Մենք նատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում՝ այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում՝ ստորև ներկայացված հարցը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

| Աուդիտի առանցքային հարց | Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացքում |
|---|---|

***Ակնկալվող վարկային կորուստների արժեզրկման գծով պահուստը հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով***

Ակնկալվող վարկային կորուստների («ԱՎԿ») արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է առանցքային դատողություններ առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների էականության (Բանկի ընդհանուր ակտիվների 70.3%-ը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), այնպես էլ նոր ընդունված ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ԱՎԿ գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար անհրաժեշտ դատողությունների պատճառով:

Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջվող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտո ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտո արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները:

Արժեզրկված էական ֆինանսական ակտիվների համար անհատական հիմունքով ԱՎԿ հաշվարկը պահանջում է հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից ապագա դրամական հոսքերի գնահատում:

Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող էր հանգեցնել ԱՎԿ էականորեն տարբեր գնահատականների: Սա կարող էր նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ԱՎԿ գծով պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» և Ծանոթագրություն 31-ում «Ռիսկերի կառավարում»:

Աուդիտն իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝

- Պորտֆելային հիմունքով ԱՎԿ որոշելու համար կիրառված վարկային ռիսկի մոդելների և ենթադրությունների գնահատում,
- Հաճախորդներին տրված էական արժեզրկված վարկերի և փոխատվությունների գծով ապագա գնահատված դրամական հոսքերի թեստավորում:

Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը: Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են վարկերի ժամկետանց օրերը, հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը և վարկերի մնացորդների փոփոխությունը սկզբնական ճանաչման ամսաթվից մինչև դեֆոլտի ամսաթիվը:

Արժեզրկված էական վարկերի գծով մենք թեստավորել ենք հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից ապագա գնահատված դրամական հոսքերի հաշվարկները:

Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Բանկի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը նկարագրող բացահայտումների նպատակով:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

***Բանկի 2018թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն***

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո: Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ: Ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ

***Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը նախատեսում է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը Ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

**Կառուցելով**
**բարեկեցիկ աշխարհ**

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր ձացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- Գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան տեղեկատվության բացահայտման խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Բանկի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն դարձնել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

**Կառուցելով**
**բարեկեցիկ աշխարհ**

Մենք Տնօրենների խորհրդին նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Տնօրենների խորհրդին հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող մարմինների միջոցով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի մեր եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Սերգեյ Տասկաևն է:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր

Սերգեյ Տասկաև

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)՝
Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Էրիկ Հայրապետյան

27 մարտի, 2019թ.

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

## 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

| | Ծան. | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 5 | 53,047,105 | 49,110,163 |
| Այլ տոկոսային եկամուտ | | 593,061 | 187,035 |
| Տոկոսային ծախս | 5 | (26,309,095) | (30,932,889) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **27,331,071** | **18,364,309** |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 6 | 4,511,230 | 3,577,025 |
| Միջնորդավճարների գծով ծախս | 7 | (1,111,594) | (791,890) |
| **Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ** | | **3,399,636** | **2,785,135** |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ/(վնաս) | 8 | 995,577 | (1,976,234) |
| Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ | 9 | 3,134,059 | 5,815,335 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ | | 155,365 | – |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ | | – | 424,708 |
| Այլ գործառնական եկամուտ | 10 | 4,242,231 | 2,159,541 |
| Այլ գործառնական ծախսեր | 11 | (2,475,641) | (1,892,480) |
| **Գործառնական եկամուտ** | | **36,782,298** | **25,680,314** |
| Վարկային կորուստների գծով ծախս | 12 | (9,380,965) | (5,688,706) |
| Այլ արժեզրկում | 12 | (22,749) | (122,938) |
| **Գործառնական եկամուտ արժեզրկումից հետո** | | **27,378,584** | **19,868,670** |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (7,936,402) | (6,240,813) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 13 | (6,118,214) | (4,091,161) |
| **Շահույթ մինչև շահութահարկ** | | **13,323,968** | **9,536,696** |
| Շահութահարկի գծով ծախս | 14 | (2,821,524) | (1,886,709) |
| **Հաշվետու տարվա շահույթ** | | **10,502,444** | **7,649,987** |
| **Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո** | | | |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ* | | | |
| Զուտ օգուտ/(վնաս) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից | | | |
| - Իրական արժեքի զուտ փոփոխություն | | – | 462,604 |
| - Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն | | – | (424,708) |
| - Շահութահարկի ազդեցություն | | – | (7,579) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ/ | | | |
| - Իրական արժեքի զուտ փոփոխություն | | 4,532 | – |
| - Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ | | 72,517 | – |
| - Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն | | (155,365) | – |
| - Շահութահարկի ազդեցություն | | 15,583 | – |
| **Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ** | | **(62,333)** | **30,317** |
| **Այլ համապարփակ (եկամուտ)/վնաս հարկումից հետո** | | **(62,333)** | **30,317** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | | **10,440,111** | **7,680,304** |

1-ից 33-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են ղեկավարության կողմից 2019թ. մարտի 27-ին և ստորագրվել են նրանց անունից՝

Արտան Հանեսյան
Տնօրենության նախագահ և Գլխավոր տնօրեն

Գոհար Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

## 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծան. | *2018թ. հազ. դրամ* | *2017թ. հազ. դրամ* |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 15 | 144,353,912 | 107,516 368 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 16 | | |
| - Բանկի կողմից պահվող | | 6,290,841 | 3,968 064 |
| - Հետգնման պայմանագրերով գրավադրված | | 526,169 | – |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 17 | 11,602,128 | – |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | – | 9,388 078 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 18 | 4,946,612 | 10,342.890 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 19 | 6,746,414 | 8,375,394 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 20 | 547,943,183 | 479,340 981 |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 21 | | |
| - Բանկի կողմից պահվող | | 22,269,117 | – |
| - Հետգնման պայմանագրերով գրավադրված | | 16,556,346 | – |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | 21 | | |
| - Բանկի կողմից պահվող | | – | 37,337,539 |
| - Հետգնման պայմանագրերով գրավադրված | | – | 5,968,305 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 22 | 10,240,337 | 7,126,916 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 14 | 185,898 | – |
| Այլ ակտիվներ | 23 | 8,086,270 | 6,657,562 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **779,747,227** | **677,722,097** |
| **Պարտավորություններ** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 16 | 20,621 | 686,306 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 24 | 43,076,759 | 40,004,001 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 25 | 17,011,404 | 6,121,693 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 26 | 399,086,132 | 375,170,779 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 27 | 50,846,356 | 40,932,595 |
| Այլ փոխառություններ | 28 | 120,913,209 | 98,128,094 |
| Ստորադաս փոխառություններ | 28 | 50,414,125 | 40,919,768 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | 1,086,688 | 990,256 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 14 | – | 1,025,103 |
| Վարկային պարտավորվածությունների գծով պահուստ | 33 | 140,163 | – |
| Այլ պարտավորություններ | 29 | 7,393,812 | 3,841,631 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **689,989,279** | **607,820,226** |
| **Կապիտալ** | 30 | | |
| Կանոնադրական կապիտալ | | 37,300,480 | 32,087,360 |
| Էմիսիոն եկամուտ | | 16,968,725 | 7,755,179 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների/ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ | | 333,435 | 338,214 |
| Չբաշխված շահույթ | | 35,155,308 | 29,721,118 |
| **Ընդամենը կապիտալ** | | **89,757,948** | **69,901,871** |
| **Ընդամենը կապիտալ և պարտավորություններ** | | **779,747,227** | **677,722,097** |

*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության
# 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

| | Ծան. | 2018թ. հազ. դրամ | 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ | | 58,733,901 | 45,679,533 |
| Վճարված տոկոսներ | | (33,033,438) | (28,386,448) |
| Ստացված միջնորդավճարներ | | 4,511,231 | 3,577,025 |
| Վճարված միջնորդավճարներ | | (1,1[illegible]1,594) | (791,890) |
| Զուտ վճարումներ արտարժույթով գործառնություններից | | 453,772 | (1,933,348) |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 3,586,028 | 3,601,374 |
| Ելքեր այլ գործառնական ծախսերով գծով | | (2,475,641) | (1,892,480) |
| Մուտքեր այլ գործառնական եկամտի շեղով | | 4,242,231 | 2,159,541 |
| Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ | | (7,165,324) | (5,726,848) |
| Ելքեր այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով | | (4,888,861) | (3,223,321) |
| **Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | (2,240,960) | (814,603) |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | | 5,247,676 | (5,003,619) |
| Հակադարձ ռեպոգործառնությունների գծով ստացվելիք գումարներ | | 1,924,073 | (2,223,000) |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | (89,537,762) | 34,518,400 |
| Այլ ակտիվներ | | (1,651,472) | (3,934,632) |
| **Գործառնական պարտավորությունների ավելացում /( նվազում)** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | (579,945) | (1,894,376) |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | 4,427,875 | (31,378,969) |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | 10,913,628 | 6,096,286 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | 32,999,639 | (46,389,246) |
| Այլ պարտավորություններ | | 2,673,452 | 359,730 |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից (մինչև շահութահարկը)** | | **(13,016,551)** | **(37,600,891)** |
| Վճարված շահութահարկ | | (2,758,200) | – |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից (շահութահարկից հետո)** | | **(15,774,751)** | **(37,600,891)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ | | (4,348,326) | (4,345,562) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք | | – | 2,048 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների/վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերումներ | | (8,735,406) | (17,533,115) |
| Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների/վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից | | 6,903,824 | 20,417,703 |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի/մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ձեռքբերումներ | | (12,203,815) | (79,345,696) |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի/մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների մուտք | | 15,956,823 | 72,727,616 |
| Հայկական բանկերի և վարկային կազմակերպությունների պարտատոմսերի ձեռքբերում, որոնք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգվել են որպես ռանկերին տրված վարկեր և փոխատվություններ | | – | (612,754) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | **(2,425,900)** | **(8,689,760)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Վճարված շահաբաժիններ | 30 | (1,148,000) | (2,176,201) |
| Կանոնադրական կապիտալի թողարկումից մուտքեր | | 14,426,666 | – |
| Ստորադաս փոխառություններից մուտքեր | | 9,290,363 | – |
| Մուտքեր այլ փոխառություններից | | 109,247,838 | 67,496,831 |
| Այլ փոխառությունների մարում | | (85,915,500) | (72,097,598) |
| Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից | | 24,855,545 | 23,604,849 |
| Վճարումներ թողարկված պարտքային արժեթղթերի դիմաց | | (12,849,554) | (1,100,239) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | **57,901,358** | **15,727,642** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | | **39,700,707** | **(30,563,009)** |
| Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (2,913,971) | 2,898,505 |
| Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (43,192) | – |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում | | 107,616,368 | 135,280,872 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում** | 15 | **144,353,912** | **107,616,368** |

*Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
## 2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

| *հազ. դրամ* | *Ծան.* | *Կանոնադրական կապիտալ* | *Էմիսիոն եկամուտ* | *Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների/ Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ* | *Չբաշխված շահույթ* | *Ընդամենը կապիտալ* |
|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդն առ 2017թ. հունվարի 1** | | **32,087,360** | **7,755,179** | **307,897** | **24,247 332** | **64,397,768** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | | |
| Հաշվետու տարվա շահույթ | | – | – | – | 7,649 987 | **7,649,987** |
| Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ | | – | – | 30,317 | – | **30,317** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | | **–** | **–** | **30,317** | **7,649 987** | **7,680,304** |
| **Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ** | | | | | | |
| Շահաբաժիններ | 30 | – | – | – | (2,176,201) | **(2,176,201)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | | **–** | **–** | **–** | **(2,176,201)** | **(2,176,201)** |
| **Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | **32,087,360** | **7,755,179** | **338,214** | **29,721,118** | **69,901,871** |
| **Մնացորդն առ 2018թ. հունվարի 1** | | **32,087,360** | **7,755,179** | **338,214** | **29,721,118** | **69,901,871** |
| ՖՀՄՄ 9-ի կիրառման ազդեցությունը (Ծան 2) | | – | – | 57,554 | (3,920 254) | **(3,862,700)** |
| **ՖՀՄՄ 9-ի հաշվառմամբ վերահաշվարկված սկզբնական մնացորդ** | | **32,087,360** | **7,755,179** | **395,768** | **25,800,864** | **66,039,171** |
| Հաշվետու տարվա շահույթ | | – | – | – | 10,502 444 | **10,502,444** |
| Հաշվետու տարվա այլ համապարփակ վնաս | | – | – | (62,333) | – | **(62,333)** |
| **Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ** | | **–** | **–** | **(62,333)** | **10,502,444** | **10,440,111** |
| **Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ** | | | | | | |
| Կանոնադրական կապիտալի թողարկում | 30 | 5,213,120 | 9,213 546 | – | – | **14,426,666** |
| Հայտարարված շահաբաժիններ | 30 | – | – | – | (1,148,000) | **(1,148,000)** |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ** | | **5,213,120** | **9,213,546** | **–** | **(1,148,000)** | **13,278,666** |
| **Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | **37,300,480** | **16,968,725** | **333,435** | **35,155,308** | **89,757,948** |

*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# 1. Ներածություն

## (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայէներգոտրանսբանկ» ՓԲԸ) (այսուհետ «Բանկ») հիմնադրվել է 1992թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը: 2015թ. դեկտեմբերի 23-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (այսուհետ՝ «ՎԶԵԲ») ամբողջովին գնեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված 20,749 բաժնետոմսերը:

2016թ. դեկտեմբերի 21-ին «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունից գնեց Բանկի բաժնետոմսերի 13.5%-ը:

2018թ. փետրվարի 14-ին Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ) ձեռք բերեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված բոլոր 16,291 բաժնետոմսերը՝ 14,426,665 դրամով ՀՀ դրամով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են «Ամերիա Գրուպ»-ը (Սի-Ուայ) ընկերությունը՝ 56.60%, ՎԶԵԲ-ը՝ 17.80%, «Ի-ԷՍ-Փի-ԷՅ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը՝ 11.62% և ԱԶԲ-ն՝ 13.98%: Բանկի վերջնական վերահսկող և վերջնական շահառու սեփականատեր է հանդիսանում պրն. Ռուբեն Վարդանյանը:

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, դրամավճարային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անդամ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի 16 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010 Վաչգեն Սարգսյան փ. 2: Բանկի աշխատողների միջին քանակը 2018թ. 891 է (2017թ.՝ 895):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 36-ում:

## (բ) Հայաստանի գործարար միջավայրը

2018թ. կարելի է մեծապես դրական գնահատել ՀՀ տնտեսության համար: Տարվա ՀՆԱ աճը կազմել է 5.2 տոկոս, ինչը որոշակիորեն ցածր է նախորդ տարվա տեմպից, սակայն զգալիորեն բարձր է նախորդ տարիների միջին ցուցանիշից: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել արտադրության, ֆինանսական միջնորդության և ժամանցի ոլորտները: ՍԳԻ-ն վերջին տարիներին պահպանել է կայունություն և գտնվել է 2018թ. համար ՀՀ ԿԲ սահմանած թիրախային տիրույթում (2.5%): Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը ևս հիմնականում պահպանել է կայունություն: Ներմուծումների ցուցանիշի երկնիշ աճը պահպանվել է տարվա ընթացքում (տարեկան մոտ 20% աճ), արտահանումը աճել է մոտ 8%-ով: Դրամական փոխանցումները 2018թ. ընթացքում աճել են միայն 2%-ով: Արտաքին պահուստներում դիտարկվում է մոտ 3% նվազում:

Ելնելով վերոնշյալից, ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան միջոցներ է ձեռնարկում Բանկի գործունեության կայունության ապահովման համար, ինչպես ներկայիս պայմաններում, այնպես էլ առաջիկայում հնարավոր պոտենցիալ ցնցումների դեպքում:

# 2. Պատրաստման հիմունքներ

## (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

## (բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքները/վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, որոնք ներկայացված են իրական արժեքով:

## 2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### (գ) Վերադասակարգումներ

ՖՀՄՍ 9-ի ընդունումից հետո Բանկը վերանայել է համապատասխան ֆինանսական հոդվածների մասին հաշվետվության ներկայացումը՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն հաշվարկված արժեզրկումից կորուստները որպես մեկ հոդված ներկայացնելու նպատակով: Համապատասխանաբար, 2018թ. ներկայացման հիմունքներին համապատասխանեցվելու համար 2017թ. համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ կատարվել են արժեզրկումից կորուստների գծով հետևյալ վերադասակարգումները՝

| *հազ. դրամ* | *Նախկինում* | *Վերադասա-կարգում* | *Ճշգրտված* |
|---|---|---|---|
| Արժեզրկումից կորուստներ | 5,811,644 | (5,811,644) | – |
| Այլ արժեզրկում | – | 122,938 | 122,938 |
| Վարկային կորուստների գծով ծախսեր | – | 5,688,706 | 5,688,706 |
| Տոկոսային եկամուտ | 49,297,198 | (49,297,198) | – |
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: | – | 49,110,163 | 49,110,163 |
| Այլ տոկոսային եկամուտ | – | 187,035 | 187,035 |

### (դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Բանկի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը՝ ներկայացված ՀՀ դրամով, կլորացված է մինչև մոտակա հազար ՀՀ դրամ: 2018 թ. դեկտեմբերի 31-ի և 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն են համապատասխանաբար 483.75 ՀՀ դրամ և 484.1 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց և 553.65 ՀՀ դրամ և 580.1 ՀՀ դրամ 1 եվրոյի համար:

### (ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը պետք է կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ», Ծանոթագրություն 31-ում՝ «Ռիսկերի կառավարում» և Ծանոթագրություն 37-ում՝ «Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում»:

### (զ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

***Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ***

Բանկը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բանկը չի կիրառել որևէ այլ ստանդարտ կամ փոփոխություն, որը նախկինում ընդունվել է, բայց ներկայումս դեռ գործող չէ: Փոփոխությունների բնույթը և ազդեցությունները նկարագրված են ստորև.

*ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ*

ՖՀՄՍ 9 փոխարինում է ՀՀՄՍ 39 *Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը* ստանդարտին 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար: Բանկը չի վերահաշվարկել ֆինանսական գործիքների գծով 2017թ. համեմատական տեղեկատվությունը ՖՀՄՍ 9-ի շրջանակներում: Հետևաբար, 2017թ. համեմատական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համեմատելի չէ 2018թ. ներկայացված տեղեկատվության հետ: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջ եկած տարբերությունները ուղղակիորեն ճանաչվել են 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթում և բացահայտված են ստորև:

## 2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### (գ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ (շարունակություն)

*(i) Դասակարգումը և չափումը*

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին հիմնված է բիզնես մոդելի վրա, որով կառավարվում են տվյալ գործիքները՝

- Գործիքները, որոնք կառավարվում են «հավաքագրման համար պահվող» հիմունքով, չափվում են ամորտիզացված արժեքով,
- Գործիքները, որոնք կառավարվում են «հավաքագրման և վաճառքի համար պահվող» հիմունքներով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով (FVOCI),
- Այլ հիմունքներով կառավարվող գործիքները, այդ թվում՝ առևտրային ֆինանսական ակտիվները, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (FVTPL):

Բաժնային ֆինանսական ակտիվները պահանջվում է դասակարգել սկզբնական ճանաչման պահին իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե չի կայացվել որոշում (որը ենթակա չէ վերանայման)՝ դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային ներդրումների գծով ձեռք իրացված և չիրացված օգուտները և վնասները, բացի շահութաբաժինների ճշով եկամտից, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց հետագա դասակարգման շահույթում և վնասում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և գնահատումը հիմնականում մնում է անփոփոխ ՀՀՄՍ 39-ի ընթացիկ պահանջների համեմատ: Ածանցյալ գործիքները կշարունակեն չափվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Պարունակվող ածանցյալ գործիքները այլևս չեն առանձնացվում ֆինանսական ակտիվից, որոնց մաս են կազմում:

*(ii) Արժեզրկում*

ՖՀՄՍ 9-ի ընդունմամբ հիմնականում փոխվել է Բանկի կողմից վարկերի արժեզրկման հաշվառումը. ՀՀՄՍ 39-ով նախատեսված կրած վնասների մոտեցումը փոխարինվել է հետագա ժամանակաշրջաններում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: 2018թ. հունվարի 1-ից Բանկը ճանաչում է պահուստներ ակնկալվող վարկային կորուստների գծով բոլոր վարկերի և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ պարտքային ֆինանսական ակտիվների գծով, ինչպես նաև վարկային բնույթի պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար: Բաժնային գործիքները արժեզրկման ենթակա չեն համաձայն ՖՀՄՍ 9-ի:

Պահուստի հիմքում ընկած է ԱՎԿ-ն՝ կապված հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունեցել վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո: Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է ձեռք բերված կամ ստեղծած արժեզրկված վարկի սահմանմանը (POCI), ապա պահուստը հիմնվում է ակտիվի կյանքի ընթացքում ԱՎԿ փոփոխության վրա: Բանկի կողմից կիրառվող արժեզրկման մեթոդների մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 31-ի (գ) ենթակետում: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման քանակական ազդեցությունը բացահայտված է ստորև՝ շաժին (iii)-ում:

*(iii) ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը*

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա, ներառյալ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն կրած վարկային կորուստների վրա հիմնված հաշվարկը ՖՀՄՍ 9-ի համաձայն ԱՎԿ մոտեցմամբ փոխարինելու ազդեցությունը:

## 2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### (գ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման տոփոխություններ (շարունակություն)

| | | ԳՀԱ 39-ով | | | Վերաչափում | | ՖՀՄՍ 9 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *հազ. դրամ* | | Դասակարգում Հղում | Գումար | Վերադասակարգում | ԱՎԿ | Այլ | Գումար | Դասակարգում |
| ***Ֆինանսական ակտիվներ*** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | | L&R[1] | 107,616,368 | – | (26,171) | – | 107,590,197 | Ամորտիզացված արժեք |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | FVPL | 3,968,064 | – | – | – | 3,968,064 | FVPL (պարտադիր) |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | AFS[3] | 9,888,078 | (9,888,078) | – | – | կիրառելի չէ | կիրառելի չէ |
| *Վերադասակարգում՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներին* | | | | *9,888,078* | – | – | | |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | | L&R[1] | 10,842,890 | (628,936) | (11,071) | – | 10,202,883 | Ամորտիզացված արժեք |
| *Վերադասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերին* | Ա | | | *628,936* | – | – | | |
| Հաճախորդներին տրված վարկեր. ամորտիզացված արժեք | | L&R | 479,640,981 | – | (4,123,278) | – | 475,517,703 | Ամորտիզացված արժեք |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | | HTM[2] | 43,305,844 | (43,305,844) | – | – | կիրառելի չէ | կիրառելի չէ |
| *Վերադասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերին* | | | | *43,305,844* | – | – | | |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | | | – | 43,934,780 | (353,270) | – | 43,581,510 | Ամորտիզացված արժեք |
| *Բանկերին տրված վարկերից և փոխատվություններից* | Ա | | | *(628,936)* | *(10,493)* | – | | |
| *Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից* | | | | *(43,305,844)* | *(342,777)* | – | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | | – | 9,888,078 | – | – | 9,888,078 | FVOCI |
| *Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից* | | | | *(9,888,078)* | – | – | | |
| Այլ ֆինանսական ակտիվներ | | L&R[1] | 1,508,311 | – | (52,299) | – | 1,456,012 | Ամորտիզացված արժեք |
| **Ընդամենը ակտիվներ** | | | **656,770,536** | **–** | **(4,566,089)** | **–** | **652,204,447** | |
| **Ոչ ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | | 1,025,103 | – | (965,674) | – | 59,429 | |
| Պահուստներ վարկային պարտավորվածությունների գծով | | | – | – | 262,285 | – | 262,285 | |
| **Ընդամենը պարտավորություններ** | | | **1,025,103** | **–** | **703,389** | **–** | **321,713** | |

[1] L&R: Վարկեր և դեբիտորական պարտքեր

[2] HTM: Մինչև մարման ժամկետը պահվող

[3] AFS: Վաճառքի համար մատչելի

Ա 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ Բանկը վերադասակարգել է հայկական բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերը, որոնք նախկինում չէին բավարարում մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների սահմանմանը՝ համաձայն ԳՀՄՍ 39-ի, և դասակարգվել էին որպես Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ, որպես ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր:

## 2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### (գ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ (շարունակություն)

ՖՀՄՉ 9-ի անցման ազդեցությունը Պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

| | *Պահուստներ և չբաշխված շահույթ հազ. դրամ* |
|---|---|
| **Իրական արժեքի պահուստ** | |
| **Վերջնական մնացորդը ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017 թ. դեկտեմբերի 31)** | **338,214** |
| Ակնկալվող վարկային կորուստների ճանաչում ըստ ՖՀՄՍ 9-ի՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների համար | 71,943 |
| Վերադասային վերաբերող հետաձգված հարկ | (14,389) |
| **ՖՀՄՍ 9-ի համաձայն վերահաշվարկված սկզբնական մնացորդ (2018թ հունվարի 1)** | **395,768** |
| **Չբաշխված շահույթ** | |
| **Վերջնական մնացորդը ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017 թ. դեկտեմբերի 31)** | **29,721,118** |
| ՖՀՄՍ 9-ի համաձայն ԱՎԿ-ի ճանաչում՝ ներառյալ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող գործիքների համար | (4,900,317) |
| Վերադասային վերաբերող հետաձգված հարկ | 980,063 |
| **Վերանայված սկզբնական մնացորդը ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018 թ. հունվարի 1)** | **25,800,864** |
| **Ընդամենը փոփոխություն կապիտալում ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում** | **(3,862,700)** |

Հետևյալ աղյուսակը համադրում է սկզբնական վարկային կորստի պահուստները հաշվեձայն ՀՀՄՍ 39-ի և վարկային պարտավորվածությունների ու ֆինանսական երաշխիքի պայմանագրերի գծով պահուստները համաձայն ՀՀՄՍ 37-ի *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՖՀՄՍ 9-ով սահմանված ԱՎԿ պահուստների հետ:

| *հազ. դրամ* | *Վարկային կորստի պահուստ / պահուստներ ըստ ՀՀՄՍ 39-ի / ՀՀՄՍ 37-ի 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* | *Վերահաշվում* | *ԱՎԿ ըստ ՖՀՄՍ 9-ի 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ* |
|---|---|---|---|
| **Արժեզրկման պահուստ** | | | |
| Վարկեր և դեբիտորական պարտքեր ամորտիզացված արժեքով | 11,605,412 | 4,160,520 | 15,765,932 |
| Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր ըստ ՀՀՄՍ 39-ի / ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով ըստ ՖՀՄՍ 9-ի | – | 353,270 | 353,270 |
| Վաճառքի համար մատչելի պարտքային ներդրումային արժեթղթեր ըստ ՀՀՄՍ 39-ի / Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվներ ըստ ՖՀՄՍ 9-ի | – | 71,943 | 71,943 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | – | 52,299 | 52,299 |
| | **11,605,412** | **4,638,032** | **16,243,444** |
| Վարկերի և վարկային գծերի մասով ստանձնած պարտավորվածություններ | – | 117,160 | **117,160** |
| Վարկային քարտերի մասով ստանձնած պարտավորվածություններ | – | 24,126 | **24,126** |
| Երաշխիքներ և ակրեդիտիվներ | | 105,077 | **105,077** |
| Չօգտագործված օվերդրաֆտներ | – | 15,922 | **15,922** |
| | **–** | **262,285** | **262,285** |
| | **11,605,412** | **4,900,317** | **16,505,729** |

## 2. Պատրաստման հիմունքներ (շարունակություն)

### (զ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ (շարունակություն)

*ՖՀՄՄԿ մեկնաբանություն 22՝ «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ»*

Մեկնաբանությամբ հստակեցվում է, որ կանխավճարի արդյունքում ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության ապաճանաչման ժամանակ առաջացող համապատասխան ակտիվի, ծախսերի և եկամուտների (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչել է կանխավճարից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Եթե տեղի են ունեցել բազմակի կանխավճարային ելքեր կամ մուտքեր, ապա կազմակերպությունը պետք է որոշի կանխավճարի յուրաքանչյուր ելքի կամ մուտքի գործարքի ամսաթիվը: Այս մեկնաբանությունը որևէ ազդեցություն չունի Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»*

ՖՀՄՍ 15-ը, որը հրապարակվել է 2014 թ.-ի մայիսին և փոփոխվել 2016 թ.-ի ապրիլին, սահմանում է հինգ քայլերի մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ ընկերությունն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ տրամադրելու դիմաց: Սակայն, ստանդարտը կիրառելի չէ ֆինանսական գործիքների և վարձակալությունների հետ կապված եկամուտների համար, և հետևաբար ազդեցություն չունի Բանկի հասույթի մեծ մասի վրա՝ ներառյալ տոկոսային եկամտի, արժեթղթերով գործառնություններից օգուտների/(վնասների), վարձակալությունից եկամտի վրա, որոնք կարգավորվում են ՖՀՄՍ 9-ով *«Ֆինանսական գործիքներ»* և ՖՀՄՍ 16-ով *«Վարձակալություն»*: Արդյունքում նոր ստանդարտի ընդունումը ազդեցություն չունի Բանկի հասույթի և սեփական կապիտալի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Բանկը ժամանակ առ ժամանակ խորհրդատվական ծառայություններ է մատուցում իր հաճախորդներին: Դրանց գծով ստանձնած պարտականությունները համարվում են կատարված, երբ ծառայությունները ընդունվել են գործընկերոջ կողմից: Պայմանագրերը որպես կանոն կարճաժամկետ են և չունեն ֆինանսական բաղադրիչ: Գործարքի բինը հիմնականում իրենից ներկայացնում է մատուցվելիք ծառայությունների դիմաց վարձատրությունը, որի չափը սահմանված է ծառայությունների մատուցման պայմանագրով:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում

### (ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները վերահաշվարկվում են Բանկի համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքների կատարման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտմամբ ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերահաշվարկի արդյունքում առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկման արդյունքում առաջացած տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժութային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս, կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ որակված դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

### (բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները, և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (գ) Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները արտացոլվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղների հետ գործառնությունների ժամանակ ՀՀ ԿԲ գների փոփոխությունները հաշվառվում են որպես թանկարժեք մետաղների վերագնահատման տարբերություններ այլ եկամտի կազմում:

### (դ) Իրական արժեքի չափում

Բանկը իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ՏԻ նանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, Եամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Բանկը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Բանկը օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Բանկը դուրս է գրում հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ե) Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

***Սկզբնական ճանաչում***

*Ճանաչման չափանիշ*

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորություններով սահմանված ժամկետի ընթացքում:

***Սկզբնական չափում***

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

*Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ*

2018 թվականի հունվարի 1-ից, Բանկն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով.

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բանկն իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով: Բանկը կարող է հաշվառել ֆինանսական գործարքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը, Բանկն իր ֆինանսական ակտիվները դասակարգում էր որպես վարկեր և դեբիտորական պարտքեր (ամորտիզացված արժեքով), իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, վաճառքի համար մատչելի կամ մինչև մարման ժամկետը պահվող (ամորտիզացված արժեքով) գործիքներ:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորվածություններից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

*Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ, հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ, ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր*

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները, հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները ներառվում էին ֆիքսված կամ որոշելի վճարներով, ոչ-ածանցյալ, ֆինանսական ակտիվների չափմամբ, որոնք գնանշված չէին ակտիվ շուկայում, բացառությամբ այնպիսի ակտիվների՝

- որոնք Բանկը նպատակադրված է վաճառել այն անմիջապես կամ մոտ ապագայում
- որոնք Բանկը սկզբնական ճանաչումից հետո հաշվառել է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ վաճառքի համար մատչելի,
- որոնց համար Բանկը չի կարող վերականգնել իր սկզբնական ներդրումները գրեթե ողջ ծավալով՝ վարկի արժեզրկումից տարբերվող այլ պատճառներով, որոնք հաշվառվել են որպես վաճառքի համար մատչելի:

2018թ. հունվարի 1-ից, Բանկը չափում է Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները, հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները և այլ ֆինանսական ընթացքները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ե) Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

*Բիզնես մոդելի գնահատում*

Բանկն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

Բանկի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես՝ այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Բանկի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Բանկի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Բանկը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

*Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ*

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Բանկը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ տարվորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Բանկը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթակվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ*

2018թ. հունվարի 1-ից Բանկը կիրառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պարտքային գործիքների նոր դասակարգում ըստ ՖՀՄՍ 9-ի, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ե) Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ միջոցով չափվող ասրտքային գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառուցանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ապրիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ*

2018թ. հունվարի 1-ից սկզբնական ճանաչումից հետո Բանկը երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի ծործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի *«Ֆինանսական գործիքներ՝ Ներկայացում»* ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային ծործոքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման դրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Բանկը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ ծործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից պահվող բոլոր բաժնային գործիքները դասակարգվել են որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ:

*Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և չվճարված վարկային պարտավորվածություններ*

Բանկը թողարկում է ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո յուրաքանչյուր երաշխիքի համար Բանկի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարներից առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեքի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիայի տարբերության և ՀՀՄՍ 37-ի համաձայն (մինչև 2018թ. հունվարի 1-ը)՝ երաշխիքի արդյունքում առաջացող որևէ ֆինանսական պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսի լավագույն գնահատման կամ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1-ից)՝ ակնկալվող վարկային կորուստների պահուստի:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Բանկը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում, ՀՀՄՍ 39-ի համաձայն, սեփականատիրոջ պայմանագրի առկայության դեպքում հատկացվում էր պահուստ, սակայն 2018թ. հունվարի 1-ից այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

*Կատարողական երաշխիքի պայմանագրեր*

Կատարողական երաշխիքները պայմանագրեր են, որոնք տրամադրում են փոխհատուցում, երբ մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունը: Կատարողական երաշխիքի պայմանագրերը վարկային ռիսկ չեն փոխանցում: Համաձայն կատարողական երաշխիքի պայմանագրի՝ ռիսկը, դա հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտավորությունը: Հետևաբար, կատարողական երաշխիքի պայմանագրերը չեն համարվում ֆինանսական գործիքներ և այդպիսով՝ չեն ընդգրկվում ՖՀՄՍ 9-ի շրջանակներում:

*Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ*

Մինչև 2018թ.հունվարի 1-ը հաստատուն կամ սահմանված վճարումներով և հաստատուն մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք Բանկը հստակ մտադրված էր և ի վիճակի էր պահել մինչև մարման ժամկետի լրանալը, դասակարգվում էին որպես մինչև մարման ժամկետը պահվող: Ներդրումները, որոնք Բանկը մտադրված էր պահել անորոշ ժամկետով, չէին ներառվում վերոնշյալ դասում: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների հետագա չափումը կատարվում էր ամորտիզացված արժեքով: Օգուտները և վնասները ճանաչվում էին շահույթում կամ վնասում, երբ ներդրումները արժեզրկվում էին, ինչպես նաև՝ ամորտիզացիայի ընթացքում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ե) Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

*Վարկեր և դեբիտորական պարտքեր*

Մինչև 2018թ. հունվարի 1-ը վարկերը և դեբիտորական պարտքերը հաստատուն կամ սահմանված վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ էին, որոնք գնանշված չէին ակտիվ շուկայում: Դրանք նախատեսված չէին անմիջապես կամ մոտ ապագայում վաճառքի համար և չէին դասակարգվում որպես առևտրային նպատակով պահվող կամ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր: Այդպիսի ակտիվները հաշվառվում էին ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում էին շահույթում կամ վնասում, երբ վարկերն ու դեբիտորական պարտքերը ապաճանաչվում կամ արժեզրկվում էին, ինչպես նաև՝ ամորտիզացիայի ընթացքում:

*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Մինչև 2018թ.հունվարի 1-ը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ էին, որոնք նախատեսված էին որպես վաճառքի համար մատչելի կամ ներառված չէին նախորդ դասերից որևէ մեկում: Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում էին իրական արժեքով, ընդ որում՝ օգուտները կամ վնասները ճանաչվում էին այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև ներդրումների ապաճանաչումը կամ դրանց արժեզրկման մասին որոշման կայացումը: Այդ պահից սկսած, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում էր շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Այնուամենայնիվ, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսները ճանաչվում էին շահույթում կամ վնասում:

### (զ) Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների վերադասակարգում

2018թ. հունվարի 1-ից Բանկը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

### (է) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրերով (repo) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի նկատմամբ պարտավորությունը ներառվում է հետգնման գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով (հակադարձ repo) ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

### (ը) Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցություն:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (թ) Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների ապաճանաչումը

*Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի դեպքերում, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական հապաղման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Բանկը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Բանկը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերը և օգուտների զգալի մասը և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Բանկը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Բանկից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը: բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

*Արժեթղթավորում*

Գործառնական գործունեության շրջանակում Բանկը ապահովագրում է իր ֆինանսական ակտիվները՝ հիմնականում այդ ակտիվները վաճառելով հատուկ նշանակության կազմակերպություններ՝ որոնք արժեթղթեր են տրամադրում իրենց ներդրողներին: Փոխանցված ակտիվները կարող են ենթակա լինել ապաճանաչման ամբողջությամբ կամ մասնակիորեն: Արժեթղթերով ապահովված ֆինանսական ակտիվներում մասնակցությունը կարող է պահվել Բանկի կողմից, և այն սկզբնապես դասակարգվում է որպես վարկեր և դեբիտորական պարտքեր: Արժեթղթավորման գծով օգուտները կամ վնասները գնահատվում են ապաճանաչված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և պահպանվող մասնակցության իրական արժեքի հիման վրա՝ հիմք ընդունելով փոխանցման ամսաթվի դրությամբ դրանց հարաբերական արժեքները:

*Դուրս գրումը*

2018 թվականի հունվարի 1-ից, ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Բանկը դադարեցրել է վերականգնումը՝ կապված գրավի իրացման կամ դրա բռնագանձման ցածր հավանականությամբ: Եթե դուրս գրվող գումարը ընդհանրացում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են վարկային կորուստներից ծախսերի հետ: Դուրս գրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

*Ֆինանսական պարտավորություններ*

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է հայտարարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի հանդեպ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ժ) Վերակազմակերպված վարկեր

Հնարավորության դեպքում Բանկը ձգտում է վերակազմակերպել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

2018 թվականի հունվարի 1-ից Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այնպես են փոխվում, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Բանկը գնահատում է արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը,
- գործընկերոջ փոփոխությունը,
- եթե փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի SPPI չափանիշին:

Եթե փոփոխությունը չի հանգեցնում օգտագործվող տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (EIR) զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Բանկը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով (EIR), այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Բանկը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված:

Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերակազմակերպված վարկերը, հավաստիանալու համար, որ բոլոր չափանիշները բավարարված են և, որ ապագա վճարումները կատարվելու են:

### (ի) Ֆինանսական ակտիվների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվներն իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է լինի իրավաբանորեն ամրագրված ստորև ներկայացված բոլոր դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում,
- դեֆոլտի դեպքում,
- կազմակերպության և բոլոր գործընկերների անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (լ) Ֆինանսական ակտիվների արժեզրկում համաձայն ՀՀՄՍ 39-ի

Մինչև 2018թ. հունվարի 1-ը Բանկը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում էր, թե արդյոք առկա էր որևէ հայտանիշ, ըստ որի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող էր արժեզրկված լինել: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում էին արժեզրկված միայն և միայն այն դեպքում, եթե կար արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորստի դեպք») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեին ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի էր արժանահավատորեն չափել: Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող էր ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենար սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում: Ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված էին վճարման պարտավորությունների խախտման հետ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դեպքում արժեզրկման հայտանիշ է նաև ներդրման իրական արժեքի նշանակալի կամ երկարատև նվազումը իր սկզբնական արժեքի համեմատությամբ:

Բանկը գնահատում էր արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում էր ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի տարբերությունը (որը չի ներառում վարկերից՝ ապագայում սպասվող կորուստները, որոնք Բանկը դեռ չի կրել), զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դեպքում՝ ներդրման և իրական արժեքի տարբերությամբ: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում էր, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Տոկոսային եկամուտը շարունակում էր հաշվեգրվել նվազեցված հաշվեկշռային արժեքով՝ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դեպքում կիրառվում էր արժեզրկման կորստի չափման համար ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկման տոկոսադրույքը: Վարկերը, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս էին գրվում, եթե ապագայում չկար վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարվա ընթացքում գնահատված արժեզրկման ծախսն նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսն հակադարձվում էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ արտացոլելով: Վաճառքի համար մատչելի բաժնային գործիքներում ներդրումներից արժեզրկումից վնասները չեն հակադարձվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության միջոցով. արժեզրկումից հետո իրական արժեքի աճը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում էին Բանկի ներքին վարկային գնահատման համակարգի հիման վրա, որը հաշվի էր առնում վարկային ռիսկի այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են ակտիվի տեսակը, ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանցության կարգավիճակը և այլ հարակից գործոններ:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում էր խմբային հիմքով, որոշվում էին ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրերը համարժեք էին համանման ակտիվների խմբի բնութագրերին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում էին ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ չեզոքացնելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չէին ունեցել, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները: Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլվում և համապատասխանում էին դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ, գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում էին Բանկի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում էին Բանկի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

ՖՀՄՍ 9-ի համաձայն արժեզրկման գնահատման մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ի (գ) ենթակետում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (խ) Վարձակալություն

*Ֆինանսական վարձակալություն Բանկը որպես վարձակալ*

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունը որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով, կամ, ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես զեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալավճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չմարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը տարածվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ:

Վարձակալի կողմից ֆինանսական վարձակալության գործունեությանը ուղղակիորեն վերագրելի ծախսումներն արտացոլվում են վարձակալված ակտիվների կազմում:

*Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու*

Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է զուտ չմարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվեկշռման մեջ:

*Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ*

Գույքի վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները դասվասարաչափ ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

*Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու*

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես այլ եկամուտ՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

### (ծ) Հիմնական միջոցներ

*(i) Սեփական ակտիվներ*

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

*(ii) Մաշվածություն*

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| վարձակալված գույքի բարելավումներ | 5-20 տարի |
| համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր | 5 - 10 տարի |
| տնտեսական գույք | 5 -10 տարի |
| փոխադրամիջոցներ | 7 տարի |

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (կ) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի, լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման գծով ծախսումներ: Ամորտիզացիան ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

### (հ) Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ ակտիվներից և պարտավորություններից բաղկացած օտարման ենթակա խմբերը, որոնց վերականգնումն ակնկալվում է հիմնականում վաճառքի, այլ ոչ՝ շարունակական օգտագործման միջոցով, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ակտիվներ: Անմիջապես նախքան որպես վաճառքի համար պահվող դասակարգումը, ակտիվները կամ օտարման ենթակա խմբերի բաղադրիչները վերագնահատվում են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այնուհետև ակտիվները կամ օտարման ենթակա խմբերը չափվում են հետևյալ արժեքներից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

### (ձ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավական կամ կառուցողական պարտականություն և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վերակազմավորման գծով պահուստը ճանաչվում է, երբ Բանկը հաստատում է վերակազմավորման մանրամասն պաշտոնական պլանը, և երբ սկսվում է վերակազմավորումը կամ դրա մասին հայտարարվում է հանրությանը: Ապագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

### (ղ) Փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Բանկն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները՝ բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը:

Նման գործիքները իրենց մեջ ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառման միջոցով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

### (ճ) Վարկային պարտավորություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորություններ, որոնք ներառում են վարկավորման չօգտագործված պարտավորությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել սահմանված վճարումներ, փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից վարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով ցանկացած կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորության գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վճարս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ճ) Վարկային պարտավորություններ (շարունակություն)

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորություններ, որոնք Բանկը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկային պարտավորություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին փորձ, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորություններ:

### (մ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

#### *(i) Էմիսիոն եկամուտ*

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

#### *(ii) Բաժնետիրական կապիտալի հետգնում*

Երբ որպես կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված հատուցման գումարը, ներառյալ ուղղակիորեն վերագրելի ծախսերը, ճանաչվում է որպես կապիտալի նվազում:

#### *(iii) Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

### (յ) Սեգմենտային հաշվետվություն

Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ Մանրածախ բանկային գործունեություն, Կորպորատիվ բանկային գործունեություն, Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն:

### (ն) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (և) Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուդվիլ, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կդրաժի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

### (շ) Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Բանկ, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը.

***Տոկոսային և համանման եկամուտ և ծախս***

2018 թվականի հունվարի 1-ից Բանկը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համապատասխան արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների (սկսած 2018թ.հունվարի 1-ը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ): Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով գեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում՝ սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Բանկի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է արժեզրկված, Բանկը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Բանկը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

Ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար Բանկը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ՝ վարկային կորուստները)՝ ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (չ) Եկամուտների և ծախսերի ճանաչումը (շարունակություն)

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտներում» օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

*Միջնորդավճարների գծով եկամուտ*

Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից Բանկը ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

*Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից,*

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Նման հոդվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահառության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար միջնորդավճարները: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

*Միջնորդավճարների գծով եկամուտ՝ միջնորդային ծառայությունների գծով*

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Բանկի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

Կոմիսիոն վճարները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են որոշակի կատարողական պարտավորությունների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների բավարարումից հետո: Երբ պայմանագրով նախատեսված է փոփոխական փոխհատուցում, միջնորդավճարների գծով եկամուտը ճանաչվում է միայն այն չափով, որքանով որ հավանական է, որ ճանաչված կուտակային եկամտի զգալի մասի հակադարձում տեղի չի ունենա, մինչև հետագայում լուծվի փոփոխական փոխհատուցման հետ կապված անորոշությունը: Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման ամսաթվին:

### (ռ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Բանկի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

*ՖՀՄՍ 16 Վարձակալություն*

2016թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16-ը, որը փոխարինում է ՀՀՄՍ 17-ին *«Վարձակալություն»*, ՖՀՄՄԿ 4-ին *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ 15-ին *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ 27-ին *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատում»*: ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալությունների ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է վարձակալից հաշվառել բոլոր վարձակալությամբ ստացված ակտիվները միասնական հաշվապահական հաշվեկշռի մոդելով, ՀՀՄՍ 17-ի ֆինանսական վարձակալության հաշվառման նմանությամբ: Ստանդարտը նախատեսում է երկու տեսակի բացառություն վարձակալի համար՝ ցածրարժեք ակտիվների (օր.՝ անձնական համակարգիչներ) և կարճաժամկետ (12 ամսից պակաս ժամկետով) վարձակալության պարագայում: Վարձակալության սկսվելու օրվանից վարձակալը պետք է ճանաչի պարտավորություն վարձավճարների գծով (վարձակալական պարտավորություն) և ակտիվ, որը ներկայացնում է վարձակալված ակտիվի օգտագործման իրավունքը վարձակալության ողջ ընթացքում (օր.՝ ակտիվի օգտագործման իրավունք): Վարձակալը պետք է առանձին ճանաչի վարձակալական պարտավորության գծով տոկոսային ծախսը և ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության ծախսը:

Վարձակալական պարտավորության չափը պետք է վերանայվի որոշակի իրադարձությունների ի հայտ գալու պարագայում (օր.՝ վարձակալության ժամանակահատվածի փոփոխություն, ապագա վարձավճարների փոփոխություն՝ կապված վարձավճարի չափի որոշման համար օգտագործվող ինդեքսի կամ դրույքի փոփոխության հետ): Վարձակալը հիմնականում կճանաչի վարձակալական պարտավորության վերաչափման գումարը՝ որպես ակտիվի օգտագործման իրավունքի ճշգրտում:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ո) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Վարձատուի հաշվառումը ըստ ՖՀՄՍ 16-ի զգալի փոփոխություններ չի կրել ՀՀՄՍ 17-ի համեմատ: Վարձատուները կշարունակեն դասակարգել վարձակալությունները նույն դասակարգման սկզբունքով, ինչ ՀՀՄՍ 17-ի դեպքում և կտարբերակեն երկու տեսակի վարձակալություն՝ գործառնական և ֆինանսական:

ՖՀՄՍ 16-ը գործում է 2019թ. սկսվող կամ հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար և պահանջում է վարձակալներին և վարձատուներին կատարել ավելի ընդարձակ բացահայտումներ, քան ՀՀՄՍ 17-ի դեպքում:

Բանկը նախատեսում է ՖՀՄՍ 16-ին անցումը իրականացնել հետընթաց մոտեցմամբ: Բանկը օգտագործման իրավունքը չափում է վարկային պարտավորությանը հավասար չափով, ճշգրտված վարձակալական վճարների կանխավճարների կամ հաշվեգրումների չափով՝ ճանաչված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում անմիջապես նախքան սկզբնական կիրառումը:

ՖՀՄՍ 16-ի կիրառման՝ նախնական գնահատված ազդեցությունը Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա հետևյալն է.

| | *1 հունվարի 2019թ. հազ. դրամ* |
|---|---|
| **Ակտիվներ** | |
| Հիմնական միջոցներ (օգտագործման իրավունքով ակտիվներ) | 11,036,594 |
| Այլ ակտիվներ (կանխավճարներ) | (760,685) |
| **Ընդամենը ակտիվներ** | **10,275,909** |
| **Պարտավորություններ** | |
| Այլ պարտավորություններ (վարձակալական պարտավորություն) | 10,275,909 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **10,275,909** |
| **Զուտ ազդեցությունը կապիտալի վրա** | **-** |

Բանկը կորոշի օգտագործել ստանդարտով առաջարկվող բացառությունները վարձակալական պայմանագրերի գծով, որոնց համար վարձակալության ժամկետը վերջանում է սկզբնական կիրառման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում, և վարձակալական պայմանագրերի գծով, որոնց հետ կապված ակտիվը ցածրարժեք է:

*ՖՀՄԿԿ մեկնաբանություն 23՝ «Անորոշություն շահութահարկի հաշվարկման կանոնների վերաբերյալ»*

Մեկնաբանությունը վերաբերում է շահութահարկի հաշվառմանը, երբ հարկի հաշվարկը պարունակում է անորոշություն, որն ազդում է ՀՀՄՍ 12-ի կիրառման վրա: Մեկնաբանությունը չի կիրառվում ՀՀՄՍ 12-ի շրջանակից դուրս հարկերի կամ հավաքագրումների վրա, ինչպես նաև չի պարունակում կոնկրետ պահանջներ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ կապված տուգանքների և տույժերի վերաբերյալ: Մեկնաբանությունը մասնավորապես վերաբերում է հետևյալին՝

- արդյոք կազմակերպությունը առանձին է հաշվի առնում անորոշ հարկային մեկնաբանություններ,
- կազմակերպության ենթադրությունները՝ կապված հարկային մարմինների կողմից հարկման մոտեցումների մեկնաբանությունների ստուգման հետ,
- ինչպես է կազմակերպությունը սահմանում հարկվող շահույթը (հարկային վնասը), հարկման բազան, չօգտագործված հարկային վնասները, չօգտագործված հարկային գերավճարները և հարկային դրույքաչափերը,
- ինչպես է կազմակերպությունը հաշվի առնում փաստերի և հանգամանքների փոփոխությունները:

Կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք յուրաքանչյուր անորոշ հարկային մոտեցում պետք է դիտարկել առանձին, թե մեկ կամ մի քանի այլ անորոշ հարկային մոտեցումների հետ միասին: Պետք է կիրառել այն մոտեցումը, որն ավելի լավ է կանխատեսում անորոշության հստակեցման արդյունքը:

Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2019 թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն գոյություն ունեն որոշակի անցումային պարզեցումներ: Բանկը կսկսի կիրառել մեկնաբանությունը գործողության մեջ մտնելու օրվանից: Քանի որ Բանկը գործում է բարդ հարկային միջավայրում, մեկնաբանության կիրառումը կարող է ազդել նրա ֆինանսական հաշվետվությունների վրա: Բացի այդ, Բանկին կարող է անհրաժեշտ լինել մշակել գործընթացներ և ընթացակարգեր տեղեկատվություն ստանալու համար, որն անհրաժեշտ է մեկնաբանությունը ժամանակին կիրառելու համար:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (ո) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

*Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում՝ վաղաժամկետ հատկանիշներ բացասական փոխհատուցմամբ*

ՖՀՄՍ 9-ի համաձայն, պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, պայմանով, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բացառապես մայր գումարի և չմարված գումարի վրա հաշվեգրված տոկոսագումարների վճարումներն են (SPPI չափանիշը), և գործիքը ենթադրում է տվյալ դասակարգման համար համապատասխան բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները հստակեցնում են, որ ֆինանսական ակտիվը անցնում է SPPI չափանիշով, անկախ իրադարձությունից կամ հանգամանքից, որը հանգեցնում է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման և անկախ նրանից, թե որ կողմն է վճարում կամ ստանում ողջամիտ տուհատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից և պետք է կիրառվեն հետընթաց մոտեցմամբ, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Փոփոխությունները ազդեցություն չունեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Տարեկան բարեփոխումներ 2015-2017 շրջան (թողարկված 2017 թվականի դեկտեմբերին)***

Այս բարեփոխումները ներառում են՝

*ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»*

Փոփոխությունները հստակեցնում են, որ երբ կազմակերպությունը վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ, այն կիրառվում է փուլերով ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության միավորման պահանջները, ներառյալ համատեղ գործունեության ակտիվներում և պարտավորություններում նախկինում ունեցած մասնակցության վերաչափումը իրական արժեքով: Այդպիսով, ձեռք բերողը վերաչափում է համատեղ գործունեությունում նախկինում ունեցած ամբողջ մասնակցությունը:

Կազմակերպությունը փոփոխությունները կիրառում է այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների համար, որոնց դեպքում ձեռք բերումը տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող առաջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Այս փոփոխություններն կկիրառվեն Բանկի հետագա ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ:

*ՖՀՄՍ 11 «Համատեղ պայմանավորվածություններ»*

Մասնակցող կողմերից մեկը, որը սակայն համատեղ վերահսկողություն չունի համատեղ գործունեության նկատմամբ, կարող է վերահսկողություն ստանալ համատեղ գործունեության նկատմամբ, որտեղ համատեղ գործունեությունը համարվում է որպես ձեռնարկատիրական գործունեություն համաձայն ՖՀՄՍ 3-ի: Փոփոխությունները հստակեցնում են, որ համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցությունը չի վերաչափվում:

Կազմակերպությունը փոփոխությունները կիրառում է այն գործարքների համար, որոնց դեպքում համատեղ վերահսկողությունը ստանում է 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող առաջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Այս փոփոխությունները ներկայումս կիրառելի չեն Բանկի համար, սակայն կարող են կիրառվել հետագա գործարքների դեպքում:

*ՀՀՄՍ 12 «Շահութահարկ»*

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ շահութահարկի գծով շահաբաժիններ հետևանքները ուղղակիորեն կապված են բաշխման ենթակա շահույթ սկզբնավորող գործարքների կամ իրադարձությունների, և ոչ թե սեփականատերերին բաշխված շահույթի հետ : Հետևաբար, կազմակերպությունը շահութահարկի գծով շահաբաժինների բոլոր հետևանքները ճանաչում է շահույթում կամ վնասում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալում, կախված այն հանգամանքից, թե որտեղ են ի սկզբանե ճանաչվել տվյալ գործարքները կամ հրադարձությունները:

Կազմակերպությունը կիրառում է այս փոփոխությունները 2019թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Երբ Կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է այս փոփոխությունները, դրանք կիրառում է այն շահաբաժինների շահութահարկային հետևանքների նկատմամբ, որը ճանաչել է ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Քանի որ Բանկի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է փոփոխությանը, Բանկը չի ակնկալում էական ազդեցություն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփում (շարունակություն)

### (n) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

*ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ»*

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ Կազմակերպությունը ընդհանուր փոխառությունների մեջ է ներառում այն փոխառությունը, որն ի սկզբանե ձեռք է բերվել որակավորվող ակտիվը զարգացնելու նպատակով, երբ ակտիվը օգտագործման կամ վաճառքի համար պատրաստելու աշխատանքները մեծ մասամբ ավարտված են:

Կազմակերպությունը կիրառում է փոփոխությունները այն փոխառության ծախսումների նկատմամբ, որոնք կրել է տվյալ տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, որի ընթացքում Կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է այդ փոփոխությունները: Կազմակերպությունը կիրառում է այս փոփոխությունները 2019 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Քանի որ Բանկը ընթացիկ մոտեցումը համապատասխանում է փոփոխությանը, Բանկը չի ակնկալում էական ազդեցություն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 4. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով և հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա, Բանկը բաժանվում է հետևյալ երեք սեգմենտների.

| | |
|---|---|
| Մանրածախ բանկային գործունեություն | Ֆիզիկական անձանց և փոքր ու միջին ձեռնարկությունների ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում, փոքր և միկրո վարկեր: |
| Կորպորատիվ բանկային գործունեություն | Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում: |
| Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն | Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառույթներ: |

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Շահութաբաժինը կառավարվում է նախքան շահութաբաժինը շահույթի հիման վրա և բաշխվում է գործառնական սեգմենտների մեջ:

Գործառնական սեգմենտների միջև ներքին փոխանցումների գները համապատասխանում են շուկայական պայմաններին, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում:

2018 և 2017թթ. ընթացքում արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Բանկի ընդհանուր եկամտի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Բանկի գործառնական սեգմենտների գծով եկամուտ և շահույթի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն.

| *2018թ.* | *Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ* | *Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ* | *Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ* | *Ընդամենը հազ. դրամ* |
|---|---|---|---|---|
| Զուտ տոկոսային եկամուտ | 1,382,860 | 21,223,002 | 4,725,209 | 27,331,071 |
| Զուտ ոչ տոկոսային եկամուտ | 1,438,143 | 3,435,683 | 4,577,401 | 9,451,227 |
| Միջսեգմենտային եկամուտ | 12,266,116 | (8,441,826) | (3,824,290) | – |
| **Գործառնական շահույթ** | **15,087,119** | **16,216,859** | **5,478,320** | **36,782,298** |
| Վարկային կորուստների գծով ծախս | (2,425,331) | (6,797,680) | (157,954) | **(9,380,965)** |
| Այլ արժեզրկում | – | (22,749) | – | **(22,749)** |
| Աշխատավարձ և ամորտիզացիա | (985,576) | (160,440) | (83,337) | **(1,229,353)** |
| Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր | (8,327,863) | (3,015,020) | (1,482,380) | **(12,825,263)** |
| **Շահույթ մինչև շահութահարկ** | **3,348,409** | **6,220,970** | **3,754,589** | **13,323,968** |
| Շահութահարկի գծով ծախս | (709,069) | (1,283,923) | (828,532) | **(2,821,524)** |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **2,639,340** | **4,937,047** | **2,926,057** | **10,502,444** |

## 4. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

| 2018թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ | 118,651,578 | 445,244,596 | 66,142,737 | **630,038,911** |
| Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ | 280,388,443 | 377,860,540 | 22,638,025 | **680,887,008** |

Տոկոսաբեր ակտիվները ներառում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և ամորտիզացված արժեքով պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդներն ու մնացորդները (բացառությամբ ոստրո հաշիվների, հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառություններն ու ստորադաս փոխառությունները:

| 2017թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Զուտ տոկոսային եկամուտ (ծախս) | (2,737,694) | 16,375,403 | 4,726,600 | **18,364,309** |
| Զուտ ոչ տոկոսային եկամուտ | 1,482,223 | 2,833,507 | 3,000,275 | **7,316,005** |
| Միջսեգմենտային եկամուտ | 12,066,784 | (8,034,602) | (4,032,182) | **–** |
| **Գործառնական շահույթ** | **10,811,313** | **11,174,308** | **3,694,693** | **25,680,314** |
| Արժեզրկումից կորուստներ | (703,438) | (5,108,206) | – | **(5,811,644)** |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (647,915) | (108,856) | (111,072) | **(867,843)** |
| Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր | (5,941,305) | (2,356,313) | (1,166,513) | **(9,464,131)** |
| **Շահույթ մինչև շահութահարկ** | **3,518,655** | **3,600,933** | **2,417,108** | **9,536,696** |
| Շահութահարկի գծով ծախս | (696,119) | (712,397) | (478,193) | **(1,886,709)** |
| **Հաշվետու տարվա շահույթ** | **2,822,536** | **2,888,536** | **1,938,915** | **7,649,987** |

| 2017թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ | 78,557,262 | 412,689,748 | 74,240,375 | **565,487,385** |
| Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ | 248,023,707 | 335,400,570 | 17,535,534 | **600,959,811** |

Տոկոսաբեր ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերն և փոխառությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը, ակրեդիտիվների, ֆինանսական վարձակալության, ֆակտորինգի գծով ստացվելիք համախառն գումարները և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները:

Տոկոսակիր պարտավորությունները ներառում են բանկերի ավանդներն ու մնացորդները (բացառությամբ ոստրո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները, այլ փոխառություններն ու ստորադաս փոխառությունները:

### Աշխարհագրական տեղեկատվություն

Բանկն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Բացի ֆինանսական գործիքներից, Բանկը չունի ՀՀ-ից տարածքից դուրս այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

## 4. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

### Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթի բացվածքն ըստ սեգմենտների 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար ներկայացված է ստորև՝

EAD — *Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը* դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:

LGD — *Դեֆոլտի դեպքում կրճատի չափը* դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործոքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Բանկը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1: — Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնադրամը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

Փուլ 2: — Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Բանկը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

Փուլ 3: — Ակտիվը համարվում է արժեզրկված: Բանկը ձևակերպում է ԱԿԱՎԿ պահուստ:

POCI — Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

***Դեֆոլտի սահմանումը***

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ, և հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 90 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը: Բանկը բանկերին տրված միջոցները համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերները հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ չի վճարել հաշվեգրված տոկոսները (արժեկտրոնները) և/կամ հիմնական գումարը ավելի քան 10 աշխատանքային օր:

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Բանկը նաև դիտարկում է տարատեսակ դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անկարողականության մասին: Նման դեպքեր տեղի ունենալիս, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք տվյալ դեպքը արդյունքում հաճախորդը պետք է ճանաչվի անվճարունակ և դասակարգվի Փուլ 3-ում ԱՎԿ հաշվարկների նպատակով, թե պատշաճ է Փուլ 2-ի կիրառումը:

***Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը***

*Պահառուական և միջբանկային հարաբերություններ*

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները որենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Բանկը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները

*Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ*

Խմբավորում

Հաճախորդներին տրված վարկերի, որոնք պատկանում են Փուլ 1-ին և Փուլ 2-ին, ինչպես նաև անհատապես ոչ էական Փուլ 3-ին պատկանող վարկերի համար, Բանկը հաշվարկում է ԱՎԿ պորտֆելի մակարդակով: Բանկն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները.

- կորպորատիվ վարկեր,
- սպառողական վարկեր,
- հիփոթեքային վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության միգրացիայի մատրիցներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հաշվանականությունները հաշվարկվում են որպես ժամկետանց կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուրի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա:

***Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը***

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ պարտավորությունների վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Բանկը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Փուլ 3-ին և POCI-ի դասին պատկանող ֆինանսական ակտիվների գծով դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը հավասար է այդ վարկերի հաշվեկշռային արժեքներին:

EAD-ը ստացվում է նախքան դեֆոլտի տեղի ունենալու ամսաթիվը դեֆոլտ ունեցող վարկերի ամորտիզացված արժեքի վերաբերյալ պատմական տվյալների վրա:

***Դեֆոլտի ժամանակ կորստի չափը***

Բանկն դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր վարկի գծով : Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

*Վարկային ռիսկի զգալի աճ*

Բանկը սահմանել է քաղաքականություն՝ ընդհատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր: Բանկը որպես հիմնական հայտանիշ է օգտագործում վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը նաև առաջնորդվում է հետևյալ գործոններով՝

- ՀՀ այլ ֆինանսական հաստատություններում տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը,
- վարկառուի ֆինանսական դժվարությունները,
- վարկառուի ֆինանսական դժվարությունների վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումը,
- մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացումը և դրանց հնարավոր ազդեցությունը վարկառուի ֆինանսական արդյունքների վրա:

*Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ*

ԱՎԿ մոդելներում Բանկը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ՍԳԻ ինդեքս,
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք,
- ՌԴ ռուբլի /ՀՀ դրամ փոխարժեք,
- արտահանման ծավալներ,
- ներմուծման ծավալներ:

Կանխատեսվող տեղեկատվությունը Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից և ԱՄՀ-ի Համաշխարհային տնտեսության հեռանկարների տվյալների բազայից): Բանկի վարկային ռիսկի բաժնի փորձագետները գնահատում են տարբեր սցենարների տվյալների կշիռները: Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված կանխատեսվող տնտեսական փոփոխականները/ցուցանիշները՝ ըստ տարբեր տնտեսական սցենարների, որոնց հիման վրա հաշվարկվում ԱՎԿ-ն:

| Հիմնական գործոնները | ԱՎԿ սցենարը | Որոշված հավանականությունը, % | 2019թ. | 2020թ. |
|---|---|---|---|---|
| ՍԳԻ ԻՆԴԵՔՍ | | | | |
| | Լավատեսական | 20% | 101.251 | 100.653 |
| | Բազային | 60% | 104.446 | 103.848 |
| | Վատատեսական | 20% | 107.641 | 107.043 |
| ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք | | | | |
| | Լավատեսական | 20% | 443.0428 | 453.4428 |
| | Բազային | 60% | 490.0000 | 500.4000 |
| | Վատատեսական | 20% | 536.9572 | 547.3572 |
| ԱՄՆ դոլար/ՌԴ ռուբլի փոխարժեք | | | | |
| | Լավատեսական | 20% | 9.7833 | 9.7733 |
| | Բազային | 60% | 7.3200 | 7.3100 |
| | Վատատեսական | 20% | 4.8567 | 4.8467 |
| Արտահանում, մլն ՀՀ դրամ | | | | |
| | Լավատեսական | 20% | 2,959.75 | 2,970.75 |
| | Բազային | 60% | 2,605.00 | 2,616.00 |
| | Վատատեսական | 20% | 2,250.25 | 2,261.25 |
| Ներմուծում, մլն ՀՀ դրամ | | | | |
| | Լավատեսական | 20% | 5,902.73 | 6,173.76 |
| | Բազային | 60% | 5,423.54 | 5,694.56 |
| | Վատատեսական | 20% | 4,944.34 | 5,215.38 |

Բազային կանխատեսումների հետ մեկտեղ (60% հավանականություն) Բանկը նաև օգտագործում է ցնցումային տնտեսական փոփոխականներ, ԱՎԿ ցուցանիշների հաշվարկը լավատեսական (20% հավանականություն) և վատատեսական (20% հավանականություն) սցենարներով գնահատելու համար: Այս ցուցանիշները կշռվում են բազային սցենարի ցուցանիշների հետ և ճշտավորվում է ԱՎԿ վերջնական ցուցանիշը:

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

*Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն*

Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների որակական վերլուծություն կատարելիս Բանկն առաջնորդվում է արտաքին վարկանիշերով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ակտիվի դասի վարկային որակը՝ ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վարկային տողերի, հիմք ընդունելով արտաքին վարկանիշային գնահատականները: Վարկերի որակական վերլուծությունը հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով, ներկայացված է Ծանոթագրություն 20-ում: Չվարկանշված վարկերը դասակարգվում են ստանդարտ դասի, եթե դրանք արժեզրկված չեն.

| | Ծան. | | Բարձր դաս հազ. դրամ | Ստանդարտ դաս հազ. դրամ | Ստանդարտից ցածր դաս հազ. դրամ | Արժեզրկված հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 18 | Փուլ 1 | 1,422,722 | 3,529,310 | – | – | **4,952,032** |
| | | Փուլ 2 | – | – | – | – | **–** |
| | | Փուլ 3 | – | – | – | 60,652 | **60,652** |
| Հետգնման պայմանագրերով ստացման ենթակա գումարներ | 19 | Փուլ 1 | – | 6,746,414 | – | – | **6,746,414** |
| Պարտքային ներդրումային արժեթղթեր | | | | | | | |
| - Իրական արժեքով՝ այլ համապարուսակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող | 17 | Փուլ 1 | 758,160 | 10,704,823 | – | – | **11,462,983** |
| - Ամորտիզացված արժեքով չափվող | 21 | Փուլ 1 | – | 39,264,170 | – | – | **39,264,170** |
| **Ընդամենը** | | | **2,180,882** | **60,244,717** | **–** | **60,652** | **62,486,251** |

Ստորև ներկայացված է Բանկի դասակարգման համակարգի և գործընկերների դասակարգման համակարգի համեմատությունը

| *Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ* | *Ներքին վարկանիշ* | *Դեֆոլտի հավանականություն* |
|---|---|---|
| Aaa-ից A3 | Բարձր դաս | 0-0.1% |
| Baa1-ից B3 | Ստանդարտ դաս | 0.1-5% |
| Caa1-ից Ca | Ստանդարտից ցածր դաս | 5%-35% |
| C | Արժեզրկված | 100% |

***Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում***

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՝ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ հաշվանցման պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխառության գլոբալ գլխավոր պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են շուկայում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության պատճառով:

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (գ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմաններին: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի համ պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ անկացման դեպքում: Բացի այդ, Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարդը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *հազ. դրամ* | *Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվություններում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվություններում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար* | *Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում չհաշվանցված գումարներ* | | *Զուտ գումար* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | *Ֆինանսական գործիքներ* | | |
| **Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ** | | | | | | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,746,414 | – | 6,746,414 | (6,746,414) | | – |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **6,746,414** | **–** | **6,746,414** | **(6,746,414)** | | **–** |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (17,011,404) | – | (17,011,404) | (17,011,404) | | – |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(17,011,404)** | **–** | **(17,011,404)** | **(17,011,404)** | | **–** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| *հազ. դրամ* | *Ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվություններում հաշվանցված ճանաչված ֆինանսական ակտիվի/պարտավորության համախառն գումար* | *Ֆին. վիճակի մասին հաշվետվություններում ներկայացված ֆինանսական ակտիվի/պարտավորությունների զուտ գումար* | *Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում չհաշվանցված գումարներ* | | *Զուտ գումար* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | *Ֆինանսական գործիքներ* | | |
| **Ֆինանսական Ակտիվների/ պարտավորությունների տեսակներ** | | | | | | |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 8,675,394 | – | 8,675,394 | (8,675,394) | | – |
| **Ընդամենը Ֆինանսական ակտիվներ** | **8,675,394** | **–** | **8,675,394** | **(8,675,394)** | | **–** |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (6,121,693) | – | (6,121,693) | 5,968,305 | | (153,388) |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(6,121,693)** | **–** | **(6,121,693)** | **5,968,305** | | **(153,388)** |

Վերը նշված աղյուսակում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված այն պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և լայն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց ավանդները. ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտավորությունների ֆինանսավորման ծրագրերի վարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատության ծրագրերի ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրային նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության ծրով՝ շուկայի յուրահատուկ և ավելի խիստ պայմանների ենթադրության կիրառմամբ: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները ընդունում է ԱՊԿԿ-ն, իսկ Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը իրականացնում է դրանք:

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա:

Բացառություն են կազմում համախառն մարվող ածանցյալ գործիքները, որոնք ներկայացված են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Բանկը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և ներկայացված չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Բանկի՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Ավելի քան 5 տարի | Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 12,893,988 | 7,048,159 | 7,088,445 | 6,888,068 | 10,129,111 | 2,022,806 | 46,070,577 | 43,076,769 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 17,011,404 | – | – | – | – | – | 17,011,404 | 17,011,404 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 132,004,427 | 52,853,293 | 57,320,798 | 98,873,247 | 65,516,061 | 83,553 | 406,631,289 | 399,086,132 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 358,847 | 3,240,139 | 7,862,077 | 7,600,720 | 37,289,828 | – | 56,321,671 | 50,846,356 |
| Ստորադաս փոխառություններ | 1,549,562 | 1,154,356 | 1,094,713 | 2,156,604 | 49,767,027 | 9,250,207 | 64,972,469 | 50,414,125 |
| Այլ փոխառություններ | 3,989,012 | 5,824,439 | 13,739,728 | 9,706,765 | 103,060,455 | 14,813 | 136,335,272 | 120,913,209 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 461,232 | 3,880,637 | 3,051,943 | – | – | – | 7,393,812 | 7,393,812 |
| Ըստ մարվող ածանցյալ պարտավորություններ | 20,621 | – | – | – | – | – | 20,621 | 20,621 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | 168,289,093 | 73,951,053 | 90,157,704 | 125,225,404 | 265,762,482 | 11,371,379 | 734,757,115 | 688,762,428 |
| **Վարկային պարտավորվածություններ** | 43,517,152 | – | – | – | – | – | 43,517,152 | 43,517,152 |

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | Ավելի քան 1 տարի | Ավելի քան 5 տարի | Արտահոսքի/ (ներհոսքի) ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռային արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 10,905,360 | 677,271 | 10,493,349 | 10,083,331 | 9,401,436 | 1,515,481 | 43,076,228 | 40,004,001 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ | 6,121,693 | – | – | – | – | – | 6,121,693 | 6,121,693 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 76,528,416 | 57,389,681 | 69,099,404 | 76,715,037 | 109,446,144 | 91,239 | 389,269,921 | 375,170,779 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 396,789 | 557,928 | 599,124 | 10,660,872 | 32,697,239 | – | 44,911,952 | 40,932,595 |
| Ստորադաս փոխառություններ | 1,341,759 | 955,647 | 839,812 | 1,679,624 | 48,369,135 | – | 53,185,947 | 40,919,768 |
| Այլ փոխառություններ | 1,696,247 | 9,992,480 | 3,953,724 | 24,794,550 | 70,892,191 | 6,853,935 | 118,183,127 | 98,128,094 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 967,739 | 111,902 | 2,751,256 | – | – | – | 3,830,897 | 3,830,897 |
| Ըստ մարվող ածանցյալ պարտավորություններ | 74,877 | – | – | – | – | – | 74,877 | 74,877 |
| **Համախառն մարվող ածանցյալ ֆինանսական գործիքներ** | | | | | | | | |
| -Վճարելիք պայմանագրային գումարներ | – | (54,473,593) | – | – | – | – | (54,473,593) | (611,429) |
| -Ստացելիք պայմանագրային գումարներ | – | 54,480,970 | – | – | – | – | 54,480,970 | 484,540 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | 98,032,880 | 63,982,256 | 87,736,669 | 123,933,414 | 270,806,145 | 8,460,655 | 658,662,019 | 605,055,815 |
| **Վարկային պարտավորվածություններ** | 42,899,097 | – | – | – | – | – | 42,899,097 | 42,899,097 |

Վերոնշյալ և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցների մեջ ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձիք կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

| *հազ. դրամ* | *Ցպահանջ և մինչև 1 ամիս* | *1-ից 3 ամիս* | *3-ից 12 ամիս* | *1-ից 5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Անժամկետ* | *Ժամկետանց* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 144,353,912 | – | – | – | – | – | – | **144,353,912** |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 323,197 | 139,695 | 328,036 | 3,058,640 | 2,967,442 | – | – | **6,817,010** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 88,864 | 155,750 | 282,669 | 5,541,529 | 5,394,171 | 139,145 | – | **11,602,128** |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 3,255,612 | – | – | – | – | 1,691,000 | – | **4,946,612** |
| Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,746,414 | – | – | – | – | – | – | **6,746,414** |
| Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր | 26,971,795 | 23,059,924 | 121,233,307 | 242,571,649 | 106,226,222 | – | 6,901,292 | **526,964,189** |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 43,322 | 187,342 | 5,647,337 | 2,390,538 | – | – | – | **8,268,539** |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 41,031 | 71,111 | 310,303 | 902,485 | 436,361 | – | 172,915 | **2,024,206** |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 430,846 | 2,833,607 | 7,421,796 | – | – | – | – | **10,686,249** |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային այլ ակտիվներ | 353,763 | 592,527 | 5,620,577 | 29,066,323 | 3,192,773 | | | **38,825,463** |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | – | – | – | – | – | 10,240,337 | – | **10,240,337** |
| Հետաձգված հարկային ակտիվներ | – | – | – | 185,898 | – | – | – | **185,898** |
| Այլ ակտիվներ | 2,375,790 | 2,777,413 | 2,008,052 | | | 926,015 | – | **8,086,270** |
| **Ընդամենը ակտիվներ** | **184,984,046** | **29,817,369** | **142,852,077** | **283,807,062** | **118,216,969** | **12,995,497** | **7,074,207** | **779,747,227** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 20,621 | – | – | – | – | – | – | **20,621** |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 17,011,404 | – | – | – | – | – | – | **17,011,404** |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 12,798,545 | 6,887,130 | 13,430,651 | 8,556,905 | 1,403,538 | – | – | **43,076,769** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 131,252,194 | 51,539,948 | 152,505,404 | 63,718,571 | 70,015 | – | – | **399,086,132** |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 111,320 | 2,606,535 | 13,759,546 | 34,270,946 | – | – | – | **50,846,356** |
| Ստորադաս փոխառություններ | 1,190,128 | 435,488 | 16,411 | 39,521,888 | 9,250,210 | – | – | **50,414,125** |
| Այլ փոխառություններ | 3,465,015 | 8,061,402 | 16,176,215 | 93,195,761 | 14,816 | – | – | **120,913,209** |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | – | – | 1,086,688 | | | | | **1,086,688** |
| Վարկային պարտավորվածությունների գծով պահուստ | 140,163 | – | – | – | – | – | – | 140,163 |
| Այլ պարտավորություններ | 461,232 | 3,880,637 | 3,051,943 | – | – | – | – | **7,393,812** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **166,450,631** | **73,501,140** | **200,026,858** | **239,272,071** | **10,738,579** | **–** | | **689,989,279** |
| **Զուտ դիրքը** | **18,533,415** | **(43,683,771)** | **(57,174,781)** | **44,534,991** | **107,478,390** | **12,995,497** | **7,074,207** | **89,757,948** |
| **Կուտակային զուտ դիրքը** | **18,533,415** | **(25,150,356)** | **(82,325,137)** | **(37,790,146)** | **69,688,244** | | | |

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (դ) Վարկային ռիսկ (շարունակություն)

Վերը ներկայացված աղյուսակում առկա մարման վերլուծությունը չի արտացոլում ժամկետային ավանդների, ինչպես նաև վարկերի պատմական վարքագիծը և փաստացի մարումների ծավալը: Հիմնվելով նախկին փորձի ուսումնասիրության վրա, ընդհանուր ժամկետային ավանդների 50% -ը, որոնց մարման ժամկետը 1 տարի կամ պակաս է, երկարաձգվում է, այդ իսկ պատճառով դրանք մարման ժամկետը մեկ տարուց ավել է : Աղյուսակում այդ մնացորդները ներառված են 1 տարուց պակաս ժամկետայնություն ունեցող պարտավորությունների մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո Բանկը ներգրավել է երկարաժամկետ փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից 12,500 հազար ԱՄՆ դոլար արժեքով (համարժեք 6,046,875 հազար ՀՀ դրամ ուղղակի հաշվարկված դրամ/դոլար փոխարժեքով)):

Վերը նշված և ստորև նշված աղյուսակներում ներառված հաճախորդներին վերաբերվող մասը ներառում է անհատների ավանդներ: ՀՀ օրենսդրության համաձայն բանկը պարտավորվում է անհատների ավանդները վերադարձնել անհատների պահանջով (եթե ավանդատուն ժամկետից շուտ պահանջում է ավանդի ետ ստացում, նա կորցնում է ավանդի վրա հաշվեգրված տոկոսը): Ավանդները դասակարգված են ստորև ներկայացված աղյուսակում ըստ մարման ժամկետների:

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների՝

| *հազ. դրամ* | *Պահանջ և մինչև 1 ամիս* | *1-ից 3 ամիս* | *3-ից 12 ամիս* | *1-ից 5 տարի* | *Ավելի քան 5 տարի* | *Անժամկետ* | *Ժամկետանց* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 107,616,368 | – | – | – | – | – | – | 107,616,368 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 116,092 | 836,773 | 5,190 | 2,598,278 | 411,731 | – | – | 3,968,064 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 26,735 | 53,087 | 229,570 | 5,553,955 | 3,918,271 | 106,460 | – | 9,888,078 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 8,727,521 | 12,177 | 197,203 | 419,555 | – | 1,486,434 | – | 10,842,890 |
| Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 8,675,394 | – | – | – | – | – | – | 8,675,394 |
| Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկեր | 16,472,285 | 24,890,862 | 61,554,619 | 253,415,202 | 101,700,101 | – | 9,277,662 | 467,310,731 |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 63,936 | 474,941 | 2,732,786 | 849,826 | – | – | – | 4,121,489 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 33,729 | 46,840 | 230,635 | 363,572 | 499,991 | – | 295,257 | 1,470,024 |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 1,605,775 | 3,506,579 | 1,626,383 | – | – | – | – | 6,738,737 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | 250,184 | 3,726,470 | 6,283,038 | 30,779,160 | 2,266,983 | – | – | 43,305,844 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | – | – | – | – | – | 7,126,916 | – | 7,126,916 |
| Այլ ակտիվներ | 1,649,866 | 677,400 | 3,442,533 | – | – | 887,763 | – | 6,657,562 |
| **Ընդամենը ակտիվներ** | **145,237,885** | **34,225,129** | **76,301,957** | **293,979,557** | **108,797,077** | **9,607,573** | **9,572,919** | **677,722,097** |
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 74,877 | 611,429 | – | – | – | – | – | 686,306 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 6,121,693 | – | – | – | – | – | – | 6,121,693 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 10,813,773 | 501,682 | 20,022,450 | 7,566,112 | 1,099,984 | – | – | 40,004,001 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 75,395,507 | 55,390,566 | 139,347,562 | 104,963,837 | 73,307 | – | – | 375,170,779 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 197,081 | 158,512 | 9,768,530 | 30,808,472 | – | – | – | 40,932,595 |
| Ստորադաս փոխառություններ | 1,061,822 | 395,743 | – | 39,462,203 | – | – | – | 40,919,768 |
| Այլ փոխառություններ | 1,176,595 | 8,990,221 | 24,365,684 | 57,684,363 | 5,911,231 | – | – | 98,128,094 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | – | – | 990,256 | – | – | – | – | 990,256 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | – | – | – | 1,025,103 | – | – | – | 1,025,103 |
| Այլ պարտավորություններ | 967,739 | 111,902 | 2,761,990 | – | – | – | – | 3,841,631 |
| **Ընդամենը ակտիվներ** | **95,809,087** | **66,160,055** | **197,256,472** | **241,510,090** | **7,084,522** | **–** | **–** | **607,820,226** |
| **Զուտ դիրքը** | **49,428,798** | **(31,934,926)** | **(120,954,515)** | **52,469,467** | **101,712,555** | **9,607,573** | **9,572,919** | **69,901,871** |
| **Կուտակային զուտ դիրքը** | **49,428,798** | **17,493,872** | **(103,460,643)** | **(50,991,176)** | **50,721,379** | | | |

## 31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

### (դ) Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը և այն նորպրոդուտով պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն, և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները:

Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ և տարվա ընթացքում.

| | *2018թ. հազ. դրամ* | *2017թ. հազ. դրամ* |
|---|---|---|
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 89% | 128% |
| Դեկտեմբերի ամսվա միջին ցուցանիշ | 79% | 133% |

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանափակումների հետ համապատասխանությունը որոշելու համար (ոչ պակաս, քան 60%):

## 32. Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել Բանկի՝ կապիտալի վերաբերյալ արտաքին պահանջներին համապատասխանությունը և, որ Բանկը պահպանում է բարձր վարկային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանը աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը պահպանելու կամ դրա մեջ ճշգրտումներ մտցնելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Նախկին տարիների համեմատությամբ ոչ մի փոփոխություն չի եղել կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում և ընթացակարգերում:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված նվազագույնին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *2018թ. հազ. դրամ* | *2017թ. հազ. դրամ* |
|---|---|---|
| 1-ին դասի կապիտալ | 87,918,917 | 68,632,980 |
| 2-րդ դասի կապիտալ | 27,240,435 | 26,738,055 |
| **Ընդհանուր կապիտալ** | **115,159,352** | **95,371,035** |
| **Ընդամենը ռիսկերով կշռված ակտիվներ** | **637,670,106** | **534,420,563** |
| **Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդհանուր կապիտալի գործակից)** | **18.06%** | **17.85%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

## 33. Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Դրանք իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրման պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի: Բանկը նաև տրամադրում է երաշխիքներ՝ գործելով որպես գործակալ արժեթղթերի փոխառության և վարկավորման գործառնություններում:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման ժամանակ Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք կիրառվում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

| | *2018թ. հազ. դրամ* | *2017թ. հազ. դրամ* |
|---|---|---|
| **Պայմանագրային գումար** | | |
| Վարկերի և վարկային գծերի մասով ստանձնած պարտավորվածություններ | 18,237,090 | 19,807,875 |
| Վարկային քարտերի մասով ստանձնած պարտավորվածություններ | 13,602,109 | 9,245,979 |
| Ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ | 5,542,370 | 5,812,810 |
| Ոչ ֆինանսական երաշխիքներ | 2,362,080 | 2,370,848 |
| Չօգտագործված օվերդրաֆտներ | 3,773,503 | 5,661,585 |
| | **43,517,152** | **42,899,097** |
| **Արժեզրկման պահուստ** | **(140,163)** | **–** |
| **Ակրեդիտիվների դիմաց որպես երաշխիք պահվող ապահովություններ** | **90,379** | **77,158** |

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ենթարկելը:

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

| *Երաշխիքներ և ակրեդիտիվներ* | *Փուլ 1 հազ. դրամ* | *Փուլ 2 հազ. դրամ* | *Փուլ 3 հազ. դրամ* | *Ընդամենը հազ. դրամ* |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ** | **20,556** | **7,347** | **77,174** | **105,077** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 18,713 | – | – | **18,713** |
| Սպառված ժամկետով վարկեր | (19,587) | (7,347) | – | **(26,934)** |
| Դուրսգրումներ | – | – | (77,173) | **(77,173)** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (1,260) | – | – | **(1,260)** |
| **2018թ. դեկտեմբերի 31-ին** | **18,422** | **–** | **1** | **18,423** |

| *Վարկերի և վարկային գծերի մասով ստանձնած պարտավորվածություններ* | *Փուլ 1 հազ. դրամ* | *Փուլ 2 հազ. դրամ* | *Փուլ 3 հազ. դրամ* | *Ընդամենը հազ. դրամ* |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ** | **107,025** | **9,695** | **440** | **117,160** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 39,173 | – | – | **39,173** |
| Սպառված ժամկետով վարկեր | (31,353) | (9,695) | (440) | **(41,488)** |
| Տեղափոխում Փուլ 2 | (14,002) | 14,002 | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | – | (14,002) | 14,002 | **–** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (30,375) | – | – | **(30,375)** |
| Դուրսգրումներ և վերականգնումներ | – | – | – | **–** |
| **2018թ. դեկտեմբերի 31-ին** | **70,468** | **–** | **14,002** | **84,470** |

## 33. Վարկային պարտավորվածություններ (շարունակություն)

| *Վարկային քարտերի մասով ստանձնած պարտավորվածություններ* | *Փուլ 1 հազ. դրամ* | *Փուլ 2 հազ. դրամ* | *Փուլ 3 հազ. դրամ* | *Ընդամենը հազ. դրամ* |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ** | **18,516** | **40** | **5,570** | **24,126** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 13,055 | – | – | **13,055** |
| Մարված ակտիվներ | (8,441) | (40) | (5,570) | **(14,051)** |
| Տեղափոխում Փուլ 2 | (380) | 380 | – | **–** |
| Տեղափոխում Փուլ 3 | – | (326) | 326 | **–** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (2,309) | – | – | **(2,309)** |
| **2018թ. դեկտեմբերի 31-ին** | **20,441** | **54** | **326** | **20,821** |

| *Չօգտագործված օվերդրաֆտներ* | *Փուլ 1 հազ. դրամ* | *Փուլ 2 հազ. դրամ* | *Փուլ 3 հազ. դրամ* | *Ընդամենը հազ. դրամ* |
|---|---|---|---|---|
| **ԱՎԿ պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ** | **14,611** | **–** | **1,311** | **15,922** |
| Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | 9,573 | – | – | **9,573** |
| Մարված ակտիվներ | (7,125) | – | (1,311) | **(8,436)** |
| Տեղափոխում Փուլ 2 | (5,701) | 5,701 | – | **–** |
| ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն | (610) | – | – | **(610)** |
| **2018թ. դեկտեմբերի 31-ին** | **10,748** | **5,701** | **–** | **16,449** |

## 34. Գործառնական վարձակալություն

### (ա) Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չխզվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են՝

| | *2018թ. հազ. դրամ* | *2017թ. հազ. դրամ* |
|---|---|---|
| Մինչև մեկ տարի ժամկետով | 1,357,685 | 1,419,525 |
| Մեկից հինգ տարի ժամկետով | 1,121,854 | 1,285,131 |
| Ավելի քան հինգ տարի ժամկետով | 283,497 | 361,451 |
| | **2,763,036** | **3,066,107** |

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարները սովորաբար ճարհատվում են տարեկան կտրվածքով՝ շուկայական դրույքներին համապատասխանելու համար: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալությունը ներառում է կապակցված կողմի հանդեպ վարձակալություն, որը կազմում է 357,734 հազար ՀՀ դրամ և ենթակա չէ չեղարկման (2017թ.՝ 757,215 հազար ՀՀ դրամ):

## 35. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

### (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ապահովագրված է մինչև 6,875,483 հազար ՀՀ դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և տրանսպորտային միջոցների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից:

### (բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա Ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

### (գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության՝ խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական ռարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանության գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններն այդպիսի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 36. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Ամերիա Գրուպ (Սի-Ըուայ) Լոմիթիդ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 56.6% 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Բանկի վերջնական վերահսկող անձը պարոն Ռուբեն Վարդանյանն է:

Մայր կազմակերպությունը չի ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

## 36. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

### (բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *2018թ. հազ. դրամ* | *2017թ. հազ. դրամ* |
|---|---|---|
| Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին | 2,157,647 | 1,972,902 |

Ստորև ներկայացված են 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

| | *2018թ. հազ. դրամ* | *Միջին տոկոսադրույք, %* | *2017թ. հազ. դրամ* | *Միջին տոկոսադրույք, %* |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | |
| Տրված վարկեր | 1,273,721 | 7.79% | 1,253,917 | 8.02% |
| Այլ ակտիվներ | 1,832 | 0.00% | 1,893 | 0.00% |
| Ստացված ավանդներ | 460,725 | 5.74% | 674,074 | 5.70% |
| Ստորադաս փոխառություններ | 5,924,274 | 6.00% | 5,928,587 | 6.00% |
| Այլ պարտավորություններ | 1,478,022 | 0.00% | 1,077,633 | 0.00% |
| Երաշխիքներ | – | – | 16,944 | 0.00% |

Վարկերը և երաշխիքները հայկական դրամով և ԱՄՆ դոլարով են և պետք է մարվեն մինչև 2027թ.:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| | *2018թ. հազ. դրամ* | *2017թ. հազ. դրամ* |
|---|---|---|
| **Շահույթ կամ վնաս** | | |
| Տոկոսային եկամուտ | 96,310 | 66,568 |
| Տոկոսային ծախս | (361,765) | (141,954) |

## 36. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

### (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2018թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | Մայր կազմակերպություն | | Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետերեր | | Մայր կազմակերպության դուստր ձեռնարկություններ | | Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ կապակցված կողմեր | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % | հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % | հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % | հազ. դրամ | Միջին տոկոսադրույք, % | հազ. դրամ |
| **Ակտիվներ** | | | | | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | – | – | – | – | – | – | 4,061,715 | 6.66% | 4,061,715 |
| Այլ ակտիվներ | – | – | 62,619 | – | 879,324 | – | – | – | 941,943 |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 20,562 | 0.00% | 62,690 | 0.00% | 1,385,613 | 0.00% | 1,376,258 | 0.00% | 2,545,123 |
| - Ժամկետային ավանդներ | – | – | – | – | 659,326 | 4.00% | 77,155 | 6.47% | 736,481 |
| Այլ փոխառություններ | – | – | 21,215,696 | 6.04% | – | – | – | – | 21,215,696 |
| Այլ պարտավորություններ | – | – | 13,209 | 0.00% | – | – | – | – | 13,209 |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ** | | | | | | | | | |
| Ստացված երաշխիքներ | – | – | 13,323,384 | 1.05% | – | – | – | – | 13,323,384 |
| **Շահույթ (վնաս)** | | | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | – | – | – | – | – | – | 575,789 | – | 575,789 |
| Տոկոսային ծախս | – | – | (1,384,459) | – | (21,291) | – | (337,771) | – | (1,743,521) |
| Գործառնական վարձակալության գծով ծախսեր | – | – | – | – | (1,627,177) | – | – | – | (1,627,177) |

## 36. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

### (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Ստորև ներկայացված են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2017թ-ին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | Մայր կազմակերպություն. հազ. դրամ | Մայր կազմակերպություն. Միջին տոկոսադրույք, % | Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետերեր. հազ. դրամ | Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետերեր. Միջին տոկոսադրույք, % | Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ. հազ. դրամ | Մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ. Միջին տոկոսադրույք, % | Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ վերահսկվող կողմեր. հազ. դրամ | Ընդհանուր հսկողության տակ գտնվող ընկերություններ և այլ վերահսկվող կողմեր. Միջին տոկոսադրույք, % | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | – | – | – | – | – | – | 645,001 | – | **645,001** |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ | – | – | – | – | – | – | 34,916,760 | 13.27% | **34,916,760** |
| Այլ ակտիվներ | – | – | – | – | 795,016 | – | 3,596 | – | **798,612** |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | – | – | – | – | – | – | 611,430 | – | **611,430** |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 666,258 | 0.00% | 1,172,117 | 0.00% | 200,264 | 0.00% | 1,980,570 | 0.00% | **4,019,209** |
| - Ժամկետային ավանդներ | – | – | – | – | 513,431 | 4.66% | 32,590,571 | 12.87% | **33,104,002** |
| Այլ փոխառություններ | – | – | 9,890,487 | 8.90% | – | – | – | – | **9,890,487** |
| Այլ պարտավորություններ | – | – | 10,316 | 0.00% | – | – | – | – | **10,316** |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ** | | | | | | | | | |
| Տրված երաշխիքներ | – | – | – | – | – | – | 20,304 | 0.00% | **20,304** |
| Ստացված երաշխիքներ | – | – | 11,131,525 | 1.50% | – | – | – | – | **11,131,525** |
| **Շահույթ (վնաս)** | | | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | – | – | 1,371 | – | – | – | 4,360,124 | – | **4,361,495** |
| Տոկոսային ծախս | – | – | (1,135,191) | – | (21,325) | – | (3,864,603) | – | **(5,021,119)** |
| Այլ ծախս | – | – | – | – | (17,055) | – | (98,978) | – | **(116,033)** |

### (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Իրական արժեքի գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև ընդհանուր գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց գնահատման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և դատողությունների սուբյեկտիվությունը, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, հաշվեմատոությունը նմանատիպ գործիքների հետ, որոնց համար առկա են շուկայական դիտարկելի տվյալներ և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում օգտագործվող ենթադրություններն ու տվյալները ընդգրկում են ոչ ռիսկային և բազիսային տոկոսադրույքներ, վարկային սփրեդեր և այլ ցուցանիշներ, որոնք օգտագործվում են զեղչային դրույքների, պարտատոմսերի գների, արտարժույթի փոխարժեքի, պարտատոմսերի ինդեքսների գների չափման մեջ: Գնահատման մեթոդների նպատակն է հասնել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ֆինանսական գործիքի գինը արտացոլող այն իրական արժեքի որոշմանը, որը կորոշեր անկախ գործող շուկայի մասնակիցների կողմից:

Ավելի տարածված և պարզ ֆինանսական գործիքների, ինչպես, օրինակ՝ տոկոսադրույքի և արժութային սվոպերի իրական արժեքները որոշելու համար Բանկը օգտագործում է լայնորեն ճանաչված գնահատման մոդելներ, որոնք օգտագործում են միայն դիտարկելի շուկայական տեղեկատվությունը և չեն պահանջում ղեկավարության լայն դատողություններ և գնահատումներ: Դիտարկելի գներն ու մոդելների տվյալները սովորաբար հասանելի են ցուցանված պարտատոմսերի և արժեթղթերի, բորսաներում շրջանառվող ածանցյալ գործիքների համար, ինչպիսիք են տոկոսադրույքի սվոպերը:

## 37. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

### (ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների, ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթերի և թողարկված պարտքային արժեթղթերի, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: Այս գործոնների իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում, բացառությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքների, որոնք դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 1-ին մակարդակում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների, ամորտիզացված արժեքով պարտքային գործիքների և ՀՀ-ում թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային և իրական արժեքները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | *Հաշվեկշռային արժեք հազ. դրամ* | *Իրական արժեք հազ. դրամ* | *Չիրացված օգուտ/(վնաս) հազ. դրամ* |
|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 547,943 183 | 538,682.849 | (9,260 334) |
| Պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով | 38,825 463 | 40,193.704 | 1,368 241 |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | 46,233.668 | 46,536 937 | (303 269) |
| **Ընդամենը** | **633,002.314** | **625,413,490** | **(8,195.362)** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և ՀՀ-ում թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային և իրական արժեքները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

| | *Հաշվեկշռային արժեք հազ. դրամ* | *Իրական արժեք հազ. դրամ* | *Չիրացված օգուտ /(վնաս) հազ. դրամ* |
|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 479,640.981 | 474,361 415 | (5,279.566) |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | 43,305.844 | 44,680 299 | 1,374,455 |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | 31,221.300 | 31,493 933 | (272,683) |
| **Ընդամենը** | **554,168 125** | **550,535.697** | **(4,177,794)** |

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով.

- 3.5% և 11.6-16.4% զեղչման դրույքներ են կիրառվում համապատասխանաբար բանկերին տրված վարկերից ու փոխատվություններից և հաճախորդներին տրված վարկերից ու փոխատվություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար;
- 5.5-12% զեղչման դրույքներ են կիրառվում պարտավորություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

## 37. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

### (բ) Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները համանման գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս մակարդակը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս կատեգորիան ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

| *հազ. դրամ* | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր | | | | |
| - Պարտքային և այլ ֆիքսված եկամտաբեր գործիքներ | – | 6,691,791 | – | **6,691,791** |
| - Ածանցյալ ակտիվներ | – | 125,219 | – | **125,219** |
| - Ածանցյալ պարտավորություններ | – | (20,621) | – | **(20,621)** |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Պարտքային գործիքներ | 1,273,589 | 10,189,394 | – | **11,462,983** |
| | **1,273,589** | **16,985,783** | **–** | **18,259,372** |
| **Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է** | | | | |
| Ամortիզացված արժեքով չափվող՝ հաճախորդներին տրված վարկեր | – | – | 538,682,849 | **538,682,849** |
| Ամortիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | – | 40,193,704 | – | **40,193,704** |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | – | 46,536,937 | – | **46,536,937** |
| | **–** | **86,730,641** | **538,682,849** | **625,413,490** |

## 37. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում (շարունակություն)

### (բ) Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների վրա:

| *հազ. դրամ* | *1-ին մակարդակ* | *2-րդ մակարդակ* | *3-րդ մակարդակ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| ***Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ*** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | | | |
| - Պարտքային և այլ ֆիքսված եկամտով գործիքներ | – | 3,015,199 | – | **3,015,199** |
| - Ածանցյալ ակտիվներ | – | 952,865 | – | **952,865** |
| - Ածանցյալ պարտավորություններ | – | (686,306) | – | **(686,306)** |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Պարտքային գործիքներ | 2,942,639 | 6,838,981 | – | **9,781,620** |
| | **2,942,639** | **10,120,739** | **–** | **13,063,378** |
| **Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում** | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | – | – | 474,361,415 | **474,361,415** |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | 3,881,042 | 40,799,257 | – | **44,680,299** |
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | – | 31,493,983 | – | **31,493,983** |
| | **3,881,042** | **72,293,240** | **474,361,415** | **550,535,697** |

*Ածանցյալ գործոքներ*

Ածանցյալ գործոքները, որոնք գնահատվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ ներառող տեխնիկայով, հիմնականում ներառում են տոկոսադրույքի և արտարժույթի սվոպեր և արտարժույթային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման տեխնիկաները ֆորվարդների գնահատման և սվոպերի մոդելներն են, ներառյալ ներկա արժեքի հաշվարկները: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, փոխանակման դրույքները և տոկոսադրույքի կորը:

*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ / Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ*

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, որոնք գնահատվում են գնահատման մոդելի օգնությամբ, ներառում կազմված են ՀՀ պետական պարտատոմսերից: Այս արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, որը ներառում է շուկայում դիտարկելի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակած տվյալները:

## 38. Ֆինանսավորման գործունեության հետևանքով առաջացած ֆինանսական պարտավորությունների փոփոխություններ

| *հազ. դրամ* | *Թողարկված պարտքային արժեթղթեր* | *Այլ փոխառու միջոցներ* | *Ստորադաս փոխառություններ* | *Ընդամենը պարտավորություններ ֆինանսական գործունեությունից* |
|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեքը 31 Դեկտեմբեր 2016** | **18,124,500** | **102,735,039** | **40,311,255** | **161,670,794** |
| Թողարկումից մուտքեր | 22,504,610 | 67,496,831 | – | **90,001,441** |
| Մարումներ | – | (72,097,598) | – | **(72,097,598)** |
| Արտարժույթի փոխարժեքից (վնաս)/օգուտ | 82,042 | 29,467 | (4,111) | **107,398** |
| Այլ | 221,443 | (35,645) | 112,624 | **298,422** |
| **Հաշվեկշռային արժեքը 31 Դեկտեմբեր 2017** | **40,932,595** | **98,128,094** | **40,919,768** | **179,980,457** |
| Թողարկումից մուտքեր | 24,855,545 | 109,241,838 | 9,290,363 | **143,387,746** |
| Մարումներ | (12,849,554) | (85,915,500) | – | **(98,765,054)** |
| Արտարժույթի փոխարժեքից (վնաս)/օգուտ | (96,733) | (552,218) | 22,123 | **(626,828)** |
| Այլ | (1,995,497) | 10,995 | 181,871 | **(1,802,631)** |
| **Հաշվեկշռային արժեքը 31 Դեկտեմբեր 2018** | **50,846,356** | **120,913,209** | **50,414,125** | **222,173,690** |

«Այլ» սյունը ներառում է թողարկված պարտատոմսերի, այլ փոխառությունների և ստորադաս փոխառությունների գծով հաշվեգրված, բայց չվճարված տոկոսագումարները: Բանկը տոկոսագումարների վճարումները դասակարգում է որպես դրամական հոսքեր գործառնական գործունեությունից:

## 39. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

2019 թ. մարտի 4-ին «Ի-ԷՍ-Փի-ԷՍ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը ձեռք է բերել Բանկի լրացուցիչ թողարկված բոլոր 145 բաժնետոմսերը՝ մեկ բաժնետոմսի դիմաց 320,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, վճարելով 599,687 ՀՀ դրամ: Գործարքի արդյունքում Բանկի բաժնետերերի կառուցվածքը փոխվել է հետևյալ կերպ՝ Ամերիա գրուպ (56.53%), ՎՁԵԲ (17.78%), «Ի-ԷՍ-Փի-ԷՅ Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը (11.73%) և ԱՁԲ (13.96%):

«Ամերիաբանկ» ՓԲԸ

# Ֆինանսական հաշվետվություններ

2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

# Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ..... 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն ..... 9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ..... 10
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ..... 11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ..... 12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ ..... 13

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն *Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի* (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և էթիկայի միջազգային կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Այլ հանգամանք

Բանկի 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2019թ. մարտի 27-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

## Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի ընթացքում: Այս հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

### Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստներ

Տեղեկատվությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 20-ում:

| Աուդիտի առանցքային հարց | Ինչպես ենք անդրադարձել հարցին աուդիտի ընթացքում |
|---|---|
| Հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները կազմում են ընդհանուր ակտիվների 61%-ը և ներառում են ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է ստորև ներկայացված կիրառվող ենթադրությունների նկատմամբ:<br><br>Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման մոդելը ղեկավարությունից պահանջում է կիրառել մասնագիտական դատողություններ և կատարել ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված.<br><br>- պարտքային ռիսկի նշանակալի աճի և հաճախորդներին տրված վարկերի գծով պարտազանցման դեպքերի ժամանակին բացահայտում (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն),<br><br>- պարտազանցման տեղի ունենալու հավանականության և պարտազանցման դեպքում առաջացող կորստի գնահատում, | Մենք վերլուծել ենք ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներառելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մասնագետներին:<br><br>Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարած մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար մենք իրականացրել ենք հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.<br><br>- իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի փուլերի միջև բաշխումը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը:<br><br>- ֆիզիկական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք ժամկետանց օրերի հաշվարկը վերահսկող համակարգի կառուցվածքը, աշխատանքը և գործառնական արդյունավետությունը:<br><br>- իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, թե արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կիրառված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները:<br><br>- 1-ին և 2-րդ փուլերին բաշխված հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց դեպքում ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են խմբային հիմունքով, հիմք ընդունելով մեզ հայտնի տեղեկատվությունը գնահատել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և համադրել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային աղբյուրների տվյալների հետ ընտրանքային կարգով: |

| Աուդիտի առանցքային հարց | Ինչպես ենք անդրադարձել հարցին աուդիտի ընթացքում |
|---|---|
| - ակնկալվող դրամական հոսքերի, այդ թվում՝ գրավի իրացումից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասված հաճախորդներին տրված վարկերի համար:<br><br>Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի և ակնկալվող պարտքային կորուստների ժամկետների և գումարների գնահատման բարդության և սուբյեկտիվության պատճառով, այս հարցը դիտարկվում է որպես աուդիտի առանցքային հարց: | - իրավաբանական անձանց տրված 2-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց դեպքում ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք պարտազանցման դեպքում առաջացող կորստի հաշվարկում ելակետային տվյալների տեղին լինելը:<br><br>- իրավաբանական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց դեպքում ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերի վրա, որոնք հավանաբար կարող են առավելագույնս նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:<br><br>- ֆիզիկական անձանց տրված վարկերի համար ընտրանքային կարգով ստուգել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը, վճարումների ուշացման ժամանակին արտացոլումը և վարկերի բաշխումը փուլերին:<br><br>- ֆիզիկական անձանց տրված 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց դեպքում ակնկալվող պարտքային կորուստները գնահատվում են անհատական հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ գրավի իրացումից ակնկալվող մուտքերը և իրացման ակնկալվող պայմանները:<br><br>- գնահատել ենք ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կատարած գնահատումները 2019թ. փաստացի արդյունքների հետ:<br><br>- գնահատել ենք նաև, թե որքան պատշաճորեն են արտացոլում ֆինանսական հաշվետվությունների բացահայտումները Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին: |

## Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ այս աուդիտորական եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկավությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ էականորեն խեղաթյուրված լինել:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով պատճառով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Մենք նաև՝

– հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

– պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

– գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

– եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարա չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և կիրառելի լինելու դեպքում, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և հետևաբար, իրենցից ներկայացնում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը ներկայացվում են մեր աուդիտորական եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ երբ խիստ բացառիկ հանգամանքներում որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ այդ հարցի ներկայացման հետ կապված բացասական հետևանքները կարող են գերակշռել դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG ARMENIA»
02529689

KPMG Armenia LLC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
4 մայիսի 2020թ.

| | Ծնթգ. | 2019թ. հազ. դրամ | 2018թ.* հազ. դրամ |
|---|---|---|---|
| Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ | 6 | 59,171,261 | 52,954,291 |
| Այլ տոկոսային եկամուտ | 6 | 1,189,505 | 685,875 |
| Տոկոսային ծախս | 6 | (29,362,152) | (26,309,095) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | **30,998,614** | **27,331,071** |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 7 | 5,439,164 | 4,511,230 |
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս | 8 | (1,501,380) | (1,111,594) |
| **Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ** | | **3,937,784** | **3,399,636** |
| Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով | 9 | 315,158 | 995,577 |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 10 | 4,577,671 | 3,134,059 |
| Զուտ օգուտ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով | | 345,547 | 155,365 |
| Այլ գործառնական եկամուտ | 11 | 3,179,924 | 4,242,231 |
| Այլ գործառնական ծախսեր | 12 | (3,405,890) | (2,475,641) |
| **Գործառնական եկամուտ** | | **39,948,808** | **36,782,298** |
| Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով | 13 | (7,171,028) | (9,380,965) |
| Այլ արժեզրկում և պահուստներ | | (29,783) | (22,749) |
| **Գործառնական եկամուտ արժեզրկումից հետո** | | **32,747,997** | **27,378,584** |
| Անձնակազմի գծով ծախսեր | | (10,101,061) | (7,936,402) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | 14 | (6,677,422) | (6,118,214) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | | **15,969,514** | **13,323,968** |
| Շահութահարկի գծով ծախս | 15 | (3,854,546) | (2,821,524) |
| **Շահույթ տարվա համար** | | **12,114,968** | **10,502,444** |
| **Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի** | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ. | | | |
| – իրական արժեքի զուտ փոփոխություն | | 593,045 | 61,959 |
| – շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար | | (276,438) | (124,292) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | *316,607* | *(62,333)* |
| **Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար՝ առանց շահութահարկի** | | **316,607** | **(62,333)** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | **12,431,575** | **10,440,111** |

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և (տես Ծանոթագրություն 3):

9-ից 111-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. մայիսի 1-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արտակ Հանեսյան
Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն

Սիեր Կառդալյան
Գլխավոր հաշվապահի տեղակալ

| | Ծնթգ. | 2019թ. հազ. դրամ | 2018թ.* հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 16 | 247,353,690 | 144,353,912 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | 17 (ա) | | |
| - Բանկի կողմից պահվող | | 8,255,606 | 6,290,841 |
| - Վաճառքի և հետգնման պայմանագրերի ղիմաց գրավադրված | | - | 526,169 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 17 (բ) | 10,848,985 | 11,602,128 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 17 (գ) | | |
| - Բանկի կողմից պահվող | | 33,510,890 | 22,269,117 |
| - Վաճառքի և հետգնման պայմանագրերի ղիմաց գրավադրված | | - | 16,556,346 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 18 | 27,014,640 | 4,946,612 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 19 | 23,549,559 | 6,746,414 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 20 | 585,741,899 | 547,943,183 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 21 | 11,162,394 | 10,240,337 |
| Օգտագործման իրավունքի ձևի ակտիվ | 22 | 11,235,119 | - |
| Հետաձգված հարկային ակտիվ | 15 | - | 185,898 |
| Առգրավված ակտիվներ | 20 | 3,028,455 | 2,628,659 |
| Այլ ակտիվներ | 23 | 6,379,980 | 5,457,611 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **968,081,217** | **779,747,227** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 17 (ա) | 35,314 | 20,621 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 24 | 34,488,813 | 43,076,769 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | - | 17,011,404 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 25 | 593,223,433 | 399,086,132 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 26 | 54,573,055 | 50,846,356 |
| Այլ փոխառություններ | 27 | 126,685,607 | 120,913,209 |
| Ստորադաս փոխառություններ | 27 | 36,495,281 | 50,414,125 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | | 279,389 | 1,086,688 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 15 | 918,445 | - |
| Հանձնառությունների գծով պահուստ | 32 | 116,222 | 140,163 |
| Վարձակալության գծով պարտավորություն | | 11,373,257 | - |
| Այլ պարտավորություններ | 28 | 8,665,323 | 7,393,812 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **866,854,139** | **689,989,279** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | 29 | | |
| Բաժնետիրական կապիտալ | | 37,347,200 | 37,300,480 |
| Էմիսիոն եկամուտ | | 17,009,560 | 16,968,725 |
| Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | | 650,042 | 333,435 |
| Չբաշխված շահույթ | | 46,220,276 | 35,155,308 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **101,227,078** | **89,757,948** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **968,081,217** | **779,747,227** |

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և (տես Ծանոթագրություն 3):

| | Ծնթգ. | 2019թ. հազ. դրամ | 2018թ.* հազ. դրամ |
|---|---|---|---|
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Ստացված տոկոսներ | | 60,612,689 | 58,733,901 |
| Վճարված տոկոսներ | | (27,533,867) | (33,083,438) |
| Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ | | 5,439,164 | 4,511,231 |
| Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ | | (1,501,380) | (1,111,594) |
| Զուտ մուտքեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | 697,736 | 453,772 |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | | 4,043,700 | 3,586,028 |
| Այլ գործառնական (վճարումներ)/մուտքեր | | (343,748) | 1,766,590 |
| Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին | | (9,611,889) | (7,165,324) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ | | (3,818,407) | (4,888,861) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | (1,070,037) | (2,240,960) |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | | (22,263,721) | 5,247,616 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | | (16,602,636) | 1,924,073 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | (52,411,736) | (89,537,762) |
| Այլ ակտիվներ | | (1,656,875) | (1,651,412) |
| **Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | (743,702) | (579,945) |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | | (8,058,493) | 4,427,815 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | (16,999,992) | 10,913,628 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | 195,650,670 | 32,999,639 |
| Այլ պարտավորություններ | | 578,480 | 2,678,452 |
| **Գործառնական գործունեությունից ստացված//գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը** | | **104,405,956** | **(13,016,551)** |
| Վճարված շահութահարկ | | (3,591,966) | (2,758,200) |
| **Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր** | | **100,813,990** | **(15,774,751)** |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (2,847,579) | (4,348,326) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | | (6,077,857) | (8,735,406) |
| Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից | | 7,532,357 | 6,909,824 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | | (11,148,512) | (12,208,815) |
| Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից | | 17,106,225 | 15,956,823 |
| **Ներդրումային գործունեությունից ստացված/ներդրումային գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր** | | **4,564,634** | **(2,425,900)** |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարում | 22 | (1,444,183) | - |
| Վճարված շահաբաժիններ | 29 | (1,050,000) | (1,148,000) |
| Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից | 29 | 87,555 | 14,426,666 |
| Ստացված այլ փոխառություններ և ստորադաս պարտավորություններ | 27 | 39,072,808 | 118,532,201 |
| Այլ փոխառությունների և ստորադաս պարտավորությունների մարում | 27 | (43,493,485) | (85,915,500) |
| Մուտքեր թողարկված պարտքային արժեթղթերից | 26 | 21,864,967 | 24,855,545 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | 26 | (17,659,493) | (12,849,554) |
| **Ֆինանսավորում գործունեության համար (օգտագործված)/ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | | **(2,621,831)** | **57,901,358** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **102,756,793** | **39,700,707** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 266,334 | (2,919,971) |
| Փոփոխությունների ազդեցությունն արժեզրկման գծով պահուստի վրա | | (23,349) | (43,192) |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | | 144,353,912 | 107,616,368 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | 16 | **247,353,690** | **144,353,912** |

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և (տես Ծանոթագրություն 3):

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2018թ. | 32,087,360 | 7,755,179 | 338,214 | 29,721,118 | 69,901,871 |
| Ճշգրտում ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ժամանակ՝ առանց հարկի | - | - | 57,554 | (3,920,254) | (3,862,700) |
| Վերահաշվարկված մնացորդը առ 1 հունվարի 2018թ. | 32,087,360 | 7,755,179 | 395,768 | 25,800,864 | 66,039,171 |
| Շահույթ տարվա համար | - | - | - | 10,502,444 | 10,502,444 |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | |
| *Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ* | | | | | |
| - իրական արժեքի զուտ փոփոխություն | - | - | 61,959 | - | 61,959 |
| - շահույթ կամ վնաս վերաղասակարգված զուտ գումար | - | - | (124,292) | - | (124,292) |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական եկամուտ տարվա համար** | - | - | (62,333) | 10,502,444 | 10,440,111 |
| **Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | | | |
| Բաժնետիրական կապիտալի թողարկում | 5,213,120 | 9,213,546 | - | - | 14,426,666 |
| Շահաբաժիններ | - | - | - | (1,148,000) | (1,148,000) |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | 5,213,120 | 9,213,546 | - | (1,148,000) | 13,278,666 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.*** | 37,300,480 | 16,968,725 | 333,435 | 35,155,308 | 89,757,948 |
| Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | 37,300,480 | 16,968,725 | 333,435 | 35,155,308 | 89,757,948 |
| Շահույթ տարվա համար | - | - | - | 12,114,968 | 12,114,968 |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | | |
| *Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ* | | | | | |
| - իրական արժեքի զուտ փոփոխություն | - | - | 593,045 | - | 593,045 |
| - շահույթ կամ վնաս վերաղասակարգված զուտ գումար | - | - | (276,438) | - | (276,438) |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական եկամուտ տարվա համար** | - | - | 316,607 | 12,114,968 | 12,431,575 |
| **Գործառնություններ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | | | |
| Բաժնետիրական կապիտալի թողարկում | 46,720 | 40,835 | - | - | 87,555 |
| Շահաբաժիններ | - | - | - | (1,050,000) | (1,050,000) |
| **Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ** | 46,720 | 40,835 | - | (1,050,000) | (962,445) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | 37,347,200 | 17,009,560 | 650,042 | 46,220,276 | 101,227,078 |

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և (տես Ծանոթագրություն 3):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# 1 Ներածություն

## (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայներարտբանկ» ՓԲԸ) (Բանկ) հիմնադրվել է 1992թ. դեկտեմբերի 8-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում «Թի-Դի-Էյ Հոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ռուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ռուայ) Լիմիթիդ ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը:

2015թ. դեկտեմբերի 23-ին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) ամբողջությամբ ձեռք բերեց Բանկի լրացուցիչ թողարկված 20,749 բաժնետոմսերը:

2016թ. դեկտեմբերի 21-ին «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետոմսերի 13.5%-ը «Ամերիա Գրուպ» (Սի-Ռուայ) ընկերությունից:

2018թ. փետրվարի 14-ին Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) ձեռք բերեց Բնկի լրացուցիչ թողարկված բոլոր 16,291 բաժնետոմսերը 14,426,666 հազար դրամով:

2019թ. մարտի 4-ին «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունն ամոբղջությամբ ձեռք բերեց Բանկի լրացուցիչ թողարկված 146 բաժնետոմսերը 87,555 հազար դրամով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն էին՝ «Ամերիա Գրուպ» (Սի-Ռուայ)՝ 56.53%, ՎԶԵԲ՝ 17.78%, ԱԶԲ՝ 13.96% «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ»՝ 11.73%.

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի և երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով և արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ է: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի 19 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փ. 2:

2019թ. դեկտեմբերի 31-ին Բանկի աշխատակիցների թիվը կազմում էր 1,050 (2018թ-ին՝ 891):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 34-ում:

## (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Բացի այդ, 2020թ. առաջին ամիսներին համաշխարհային շուկայում տեղի են ունեցել զգալի ցնցումներ՝ պայմանավորված կորոնավիրուսի բռնկումով: Այլ գործոնների հետ մեկտեղ, հիվանդության բռնկումը հանգեցրել է ֆոնդային բորսայի ցուցանիշների կտրուկ անկման: Այս զարգացումները կարող են էլ ավելի մեծացնել գործունեության իրականացման հետ կապված անորոշության մակարդակը Հայաստանի գործարար միջավայրում: Կառավարությունը նախաձեռնել է 300 միլիարդ դրամ գումարով աջակցության ծրագիր, որը կարող է մեղմացնել բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսության և կազմակերպությունների վրա (տես Ծանոթագրություն 36):

# 2 Պատրաստման հիմունքներ

## (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»* պահանջները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համապատասխան փոփոխությունները ներկայացված են Ծանոթագրություն 3-ում:

## (բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի, որոնք ներկայացված են իրական արժեքով:

## (գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքներն էին համապատասխանաբար 479.7 դրամ և 483.75 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար և 537.26 դրամ և 553.65 դրամ 1 եվրոյի համար:

## (դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

**Դատողություններ**

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատում, որի շրջանակում պահվում են ակտիվները, և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 4 (ե) (i):
- չափանիշների սահմանում որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում – Ծանոթագրություն 30 (գ):

**Ենթադրություններ և գնահատման անորոշություն**

Այն ենթադրությունների և գնահատման անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- ֆինանսական գործիքների արժեզրկում. որոշել ելակետային տվյալներն ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոդելի համար, այդ թվում՝ ապագայամետ տեղեկատվության ներառումը – Ծանոթագրություն 30 (գ),
– արդյոք երաշխավորությունը պահանջվում է պարտքային գործիքի պայմանագիրը կարգավորող օրենքներով և կանոնակարգերով,
– արդյոք երաշխավորության պայմանագիրը կնքվել է պարտքային գործիքի պայմանագրի հետ նույն ժամանակ և հաշվի առնելով վերջինիս պայմանները և
– արդյոք երաշխավորությունը տրամադրվել է փոխառուի մայր կազմակերպության կամ փոխառուի խմբի անդամ հանդիսացող որևէ այլ կազմակերպության կողմից:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը հանդիսանում է ֆինանսական ակտիվի անբաժանելի տարր, ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման հետ կապված վճարվելիք ցանկացած հավելաճար հաշվառվում է որպես այդ ակտիվի ձեռքբերման գործարքի գծով ծախսում: Պարտքային գործիքի իրական արժեքը և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Բանկը հաշվի է առնում երաշխավորությամբ ապահովվող պաշտպանության ազդեցությունը:

Եթե Բանկը որոշում է, որ փոխառությունը չի հանդիսանում պարտքային գործիքի անբաժանելի տարր, ապա այն ճանաչում է ակտիվ, որն իրենից ներկայացնում է երաշխավորության հավելավճարի գծով կանխավճար, և պարտքային կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Կանխավճարի տեսքով վճարված հավելավճարի գծով ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը, որի համար ստացվել է երաշխավորությունը, ոչ պարտքային առումով արժեզրկված է և ոչ էլ ենթարկվել է պարտքային ռիսկի նշանակալի աճի երաշխավորությունը ստանալու պահին: Այս

ակտիվները ճանաչվում են «այլ ակտիվներ» հոդվածի կազմում: Բանկը փոխհատուցման իրավունքի գծով օգուտները կամ կորուստները ներկայացնում է շահույթում կամ վնասում՝ «պարտքային ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստներ» հոդվածում:

## (զ) Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ» հոդվածը ներառում է.

- ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերը, ֆակտորինգի գծով ստացվելիք գումարները և ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարները (տես Ծանոթագրություն 4 (ե) (i)), որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- զուտ ներդրումները ֆինանսական վարձակալություններում:

## (է) Ավանդներ, թողարկված պարտքային արժեթղթեր և ստորադաս պարտավորություններ

Ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով լրացուցիչ ուղղակի ծախսումները, և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

## (ը) Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում դրանք չափվում են հետևյալ ցշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Բանկը չունի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող փոխատվության հանձնառություններ:

Այլ փոխատվության հանձնառությունների համար Բանկը ճանաչում է կորստի պահուստ (տես Ծանոթագրություն 4 (ե) (iv)) ՖՀՄՍ 9-ի համաձայն:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացող պարտավորությունները ներառվում են պահուստների կազմում:

## (թ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետադարձ վաճառքի պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունն իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառքի պայմանագրով ձեռք բերված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

## (ժ) Հիմնական միջոցներ

### *(i) Սեփական ակտիվներ*

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

### *(ii) Մաշվածություն*

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով առանձին ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | |
|---|---|
| - վարձակալված գույքի բարելավում | 5-ից 20 տարի |
| - համակարգիչներ և կապի սարքավորումներ | 5-ից 10 տարի |
| - տնտեսական գույք | 5-ից 10 տարի |
| - փոխադրամիջոցներ | 7 տարի |

## (ի) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման և ներդրման ծախսումները կապիտալացվում են համապատասխան ոչ նյութական արժեքի ինքնարժեքին:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 1-ից 10 տարի:

## (լ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը հատուկ ռիսկերը:

## (խ) Բաժնետիրական կապիտալ

### *(i) Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

### *(ii) Էմիսիոն եկամուտ*

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

### *(iii) Շահաբաժիններ*

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

## (ծ) Առգրավված գույք

Առգրավված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով:

## (կ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների

ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

## (հ) Սեգմենտային հաշվետվություններ

Գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչ է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններից հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն: Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն, առևտրային բանկային գործունեություն:

## (ձ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ գործարքներին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել տարվա հարկվող եկամտի գծով՝ կիրառելով այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ, որն ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Ապագա հարկվող շահույթը որոշվում է հարկվող ժամանակավոր տարբերությունների մարումից առաջացող գումարի հիման վրա: Եթե

հարկվող ժամանակավոր տարբերությունների գումարը բավարար չէ հետաձգված հարկային ակտիվն ամբողջությամբ ճանաչելու համար, դիտարկվում է գոյություն ունեցող ժամանակավոր տարբերությունների մարումներով ճշգրտված ապագա հարկվող շահույթը, որը որոշվում է Բանկի գործարար ծրագրերի հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի: Այս նվազեցումները վերականգնվում են, եթե մեծանում է ապագա հարկվող շահույթ ստանալու հավանականությունը:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է, որ Բանկն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող է դրանք օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

## (ղ) Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները: Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և մեկնաբանություններն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումների փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում,*
- *«Էական» տերմինի սահմանում (ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ),*
- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»:*

# 5 Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակների համար Բանկի գործունեությունը բաժանված է հետևյալ երեք գործառնական սեգմենտի՝ հիմք ընդունելով մատուցվող ապրանքները և ծառայությունները:

| | |
|---|---|
| Մանրածախ բանկային գործունեություն | Ֆիզիկական անձանց, փոքր և միկրո ձեռնարկությունների ավանդների սպասարկում, սպառողական վարկերի, օվերդրաֆտների, վարկային քարտերի, փոքր և միկրո վարկերի տրամադրում: |
| Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն | Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի և վարկային գծերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների սպասարկում, ներդրումային բանկային ծառայությունների մատուցում, այդ թվում՝ անդերրայթինգի ծառայություններ և ֆինանսական խորհրդատվություն: |
| Առևտրային բանկային գործունեություն | Արտարժույթի առուվաճառքի գործառնություններ, պարտատոմսերի պորտֆելի կառավարում, կարճաժամկետ միջոցների ներգրավվում կամ տրամադրում միջբանկային վարկերի միջոցով, հետգնման պայմանագրեր իրացվելիության կառավարման նպատակների համար, բրոքերային ծառայությունների մատուցում և այլն: |

Ռեսուրսների բաշխման և գործունեության վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով՝ ղեկավարությունը վերահսկում է իր ստորաբաժանումների գործունեության արդյունքներն առանձին հիմունքով: Շահութահարկը կառավարվում է շահույթը նախքան եկամտահարկով հարկումը հիմունքով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

Գործառնական սեգմենտների միջև փոխանցումների գները հիմնված են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի վրա, ինչպես և երրորդ կողմերի հետ գործարքների դեպքում:

2019թ. կամ 2018թ. չի գրանցվել մեկ արտաքին հաճախորդի կամ պայմանագրային կողմի հետ իրականացված որևէ գործարք, որից ստացված հասույթը կազմել է Բանկի ընդհանուր հասույթի 10%-ը կամ ավելին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված տեղեկատվություն Բանկի գործառնական սեգմենտների եկամտի և շահույթի, որոշ ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ:

| 2019թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Զուտ տոկոսային եկամուտ | 6,049,625 | 20,393,147 | 4,555,842 | 30,998,614 |
| Զուտ ոչ տոկոսային եկամուտ | 1,519,349 | 3,895,845 | 3,535,000 | 8,950,194 |
| Միջսեգմենտային եկամուտ | 9,803,150 | (5,747,293) | (4,055,857) | - |
| **Գործառնական շահույթ** | **17,372,124** | **18,541,699** | **4,034,985** | **39,948,808** |
| Պարտքային կորուստների գծով ծախս | (3,309,378) | (3,861,650) | - | (7,171,028) |
| Այլ արժեզրկում | - | (29,783) | - | (29,783) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (2,093,029) | (599,723) | (165,842) | (2,858,594) |
| Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր | (9,095,247) | (3,905,817) | (918,825) | (13,919,889) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկում** | **2,874,470** | **10,144,726** | **2,950,318** | **15,969,514** |
| Շահութահարկի գծով ծախս | (626,582) | (2,584,849) | (643,115) | (3,854,546) |
| **Շահույթ տարվա համար** | **2,247,888** | **7,559,877** | **2,307,203** | **12,114,968** |

| 2019թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ | 178,203,827 | 421,360,830 | 77,843,858 | 677,408,515 |
| Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ | 336,668,100 | 501,886,209 | 6,936,319 | 845,490,628 |

Տոկոսաբեր ակտիվները ներառում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդները և մնացորդները (բացառությամբ լորո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառությունները և ստորադաս փոխառությունները:

| 2018թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Զուտ տոկոսային եկամուտ | 1,382,860 | 21,223,002 | 4,725,209 | 27,331,071 |
| Զուտ ոչ տոկոսային եկամուտ | 1,438,143 | 3,435,683 | 4,577,401 | 9,451,227 |
| Միջսեգմենտային եկամուտ | 12,266,116 | (8,441,826) | (3,824,290) | - |
| **Գործառնական շահույթ** | **15,087,119** | **16,216,859** | **5,478,320** | **36,782,298** |
| Պարտքային կորուստների գծով ծախս | (2,425,331) | (6,797,680) | (157,954) | (9,380,965) |
| Այլ արժեզրկում | - | (22,749) | - | (22,749) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (985,516) | (160,440) | (83,397) | (1,229,353) |
| Անձնակազմի գծով և այլ ընդհանուր վարչական ծախսեր | (8,327,863) | (3,015,020) | (1,482,380) | (12,825,263) |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկում** | **3,348,409** | **6,220,970** | **3,754,589** | **13,323,968** |
| Շահութահարկի գծով ծախս | (709,069) | (1,283,923) | (828,532) | (2,821,524) |
| **Շահույթ տարվա համար** | **2,639,340** | **4,937,047** | **2,926,057** | **10,502,444** |

| 2018թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ | 118,651,578 | 445,244,596 | 66,142,737 | 630,038,911 |
| Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ | 280,388,443 | 377,860,540 | 22,638,025 | 680,887,008 |

Տոկոսաբեր ակտիվները ներառում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, բանկերին տրված տոկոսակիր վարկերը և փոխատվությունները, հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարները, հաճախորդներին տրված համախառն վարկերը և փոխատվությունները և ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները:

Տոկոսակիր ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկերի ավանդները և մնացորդները (բացառությամբ լորո հաշիվների), հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարները, հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառությունները և ստորադաս փոխառությունները:

## Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Ստորև ներկայացված է հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթի բացվածքն ըստ սեգմենտների ՖՀՄՍ 15-ի շրջանակում 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| 2019թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 3,454,430 | 1,829,542 | 155,192 | 5,439,164 |
| Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից | - | 1,001,576 | - | 1,001,576 |
| Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից | 365,843 | 292,164 | - | 658,007 |
| **Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **3,820,273** | **3,123,282** | **155,192** | **7,098,747** |

| 2018թ. | Մանրածախ բանկային գործունեություն հազ. դրամ | Կորպորատիվ բանկային գործունեություն հազ. դրամ | Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ | 2,722,827 | 1,569,308 | 219,095 | 4,511,230 |
| Եկամուտ խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայություններից | - | 721,322 | 1,800,617 | 2,521,939 |
| Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից | 166,569 | 171,340 | - | 337,909 |
| **Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից** | **2,889,396** | **2,461,970** | **2,019,712** | **7,371,078** |

# 6 Զուտ տոկոսային եկամուտ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ** | | |
| **Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 53,157,387 | 47,053,601 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 3,015,197 | 3,056,988 |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 939,980 | 677,225 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 538,526 | 542,952 |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 504,202 | 471,902 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 124,304 | 417,820 |
| Այլ | 38,959 | 22,237 |
| | **58,318,555** | **52,242,725** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ** | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 852,706 | 711,566 |
| **Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ** | **59,171,261** | **52,954,291** |
| | | |
| **Այլ տոկոսային եկամուտ** | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 624,945 | 396,791 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 375,741 | 196,270 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 188,819 | 92,814 |
| **Այլ տոկոսային եկամուտ** | **1,189,505** | **685,875** |
| **Ընդամենը տոկոսային եկամուտ** | **60,360,766** | **53,640,166** |
| | | |
| **Տոկոսային ծախս** | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 12,166,015 | 10,669,140 |
| Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ | 9,976,484 | 10,895,124 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 3,123,159 | 2,604,298 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 1,708,196 | 1,225,204 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 1,294,627 | - |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 558,606 | 281,181 |
| Ակրեդիտիվների և տրամադրված երաշխավորությունների գծով վճարվելիք գումարներ | 521,002 | 631,857 |
| Այլ | 14,063 | 2,291 |
| | **29,362,152** | **26,309,095** |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **30,998,614** | **27,331,071** |

# 7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Պլաստիկ քարտերի սպասարկման վճարներ | 2,602,582 | 2,051,820 |
| Դրամական փոխանցումներ | 933,286 | 942,134 |
| Կանխիկացում, հաշիվների սպասարկում և հեռավար համակարգի ծառայություններ | 806,024 | 890,990 |
| Բրոքերային ծառայություններ և անդերրայթինգ | 585,077 | 184,281 |
| Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում | 267,337 | 261,087 |
| Վճարահաշվարկային գործառնություններ | 167,842 | 136,278 |
| Այլ | 77,016 | 44,640 |
| | **5,439,164** | **4,511,230** |

## (ա) Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Բանկի հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը հիմնականում ներառում է միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների մատուցումից ստացվող հասույթը: Բանկը միջնորդավճարների և այլ վճարների, խորհրդատվական և գործարքների կազմակերպման ծառայությունների գծով հասույթը հիմնականում ճանաչում է ժամանակի որոշակի պահին: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31 ավարտված տարիների շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող հասույթը ներառում է.

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը | 5,439,164 | 4,511,230 |
| Եկամուտ խորհրդատվական և և գործարքների կազմակերպման ծառայություններից | 1,001,576 | 2,521,939 |
| Այլ հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից | 658,007 | 337,909 |
| | **7,098,747** | **7,371,078** |

## (բ) Պայմանագրերի գծով մնացորդներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով դեբիտորական պարտքերի վերաբերյալ:

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Այլ ակտիվներում ներառված դեբիտորական պարտք | 80,815 | 30,387 |

# 8 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ | 1,158,619 | 828,537 |
| Դրամական փոխանցումներ | 228,980 | 169,092 |
| Երաշխավորությունների և ակրեդիտիվների տրամադրում | 41,777 | 55,364 |
| Այլ | 72,004 | 58,601 |
| | **1,501,380** | **1,111,594** |

# 9 Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով | 414,608 | 244,025 |
| Զուտ (վնաս)/օգուտ արժութային և տոկոսադրույքային ածանցյալ գործիքների գծով | (99,450) | 751,552 |
| | **315,158** | **995,577** |

# 10 Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Զուտ օգուտ սփոթ գործարքներից | 4,043,700 | 3,586,028 |
| Զուտ օգուտ/(վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից | 533,971 | (451,969) |
| | **4,577,671** | **3,134,059** |

# 11 Այլ գործառնական եկամուտ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Եկամուտ տույժերից և տուգանքներից | 1,121,772 | 1,382,383 |
| Եկամուտ խորհրդատվական և և գործարքների կազմակերպման ծառայություններից | 1,001,576 | 2,521,939 |
| Օգուտ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից | 398,569 | - |
| Զուտ եկամուտ առգրավված ակտիվների վաճառքից | 232,127 | 106,280 |
| Այլ | 425,880 | 231,629 |
| | **3,179,924** | **4,242,231** |

# 12 Այլ գործառնական ծախսեր

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Վճարային համակարգերի գծով ծախսեր | 831,320 | 626,757 |
| Երաշխիքային վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին | 684,933 | 485,453 |
| Ծրագրային ապահովման սպասարկում | 362,373 | 341,874 |
| Հաճախորդներին տրված վարկերը սկզբնապես շուկայական տոկոսադրույքներով ճանաչելու հետևանք | 280,787 | - |
| Գործակալական վճար | 209,165 | 197,039 |
| Տերմինալների օգտագործման վճարներ | 109,368 | 126,706 |
| Գրավի գրանցման ծախսեր | 106,482 | 53,038 |
| Ֆինանսական համակարգի հաշտարար | 78,260 | 67,411 |
| Ինկասացիա | 74,842 | 64,444 |
| Վարկային ռեգիստրի գծով ծախսեր | 68,789 | 60,938 |
| Պահառուական ծառայություններ | 35,386 | 26,848 |
| Քեշբեք և հաճախորդների ներգրավման գծով ծախսեր | 24,515 | 35,603 |
| Մշտադիտարկման ծառայություններ | 18,696 | 21,192 |
| Այլ | 520,974 | 368,338 |
| | **3,405,890** | **2,475,641** |

# 13 Զուտ արժեզրկումից կորուստներ ֆինանսական գործիքների գծով

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կորուստները:

| հազ. դրամ | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | (19,843) | - | - | (19,843) |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | (8) | - | - | (8) |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 61,602 | - | - | 61,602 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 1,080,240 | 1,756,197 | 4,653,501 | 7,489,938 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 7,599 | - | (53,803) | (46,204) |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | (27,120) | - | - | (27,120) |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | (22,854) | - | - | (22,854) |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | (373,558) | - | - | (373,558) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | (79,423) | - | - | (79,423) |
| Այլ ֆինանսական ակտիվներ | (10,541) | 258 | 222,722 | 212,439 |
| Հանձնառություններ | (4,000) | (5,613) | (14,328) | (23,941) |
| **Ընդամենը ծախս պարտքային կորուստների գծով** | **612,094** | **1,750,842** | **4,808,092** | **7,171,028** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից կորուստները:

| հազ. դրամ | 1-ին փուլ | 2-րդ փուլ | 3-րդ փուլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 17,021 | - | - | 17,021 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 7 | - | - | 7 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | (5,651) | - | 60,652 | 55,001 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 4,454,462 | 182,071 | 4,135,777 | 8,772,310 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 2,486 | - | 211,682 | 214,168 |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 24,455 | - | - | 24,455 |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 21,618 | (112,660) | - | (91,042) |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 85,437 | - | - | 85,437 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 72,517 | - | - | 72,517 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 8,024 | (2,025) | 270,040 | 276,039 |
| Հանձնառություններ | (20,546) | (17,082) | (7,320) | (44,948) |
| **Ընդամենը ծախս պարտքային կորուստների գծով** | **4,659,830** | **50,304** | **4,670,831** | **9,380,965** |

# 14 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Մաշվածություն և ամորտիզացիա* | 2,858,594 | 1,229,353 |
| Գովազդ և շուկայավարում | 899,241 | 698,705 |
| Այլ ծախսեր վարձակալության գծով (2018թ-ին՝ գործառնական վարձակալություն) | 472,016 | 2,204,391 |
| Վերանորոգման և սպասարկման ծախսեր | 413,885 | 319,010 |
| Մասնագիտական ծառայություններ | 263,041 | 223,635 |
| Վարկերի վերաղարձման գծով ծախսեր | 210,898 | 114,508 |
| Անվտանգության ծառայություն | 200,941 | 168,667 |
| Դասընթացներ և կրթություն | 180,677 | 104,121 |
| Կապի և տեղեկատվական ծառայություններ | 150,939 | 130,506 |
| Գործուղումների և ներկայացուցչական ծախսեր | 128,400 | 134,270 |
| Բարեգործություն և հովանավորություն | 124,058 | 94,191 |
| Էլեկտրականության և կոմունալ ծախսեր | 95,144 | 103,734 |
| Գրասենյակային ծախսեր | 85,938 | 46,405 |
| Ապահովագրություն | 44,427 | 36,276 |
| Հարկեր, բացառությամբ աշխատավարձի գծով հարկերի և շահութահարկի | 23,998 | 24,563 |
| Այլ | 525,225 | 485,879 |
| | **6,677,422** | **6,118,214** |

* 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության և ամորտիզացիայի գումարում ներառված 1,027,215 հազար դրամը վերաբերում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ամորտիզացիային՝ ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»* պահանջների համաձայն (տես Ծանոթագրություն 22):

# 15 Շահութահարկի գծով ծախս

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս | 2,784,667 | 2,923,474 |
| Նախորդ տարվա ընթացիկ հարկի գծով ճշգրտումներ | - | 127,794 |
| Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում | 1,069,879 | (229,744) |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **3,854,546** | **2,821,524** |

2019թ-ին ընթացիկ հարկի գծով կիրառելի դրույքը կազմում է 20% (2018թ-ին՝ 20%):

## Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | 2019թ. հազ. դրամ | % | 2018թ. հազ. դրամ | % |
|---|---|---|---|---|
| Շահույթ նախքան հարկումը | 15,969,514 | | 13,323,968 | |
| Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով | (3,193,903) | (20.0) | (2,664,794) | (20.0) |
| Չնվազեցվող ծախսեր | (754,970) | (4.7) | (37,641) | (0.3) |
| Հարկի դրույքի նվազեցման հետևանք* | 94,327 | 0.6 | - | - |
| Նախորդ տարվա շահութահարկի ճշգրտում | - | - | (127,794) | (1.0) |
| Զուտ օգուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից և զուտ վնաս շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով (չհարկվող մաս) | - | - | 8,705 | 0.1 |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **(3,854,546)** | **(24.1)** | **(2,821,524)** | **(21.2)** |

* Համաձայն 2019թ. հունիսի 25-ի հարկերի մասին որոշման՝ 2020թ. հունվարի 1-ից գործում է նոր հարկային օրենսգիրքն ըստ որի շահութահարկի դրույքը 20%-ից նվազել է 18%: Հաշվի առնելով, որ օրենսդրության փոփոխությունն ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանում, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկի գծով մնացորդները հաշվարկվել են օգտագործելով հարկի կիրառելի դրույքը, որն ըստ ակնկալիքների պետք է գործեր հակադարձման ժամանակ:

## (ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություն և զուտ հետաձգված հարկային պարտավորություն համապատասխանաբար 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

| հազ. դրամ | Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված | Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|---|---|
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | (36,011) | (34,929) | - | (70,940) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | (54,470) | (14,296) | (34,464) | (103,230) |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | (179,080) | (1,078,514) | - | (1,257,594) |
| Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ և պահուստներ | (18,770) | (119,645) | - | (138,415) |
| Հիմնական միջոցներ | (51,740) | 34,824 | - | (16,916) |
| Օգտագործման իրավունքի ձևի ակտիվ/վարձակալության գծով պարտավորություն | - | 89,699 | - | 89,699 |
| Այլ ակտիվներ | 44,296 | 38,437 | - | 82,733 |
| Այլ պարտավորություններ | 594,242 | 7,053 | - | 601,295 |
| Այլ փոխառություններ | (112,569) | 7,492 | - | (105,077) |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)** | **185,898** | **(1,069,879)** | **(34,464)** | **(918,445)** |

| հազ. դրամ | Մնացորդը առ 1 հունվարի 2018թ. | ՖՀՄՍ 9 կիրառման հետևանք | Շահույթում կամ վնասում ճանաչված | Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված | Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ. |
|---|---|---|---|---|---|
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | (30,281) | - | (5,730) | - | (36,011) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | (84,556) | - | 14,503 | 15,583 | (54,470) |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | (1,075,288) | 792,452 | 103,756 | - | (179,080) |
| Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներ և պահուստներ | (197,755) | 173,222 | 5,763 | - | (18,770) |
| Հիմնական միջոցներ | (68,334) | - | 16,594 | - | (51,740) |
| Այլ ակտիվներ | 25,243 | - | 19,053 | - | 44,296 |
| Այլ պարտավորություններ | 448,558 | - | 145,684 | - | 594,242 |
| Այլ փոխառություններ | (42,690) | - | (69,879) | - | (112,569) |
| **Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)** | **(1,025,103)** | **965,674** | **229,744** | **15,583** | **185,898** |

# 16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Կանխիկը դրամարկղում** | 30,542,976 | 23,812,923 |
| **Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում** | 192,296,163 | 108,760,743 |
| **Նոստրո հաշիվներ այլ բանկերում** | | |
| - Aa1-ից Aa3 վարկանիշով | 15,619,437 | - |
| - A1-ից A3 վարկանիշով | 3,872,463 | 2,055,194 |
| - Baa1-ից Baa3 վարկանիշով | 4,351,050 | 8,659,732 |
| - Ba1-ից Ba3 վարկանիշով | 591,763 | 363,521 |
| - առանց վարկանիշի | 103,187 | 744,991 |
| **Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում** | **24,537,900** | **11,823,438** |
| **Ընդամենը համախառն դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **247,377,039** | **144,397,104** |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (23,349) | (43,192) |
| **Ընդամենը զուտ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | **247,353,690** | **144,353,912** |

Պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ և չափվում են ամորտիզացված արժեքով 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկն ունի մեկ բանկում տեղաբաշխված միջոցներ (2018թ-ին Բակը չուներ որևէ այլ բանկում տեղաբաշխված միջոցներ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 15,619,437 հազար դրամ:

## Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում

ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները վերաբերում են վճարահաշվարկային գործունեությանը (տես Ծանոթագրություն 18) և անհրաժեշտության դեպքում կարող են ելքագրվել:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համաձրումը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| | 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (43,192) | - | - | (43,192) |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 43,192 | - | - | 43,192 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (23,349) | - | - | (23,349) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(23,349)** | **-** | **-** | **(23,349)** |

| | 2018թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (26,171) | - | - | (26,171) |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 26,171 | - | - | 26,171 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ | (43,192) | - | - | (43,192) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(43,192)** | **-** | **-** | **(43,192)** |

# 17 Ներդրումային արժեթղթեր և ածանցյալ ֆինանսական ակտիվներ

## (ա) Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| - ՀՀ կառավարության արժեթղթեր | 5,639,623 | 3,896,848 |
| - Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր | 496,024 | 495,621 |
| **Ընդամենը պետական պարտատոմսեր** | **6,135,647** | **4,392,469** |
| **Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| - B1-ից B3 վարկանիշով | 882,314 | 1,027,465 |
| - առանց վարկանիշի | 1,164,084 | 745,688 |
| **Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր** | **2,046,398** | **1,773,153** |
| **Ընդամենը Բանկի կողմից պահվող պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | **8,182,045** | **6,165,622** |
| **Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| ՀՀ կառավարության արժեթղթեր | - | 526,169 |
| **Ընդամենը պետական պարտատոմսեր** | **-** | **526,169** |
| **Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր** | **8,182,045** | **6,691,791** |
| **Ածանցյալ ֆինանսական ակտիվներ** | | |
| Տոկոսադրույքի սվոփեր | - | 84,237 |
| Արժութային սվոփեր | 73,561 | 40,982 |
| **Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ** | **73,561** | **125,219** |
| **Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | **8,255,606** | **6,817,010** |
| **Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | |
| Արժութային սվոփեր | 35,314 | 20,621 |
| **Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | **35,314** | **20,621** |

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

## (բ) Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| - ՀՀ կառավարության արժեթղթեր | 7,037,868 | 4,645,203 |
| - Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր | - | 3,019,309 |
| - Այլ եկրների եվրոպարտատոմսեր | - | 1,273,589 |
| **Ընդամենը պետական պարտատոմսեր** | **7,037,868** | **8,938,101** |
| **Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| - Ba1-ից Ba3 վարկանիշով | 204,154 | - |
| - B1-ից B3 վարկանիշով | 90,458 | 1,766,415 |
| - առանց վարկանիշի | 1,815,190 | 758,467 |
| **Օտարերկրյա կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| - B1-ից B3 վարկանիշով | 1,631,420 | - |
| **Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր** | **3,741,222** | **2,524,882** |
| **Ընդամենը պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | **10,779,090** | **11,462,983** |
| **Բաժնային ներդրումներ** | | |
| Կորպորատիվ բաժնետոմսեր | 69,895 | 139,145 |
| **Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր** | **10,848,985** | **11,602,128** |

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար: Կորստի պահուստը չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է:

| | 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (144,460) | - | - | (144,460) |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 70,802 | - | - | 70,802 |
| Մարված ակտիվներ | 1,854 | - | - | 1,854 |
| Վաճառված ակտիվներ | 101,135 | - | - | 101,135 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | (94,368) | - | - | (94,368) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(65,037)** | **-** | **-** | **(65,037)** |

| | 2018թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | (71,943) | - | - | (71,943) |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | - | - | - | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | (28,375) | - | - | (28,375) |
| Մարված ակտիվներ | 2,396 | - | - | 2,396 |
| Վաճառված ակտիվներ | 38,289 | - | - | 38,289 |
| Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ | (84,827) | - | - | (84,827) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **(144,460)** | **-** | **-** | **(144,460)** |

### *(i) Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված չգնահատվող բաժնային արժեթղթեր*

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներում ներառված են ստորև ներկայացվող չգնահատվող բաժնային արժեթղթերը.

| Անվանումը | Գրանցման երկիրը | Հիմնական գործունեությունը | Վերահսկվող % 2019թ. | Վերահսկվող % 2018թ. | 2019 հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| «Արցախ բանկ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Բանկային գործունեություն | - | 0.3% | - | 69,250 |
| ԱրՔա | Հայաստանի Հանրապետություն | Վճարային համակարգ | 3.76% | 3.76% | 36,429 | 36,429 |
| SWIFT | Բելգիա | Դրամական փոխանցումներ | 0.00% | 0.00% | 33,466 | 33,466 |
| | | | | | **69,895** | **139,145** |

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումները հիմնականում ներառում են պարտադիր բաժնետոմսերը ֆոնդային բորսաներում և քլիրինգային կազմակերպություններում: Ղեկավարությունը գտնում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

## (գ) Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Բանկի կողմից պահվող** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| - ՀՀ կառավարության արժեթղթեր | 30,880,481 | 8,247,384 |
| - Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր | 2,542,987 | 13,480,810 |
| **Ընդամենը պետական պարտատոմսեր** | **33,423,468** | **21,728,194** |
| **Հայկական կազմակերպությունների կորպորատիվ պարտատոմսեր** | | |
| - B1-ից B3 վարկանիշով | 152,571 | 484,608 |
| - առանց վարկանիշի | - | 302,996 |
| **Ընդամենը որպորատիվ պարտատոմսեր** | **152,571** | **787,604** |
| **Ընդամենը Բանկի կողմից պահվող պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | **33,576,039** | **22,515,798** |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (65,149) | (246,681) |
| **Ընդամենը Բանկի կողմից պահվող ամորտիզացված արժեքով չափվող զուտ ներդրումային արժեթղթեր** | **33,510,890** | **22,269,117** |
| **Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված** | | |
| **Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ** | | |
| Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր | - | 16,748,372 |
| **Ընդամենը պետական պարտատոմսեր** | **-** | **16,748,372** |
| **Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող համախառն ներդրումային արժեթղթեր** | **-** | **16,748,372** |
| Պարտքային կորստի գծով պահուստ | - | (192,026) |
| **Ընդամենը վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող համախառն ներդրումային արժեթղթեր** | **-** | **16,556,346** |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող զուտ պարտքային ներդրումային արժեթղթեր** | **33,510,890** | **38,825,463** |

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային որակը բացահայտելիս Բանկն օգտվում է «Moody's» վարկանիշային գործակալության վարկանիշներից:

2019թ. օգոստոսին «Moody's» վարկանիշային գործակալությունը ՀՀ կառավարության ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ թողարկողի և արտարժույթով արտահայտված գրավով չապահովված առաջնային պարտքի վարկանիշները B1-ից բարձրացրել է Ba3-ի: Կանխատեսումը «դրականից» փոխվել է «կայունի»: Վարկանիշի բարձրացումը հանգեցրել է ՀՀ կառավարության արժեթղթերի գծով պարտազանցման ռիսկի նվազմանը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **1,545,436** | **3,616,602** | **605,485** | **114,429** | **1,320,000** | **7,201,952** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **3,213,926** | **4,026,926** | **1,900,541** | **189,301** | **1,831,700** | **11,162,394** |

| հազ. դրամ | Վարձակալված գույքի բարելավում | Համակարգիչներ և կապի սարքավորումներ | Տնտեսական գույք | Փոխադրա-միջոցներ | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2018թ. | 3,382,399 | 4,507,730 | 1,538,154 | 205,511 | 2,478,033 | 12,111,827 |
| Ավելացումներ | 1,261,184 | 1,785,997 | 835,103 | 92,619 | 373,423 | 4,348,326 |
| Օտարումներ/ դուրսգրումներ | (112,528) | (26,450) | (51,270) | - | (281,226) | (471,474) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.** | **4,531,055** | **6,267,277** | **2,321,987** | **298,130** | **2,570,230** | **15,988,679** |
| ***Մաշվածություն և ամորտիզացիա*** | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2018թ. | 1,134,931 | 2,351,831 | 397,295 | 74,444 | 1,026,410 | 4,984,911 |
| Տարվա մաշվածություն և ամորտիզացիա | 256,008 | 519,857 | 109,772 | 24,266 | 319,450 | 1,229,353 |
| Օտարումներ/ դուրսգրումներ | (112,528) | (23,762) | (48,406) | - | (281,226) | (465,922) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.** | **1,278,411** | **2,847,926** | **458,661** | **98,710** | **1,064,634** | **5,748,342** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2018թ.** | **3,252,644** | **3,419,351** | **1,863,326** | **199,420** | **1,505,596** | **10,240,337** |

# 22 Վարձակալություն

Բանկը վարձակալում է ակտիվներ, մասնավորապես, գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի գրասենյակների տարածքները և այլ տարածքներ: Վարձակալության ժամկետը որպես կանոն կազմում է 10-ից 20 տարի:

Ստորև ներկայացված է այն վարձակալությունների մասին տեղեկատվությունը, որոնց շրջանակում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ:

## (ա) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

| | 2019թ.<br>հազ. դրամ |
|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի | 10,984,619 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ավելացումներ | 74,839 |
| Ժամանակաշրջանի մաշվածության գումար | (1,027,215) |
| Վարձակալության պայմանագրի փոփոխություն և ապաճանաչում | 1,202,876 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **11,235,119** |

## (բ) Վարձակալության գծով պարտավորություն

| | 2019թ.<br>հազ. դրամ |
|---|---|
| Մինչև մեկ տարի ժամկետով | 1,826,982 |
| Մեկից երկու տարի ժամկետով | 1,806,574 |
| Երկուսից հինգ տարի ժամկետով | 4,841,814 |
| Ավելի քան հինգ տարի ժամկետով | 17,548,888 |
| **Ընդամենը չզեղչված վարձակալության գծով վճարվելիք գումարներ** | **26,024,258** |
| Չվաստակած ֆինանսական ծախսեր | (14,651,001) |
| **Վարձակալության գծով պարտավորություն** | **11,373,257** |

## (գ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

| | 2019թ.<br>հազ. դրամ |
|---|---|
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածություն | 1,027,215 |
| Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ | 1,294,627 |

## (դ) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

| | 2019թ.<br>հազ. դրամ |
|---|---|
| **Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալությունների գծով** | |
| Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ | 1,444,183 |

# 23 Այլ ակտիվներ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Չավարտված գործարքների գծով դեբիտորական պարտքեր | 2,043,477 | 2,119,304 |
| Հաշիվներ քլիրինգային կազմակերպություններում՝ օգտագործման սահմանափակումներով | 569,931 | 447,384 |
| Բրոքերային հաշիվներ | 373,512 | 244,954 |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (42,495) | (18,498) |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ** | **2,944,425** | **2,793,144** |
| Կանխավճարներ մատակարարներին | 2,299,207 | 1,880,690 |
| Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ | 863,805 | 473,701 |
| Պաշարներ | 188,858 | 145,357 |
| Այլ | 83,685 | 164,719 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ** | **3,435,555** | **2,664,467** |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **6,379,980** | **5,457,611** |

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է այլ ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| | 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 14,884 | 209 | 3,405 | 18,498 |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (37,133) | 37,133 | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | - | (37,359) | 37,359 | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 26,592 | 484 | 185,327 | 212,403 |
| Դուրսգրումներ | - | - | (188,406) | (188,406) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **4,343** | **467** | **37,685** | **42,495** |

| | 2018թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 6,860 | 2,234 | 43,205 | 52,299 |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (209) | 209 | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | (282) | (1,869) | 2,151 | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | 8,515 | (365) | 267,889 | 276,039 |
| Դուրսգրումներ | - | - | (309,840) | (309,840) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **14,884** | **209** | **3,405** | **18,498** |

# 24 Բանկերի ավանդներ և մնացորդներ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Վարկեր ՀՀ ԿԲ-ից | 13,092,867 | 7,078,390 |
| Վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից | | |
| - Մինչև 12 ամիս սկզբնական մարման ժամկետով | 10,674,325 | 23,530,588 |
| - Ավելի քան 12 ամիս սկզբնական մարման ժամկետով | 4,568,199 | 3,421,295 |
| Ակրեդիտիվների գծով պարտավորություններ | 5,512,922 | 8,625,734 |
| Լորո հաշիվներ | 640,500 | 420,762 |
| | **34,488,813** | **43,076,769** |

Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն Բանկին տրամադրում է վարկեր, որն իր հերթին վարկեր է տրամադրում համապատասխան պայմանները բավարարող վարկառուներին: Վարկերի մշտադիտարկումը և վարչարարությունն իրականացվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակի կողմից:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, Բանկը չունի այնպիսի բանկեր (2018թ-ին՝ մեկ բանկեր), որոնց գծով մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 20,643,011 հազար դրամ:

# 25 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ** | | |
| - Ֆիզիկական անձիք | 77,232,696 | 61,904,034 |
| - Իրավաբանական անձինք | 260,795,880 | 145,889,262 |
| **Ժամկետային ավանդներ** | | |
| - Ֆիզիկական անձիք | 171,586,444 | 133,060,914 |
| - Իրավաբանական անձինք | 83,608,413 | 58,231,922 |
| | **593,223,433** | **399,086,132** |

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներից և ավանդներից 1,977,340 հազար դրամ (2018թ-ին՝ 11,001,416 հազար դրամ) գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխատվության հանձնառությունների դիմաց:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք հաճախորդ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չորս հաճախորդ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 144,761,622 հազար դրամ (2018թ-ին՝ 44,068,684 հազար դրամ):

# 26 Թողարկված պարտքային արժեթղթեր

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր | 50,000,346 | 46,233,668 |
| Մուրհակներ | 4,572,709 | 4,612,688 |
| | **54,573,055** | **50,846,356** |

2019թ. դեկտեմբերի դրությամբ Բանկը թողարկել և տեղաբաշխել է պարտքային արժեթղթեր դրամով և ԱՄՆ դոլարով՝ 8 միլիարդ դրամ և 86.7 միլիոն ԱՄՆ դոլար անվանական արժեքով (2018թ-ին՝ պարտքային արժեթղթեր դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով՝ համապատասխանաբար 5 միլիարդ դրամ, 81 միլիոն ԱՄՆ դոլար և 3 միլիոն եվրո անվանական արժեքով): 2019թ. դեկտեմբերի դրությամբ պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում էր համապատասխանաբար 8,125,944 հազար դրամ և 41,874,402 հազար դրամ (2018թ-ին՝ համապատասխանաբար 5,090,669 հազար դրամ, 39,469,585 հազար դրամ և 1,673,414 հազար դրամ):

Բանկի կողմի թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի արժեթղթերի ֆոնդային բորսայում:

2016թ-ին իր ներդրումների կառավարչի՝ «ResponsAbility Investments AG» միջոցով Բանկը չորս լյուքսեմբուրգյան հիմնադրամներում տեղաբաշխել էր ԱՄՆ դոլարով արտահայտված 20,000,000 ԱՄՆ դոլար գումարով մուրհակներ, որոնց մարման ժամկետը լրանում է 2021թ-ին: 2019թ. դեկտեմբերի դրությամբ մուրհակների հաշվեկշռային արժեքը կազմում է 4,572,709 հազար դրամ (2018թ-ին՝ 4,612,688 հազար դրամ):

## (ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի** | 50,846,356 | 40,932,595 |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ** | | |
| Թողարկված պարտքային արժեթղթերի վաճառք | 21,864,967 | 24,855,545 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | (17,659,493) | (12,849,554) |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ** | **4,205,474** | **12,005,991** |
| **Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը** | **(564,912)** | **(96,733)** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 3,123,159 | 2,604,298 |
| Վճարված տոկոսներ | (3,037,022) | (4,599,795) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **54,573,055** | **50,846,356** |

# 27 Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից | 126,654,327 | 120,852,547 |
| Փոխառություններ հայկական ֆինանսական կազմակերպություններից | 31,280 | 60,662 |
| | **126,685,607** | **120,913,209** |
| Ստորադաս փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից | 36,495,281 | 44,489,851 |
| Ստորադաս փոխառություններ վերջնական վերահսկող կողմից | - | 5,924,274 |
| | **36,495,281** | **50,414,125** |

## (ա) Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների կենտրոնացում

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հինգ ֆինանսական կազմակերպությունից (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ յոթ) ստացված փոխառություններ, որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 114,833,909 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 127,166,023 հազար դրամ):

## (բ) Ստորադաս փոխառություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս փոխառություններն իրենցից ներկայացնում են՝

- Կապակցված կողմ չհանդիսացող միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված փոխառություն (25,027,671 հազար դրամ), որի մարման ժամկետն է՝ 2022թ. հունվարի 11-ը:
- Այլ երկու ֆինանսական կազմակերպությունից ստացված փոխառություն՝ 4,307,276 հազար դրամ գումարով և 2026թ. հունվարի 15-ին մարման ժամկետով և 7,160,334 հազար դրամ գումարով և 2027թ. հունվարի 15-ին մարման ժամկետով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջնական վերահսկող կողմից ստացված 5,924,274 հազար դրամ գումարով փոխառությունը, որի մարման ժամկետը պայմանագրի համաձայն լրանում է 2021թ. հունվարի 11-ին, ամբողջությամբ մարվել է 2019թ-ին:

Ստացված փոխառությունները Բանկը դիտարկում է որպես ստորադաս փոխառություններ, եթե սնանկության դեպքում փոխառությունը մարվում է Բանկի մյուս բոլոր պարտավորությունների ամբողջական մարումից հետո:

## (գ) Կովենանտներ

Բանկը պարտավոր է պահպանել որոշակի կովենանտներ փոխառության պայմանագրերի հետ կապված: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը պահպանել է բոլոր այդ կովենանտները:

## (ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

| | Այլ փոխառություններ | Ստորադաս փոխառություններ |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.** | 120,913,209 | 50,414,125 |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ** | | |
| Մուտքեր | 36,670,697 | 2,402,111 |
| Մարումներ | (28,146,725) | (15,346,760) |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ** | **8,523,972** | **(12,944,649)** |
| **Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը** | **(2,887,489)** | **(564,649)** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 6,198,375 | 3,778,109 |
| Վճարված տոկոսներ | (6,062,460) | (4,187,655) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.** | **126,685,607** | **36,495,281** |

| | Այլ փոխառություններ | Ստորադաս փոխառություններ |
|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.** | 98,128,094 | 40,919,768 |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ** | | |
| Մուտքեր | 109,241,838 | 9,290,363 |
| Մարումներ | (85,915,500) | - |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ** | **23,326,338** | **9,290,363** |
| **Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը** | **(552,218)** | **22,123** |
| **Այլ փոփոխություններ** | | |
| Տոկոսային ծախս | 4,910,452 | 5,984,672 |
| Վճարված տոկոսներ | (4,899,457) | (5,802,801) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.** | **120,913,209** | **50,414,125** |

# 28 Այլ պարտավորություններ

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 3,433,379 | 2,944,207 |
| Կրեդիտորական պարտքեր ճանապարհին | 1,262,818 | 887,189 |
| Առևտրական կրեդիտորական պարտքեր | 995,216 | 621,549 |
| Ֆակտորինգի պայմանագրերին վերաբերող ֆինանսական պարտավորություններ | 954,480 | 948,514 |
| Ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին վճարվելիք գումարներ | 176,713 | 126,004 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 1,438,284 | 1,562,388 |
| **Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ** | **8,260,890** | **7,089,851** |
| | | |
| Այլ վճարվելիք հարկեր | 305,946 | 301,576 |
| ՀՀ ԿԲ-ի կողմից դեռ չհաստատված նորմատիվային կապիտալի համալրում | 95,484 | - |
| Հետաձգված եկամուտ | 3,003 | 2,385 |
| **Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ** | **404,433** | **303,961** |
| **Ընդամենը այլ պարտավորություններ** | **8,665,323** | **7,393,812** |

# 29 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

## (ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 116,710 սովորական բաժնետոմսից (2018թ-ին՝ 116,564): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 320 հազար դրամ և բոլոր բաժնետոմսերն ամբողջությամբ վճարված են:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2019թ-ին Բանկը թողարկել է լրացուցիչ 146 բաժնետոմս՝ 320,000 դրամ անվանական արժեքով (2018թ-ին՝ 16,291 բաժնետոմս՝ 320,000 դրամ անվանական արժեքով) և 599,687 դրամ տեղաբաշխման արժեքով (2018թ-ին՝ 885,560 դրամ): 2019թ-ին թողարկված բոլոր բաժնետոմսերում ամբողջությամբ ձեռք են բերվել «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերության կողմից:

## (բ) Պահուստների բնույթը և նպատակը

***Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ***

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

### (գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2019թ-ին Բանկը հայտարարել և վճարել է 1,050,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2018թ-ին՝ 1,148,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ):

## 30 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի բանկային գործունեության համար և Բանկի գործառնությունների կենսական տարրն է: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

### (ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև անընդհատ հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների փոփոխությունները, առաջարկվող արտադրանքն ու ծառայությունների և ընդունված լավագույն պրակտիկան/փորձն արտացոլելու նպատակով:

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի աշխատանքի, առանցքային ռիսկերի կառավարման գործընթացի հսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման և խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումների հսկողության և իրականացման ու ռիսկերի համար սահմանված սահմանաչափերում Բանկի գործունեության իրականացումն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման համար: Նա հաշվետու է ուղղակիորեն Տնօրինությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության տեսակից և չափից:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի ներսում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկերի մեղմացմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության որոշմանը: Բացի պարտքային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծություն իրականացնելուց, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական բաժինների հետ՝ նրանց գործունեության ոլորտների հետ կապված մասնագիտական դատողություններ ստանալու համար:

## (բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը գլխավորում է Գլխավոր տնօրենը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Տնօրինության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների գծով, տոկոսադրույքների փոփոխության ժամկետներ, արտարժույթի դիրքեր, որոնք կանոնավոր կերպով մշտադիտարկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Տնօրինության կողմից:

Բացի այդ, Բանկն իրականացնում է մեծ թվով սթրես թեստեր առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր դիրքի վրա շուկայի բազմաթիվ բացառիկ սցենարների ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար: Սթրեսի թեստերը ցույց են տալիս կորուստների հավանական չափը, որոնք կարող են առաջանալ ծայրահեղ պայմաններում:

### *(i) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

### *Միջին արդյունավետ տոկոսադրույքներ*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

| | 2019թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | | 2018թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, % | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | Այլ արտարժույթ |
| **Տոկոսաբեր ակտիվներ** | | | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային աչժեթղթեր | 9.5% | 6.7% | 4.8% | 9.5% | 6.4% | 4.9% |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 10.2% | 7.5% | - | 10.9% | 5.0% | 5.0% |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 8.6% | 6.2% | - | 9.0% | 5.7% | - |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | - | 5.3% | - | 7.3% | - | 1.0% |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6.1% | 3.4% | 0.5% | 7.0% | 3.0% | 1.0% |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 12.7% | 8.9% | 6.2% | 13.6% | 8.6% | 7.1% |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 13.9% | 7.9% | 6.5% | 13.7% | 7.3% | 8.4% |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 14.2% | 8.8% | 6.1% | 14.8% | 8.6% | 5.2% |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | - | 8.7% | 5.3% | - | 6.3% | 6.7% |
| **Տոկոսակիր պարտավորություններ** | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 6.5% | 2.2% | 1.7% | 6.7% | 3.3% | 0.6% |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | - | - | - | 6.1% | - | - |
| Հաճախորդների ժամկետային ավանդներ | 9.0% | 4.1% | 1.8% | 9.0% | 4.1% | 3.0% |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 9.7% | 5.2% | - | 9.7% | 5.4% | 3.3% |
| Ստորադաս փոխառություններ | - | 10.2% | 6.3% | - | 9.4% | 6.4% |
| Այլ փոխառություններ | 8.4% | 5.0% | 2.8% | 7.9% | 6.1% | 3.0% |

### *Տոկոսադրույքի զգայնության վերլուծություն*

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության հսկողությամբ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների, բացառությամբ տոկոսակիր դրամական միջոցների և դրանց համարժեքների, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գյություն ունեցող դիրքերի հիման վրա:

| | 2019թ.<br>հազ. դրամ | 2018թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ աճ | (1,049,753) | (1,162,410) |
| 100 բկ զուգահեռ նվազում | 1,049,753 | 1,162,410 |

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ, որն իրականացվել է 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

| | 2019թ.<br>Սեփական կապիտալ<br>հազ. դրամ | 2018թ.<br>Սեփական կապիտալ<br>հազ. դրամ |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ աճ | (315,398) | (529,312) |
| 100 բկ զուգահեռ նվազում | 315,398 | 529,312 |

## *(ii) Արժութային ռիսկ*

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արժութային ռիսկին, սակայն այս գործառնությունները չեն որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն՝ ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 31,370,523 | 136,945,002 | 5,668,474 | 173,983,999 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային աչժեթղթեր | 1,788,708 | 45,873 | - | 1,834,581 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 3,353,097 | - | - | 3,353,097 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 2,542,987 | - | - | 2,542,987 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 20,101,586 | 4,824,324 | - | 24,925,910 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 1,346,506 | 7,524,129 | - | 8,870,635 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 328,225,481 | 80,824,999 | 1,740,067 | 410,790,547 |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 1,574,039 | 3,472,163 | - | 5,046,202 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 1,994,946 | 948,658 | - | 2,943,604 |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 6,902,267 | 3,015,623 | 2,985 | 9,920,875 |
| Այլ ակտիվներ | 1,761,925 | 29,107 | 57,915 | 1,848,947 |
| **Ընդամենը ակտիվներ** | **400,962,065** | **237,629,878** | **7,469,441** | **646,061,384** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 13,556,167 | 4,869,901 | 1,018,093 | 19,444,161 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 361,523,559 | 63,486,589 | 7,214,487 | 432,224,635 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 46,447,112 | - | - | 46,447,112 |
| Ստորադաս փոխառություններ | 25,027,671 | 11,467,610 | - | 36,495,281 |
| Այլ փոխառություններ | 74,938,072 | 36,480,965 | - | 111,419,037 |
| Այլ պարտավորություններ | 1,292,686 | 450,630 | 18,164 | 1,761,480 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **522,785,267** | **116,755,695** | **8,250,744** | **647,791,706** |
| **Զուտ դիրքը** | **(121,823,202)** | **120,874,183** | **(781,303)** | **(1,730,322)** |
| Ածանցյալ գործիքների ազդեցությունը | 118,470,708 | (122,495,280) | (239,651) | (4,264,223) |
| **Զուտ դիրքը** | **(3,352,494)** | **(1,621,097)** | **(1,020,954)** | **(5,994,545)** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | ԱՄՆ դոլար հազ. դրամ | Եվրո հազ. դրամ | Այլ արտարժույթ հազ. դրամ | Ընդամենը հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 12,701,409 | 46,349,316 | 5,225,918 | 64,276,643 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումային աչժեթղթեր | 1,750,450 | 80,331 | - | 1,830,781 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 5,031,472 | 1,355,683 | - | 6,387,155 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 13,480,810 | - | - | 13,480,810 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 1,328,545 | 1,273,907 | 104,764 | 2,707,216 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 914,220 | 2,769,206 | - | 3,683,426 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 380,471,956 | 49,326,693 | 1,887,584 | 431,686,233 |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 6,393,795 | 1,874,744 | - | 8,268,539 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 1,805,094 | 155,594 | - | 1,960,688 |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 6,954,432 | 3,098,930 | 1,656 | 10,055,018 |
| Այլ ակտիվներ | 2,073,597 | 302,581 | 825,200 | 3,201,378 |
| **Ընդամենը ակտիվներ** | **432,905,780** | **106,586,985** | **8,045,122** | **547,537,887** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 14,904,074 | 17,877,791 | 352,463 | 33,134,328 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 239,398,240 | 42,178,044 | 13,640,743 | 295,217,027 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 44,082,273 | 1,673,414 | - | 45,755,687 |
| Ստորադաս փոխառություններ | 41,113,611 | 9,300,514 | - | 50,414,125 |
| Այլ փոխառություններ | 71,682,222 | 37,904,405 | - | 109,586,627 |
| Այլ պարտավորություններ | 1,523,212 | 555,423 | 23,638 | 2,102,273 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **412,703,632** | **109,489,591** | **14,016,844** | **536,210,067** |
| **Զուտ դիրքը** | **20,202,148** | **(2,902,606)** | **(5,971,722)** | **11,327,820** |
| Ածանցյալ գործիքների ազդեցությունը | (9,717,582) | 3,321,900 | 6,028,089 | (367,593) |
| **Զուտ դիրքը** | **10,484,566** | **419,294** | **56,367** | **10,960,227** |

Ստորև աղյուսակում ներկայացված 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս հաշվի չեն առնվել հարկերը և հիմք են ընդունվել արտարժույթների փոխարժեքների փոփոխությունները, որոնք Բանկը դիտարկում է որպես ողջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առաջացող եկամուտը (ծախսը) ենթակա չէ հարկման (ենթակա չէ նվազեցման): Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

| | 2019թ.<br>հազ. դրամ | 2018թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճ 10%-ով | (335,249) | 1,048,457 |
| ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի աճ 10%-ով | (162,110) | 41,929 |

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

## (գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Բանկում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար), ներառյալ պորտֆելի գծով ռիսկի կենտրոնացումը սահմանափակելու վերաբերյալ ուղեցույցները և Վարկային կոմիտեի և Ռիսկերի կառավարման կենտրոնի ստեղծումը՝ պարտքային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրինության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- փոխառուների (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Բանկը ենթարկված է պարտքային ռիսկին, շարունակական հսկողության և մշտադիտարկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող համապատասխան մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկավորման բաժին, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը Վարկավորման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական բաժնի կողմից՝ կախված առանձին ռիսկերից:

Բանկը շարունակաբար վերահսկում է պարտքային ռիսկին ենթարկվող առանձին գործիքների կատարողականը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և փոխառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Ֆիզիկական անձանց վարկային դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկավորման ստորաբաժանման կողմից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման կենտրոնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառության գործառնությունների մաս:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գրավի և այդ վարկերի և փոխատվությունների գծով պարտքային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

Չճանաչված պայմանագրային հանձնառությունների գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

### *Արժեզրկման գնահատում*

2018թ. հունվարի 1-ից Բանկն ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու համար ակնկալվող դրամական պակասուրդները՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական պակասուրդը պայմանագրին համապատասխան կազմակերպությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և կազմակերպության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունն է: Ստորև ներկայացված են ակնյալվող պարտքային կորուստների հաշվարկի մեթոդները և առանցքային տարրերը:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն

*Պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը* որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին

*Պարտքի գումարը պարտազանցման պահին* ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում

*Կորուստը պարտազանցման դեպքում* դա այն կորստի գնահատված գումարն է, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը հիմնված է այն պարտքային կորուստների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի ամբողջ ժամկետի ընթացքում (ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ կամ ԱԺԱՊԿ), եթե տեղի չի ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որի դեպքում պահուստը հիմնվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների վրա: 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորստները և 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ կախված ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի մնացած մասի ընթացքում պարտազանցման տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերը նշված գործընթացի հիման վրա Բանկը խմբավորում է իր վարկերն ըստ փուլերի՝ 1-ին փուլի, 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, ինչպես ներկայացված է ստորև.

| | |
|---|---|
| 1-ին փուլի | Վարկերի սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը ճանաչում է պահուստ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: 1-ին փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից: |
| 2-րդ-փուլի | Երբ վարկի պարտքային ռիսկը նշանակալիորեն աճում է սկզբնական ճանաչումից ի վեր, Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: 2-րդ փուլի վարկերը ներառում են նաև գործիքներ, որոնց պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից: |
| 3-րդ փուլի | Վարկերը համարվում են պարտքային առումով արժեզրկված: Բանկը ձևավորում է պահուստ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների գծով: |
| Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված | Ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Սկզբնական ճանաչման պահին ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով հետագայում փոխվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները: |

***Պարտազանցման սահմանում***

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով տեղի է ունեցել պարտազանցում և, հետևաբար, այն դասում է 3-րդ փուլ (պարտքային առումով արժեզրկված) ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պարտավորությունները դառնում են 90 օր ժամկետանց պայմանագրով նախատեսված ժամկետից:

Հաճախորդի կողմից պարտականությունների չկատարման որակական գնահատման շրջանակում Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին՝ ելնելով ղեկավարության դատողությունից: Եթե այդ դեպքը տեղի է ունենում, Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք դրա արդյունքում հաճախորդը պետք է դիտարկվի որպես պարտականությունները չկատարած և դասվի 3-րդ փուլ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկի համար, կամ արդյոք 2-րդ փուլ դասելը տեղին է:

### *Պարտազանցման տեղի ունենալու հավանականության գնահատման գործընթաց*

*Պահառուական և միջբանկային հարաբերություններ*

Բանկի պահառուական և միջբանկային հարաբերությունները և պայմանագրային կողմերն իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ և դիլերներ, ֆոնդային բորսաներ և քլիրինգային կազմակերպություններ: Այս հարաբերությունների հետ կապված Բանկը վերլուծում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և արտաքին աղբյուրներից ստացված այլ տվյալները, օրինակ՝ արտաքին վարկանիշները:

*Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ*

Խմբավորում

Բանկը չունի ներքին վարկանիշային համակարգ իրավաբանական անձանց տրված վարկերի համար, որը կարող է օգտագործվել պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը գնահատելու համար: Բանկն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները.

- կորպորատիվ վարկեր,
- սպառողական վարկեր,
- հիփոթեքային վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը հիմնված է անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվության վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցների միջոցով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տեղեկատվությունը: Հավանականությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ընդհանուր վարկերի ժամկետանց դասերի միջև տեղափոխվող վարկերի մասնաբաժինը: Պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք էական ազդեցություն ունեն պարտազանցման տեղի ունենալու հավանականության վրա:

### *Պարտքի գումարը պարտազանցման պահին*

Պարտքի գումարը պարտազանցման պահին իրենից ներկայացնում է արժեզրկման տեսանկյունից գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը՝ հաշվի առնելով թե՛ պարտքի գումարը մեծացնելու հաճախորդի հնարավորությունը առաջիկա պարտազանցման դեպքում և թե՛ հնարավոր վաղաժամ մարումը: 1-ին փուլի վարկի գծով պարտազանցման պահին պարտքի գումարը հաշվարկելու նպատակով՝ Բանկը գնահատում է 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելու համար: 2-րդ-փուլի, 3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտազանցման պահին պարտքի գումարը դիտարկվում է գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

3-րդ փուլի և ձեռք բերված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար պարտքի գումարը պարտազանցման պահին հավասար է այդ վարկերի հաշվեկշռային արժեքին:

Պարտքի գումարը պարտազանցման պահին որոշվում է նախքան պարտազանցման տեղի ունենալու ամսաթիվը չկատարված պարտականություններով վարկերի ամորտիզացված արժեքի վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

*Կորուստը պարտազանցման դեպքում*

Հաճախորդներին տրված 1-ին փուլի վարկերի, ինչպես նաև անհատական հիմունքով ոչ էական 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար, Բանկը պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում է պորտֆելի մակարդակով: Բանկը պարտազանցման դեպքում կորստի չափը հաշվարկելու համար օգտագործում է պարտազանցման ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ անցյալ ժամանակաշրջանների տվյալները չկատարված պարտականություններով բոլոր վարկերի կտրվածքով: Հավաքագրվում է պարտազանցման ամսաթվից հետո դրամական հոսքերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և զեղչվում է պարտազանցման ամսաթվի դրությամբ՝ յուրաքանչյուր վարկի արդյունավետ տոկոսադրույքով: Դրամական հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է չկատարված պարտականություններով վարկերի գծով ստացված բոլոր տեսակի դրամական միջոցները (վարկերի մարումից ստացված դրամական միջոցներ, երաշխավորից ստացված դրամական միջոցներ, գրավի վաճառքից ստացված դրամական միջոցներ և այլն): Առանձին վերցված նշանակալի 2-րդ և 3-րդ փուլերի վարկերի համար Բանկը պարտազանցման դեպքում կորուստը հաշվարկում անհատական հիմունքով՝ հաշվի առնելով ակնկալվող դրամական միջոցները, ներառյալ գրավի իրացումից ստացվելիք դրամական հոսքերը:

**Պարտքային ռիսկի նշանակալի աճ**

Բանկի կողմից մշակված քաղաքականության համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում գնահատվում է արդյոք տեղի է ունեցել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր: Որպես հիմնական չափանիշ Բանկն օգտագործում է վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումի ի վեր, եթե ակտիվների գծով վճարումները ավելի քան 30 օր ժամկետանց են:

Պարտքային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը դիտարկում է նաև հետևյալ գործոնները՝

- տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը Հայաստանի այլ ֆինանսական կազմակերպություններում,
- վարկառուի զգալի ֆինանսական դժվարությունները,
- վարկի պայմանների վերանայումը վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման պատճառով,
- մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացումը և դրանց հնարավոր ազդեցությունը վարկառուի ֆինանսական արդյունքների վրա:

*Ապագայամետ տեղեկատվություն և տարբեր տնտեսական սցենարներ*

Ակնկալվող պարտքային կորուստների մոդելներում Բանկը հիմնվում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես, այնպիսի տնտեսական ելակետային տվյալների վրա, ինչպիսիք են՝

- սպառողական գների ինդեքսը,
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը,
- ՌԴ ռուբլի /ՀՀ դրամ փոխարժեքը,
- արտահանման ծավալները,
- ներմուծման ծավալները:

Ապագայամետ տեղեկատվությունը Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից): Բանկի Պարտքային ռիսկի բաժնի փորձագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ակնկալվող պարտքային կարուստների հաշվարկի յուրաքանչյուր տնտեսական սցենարում օգտագործված առանցքային ապագայամետ տնտեսական փոփոխականները/ենթադրությունները:

| | ԱՊԿ սցենար | Որոշված հավանականություն % | 2020թ. | 2021թ. |
|---|---|---|---|---|
| ***Հիմնական գործոններ*** | | | | |
| Սպառողական գների ինդեքս | | | | |
| | Լավատեսական | 20% | 101.805 | 100.605 |
| | Բազային | 60% | 105.000 | 103.800 |
| | Վատատեսական | 20% | 108.195 | 106.995 |
| ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք | | | | |
| | Լավատեսական | 20% | 436.3428 | 443.6428 |
| | Բազային | 60% | 483.3000 | 490.6000 |
| | Վատատեսական | 20% | 530.2572 | 537.5572 |
| ՌԴ ռուբլի /ՀՀ դրամ փոխարժեք | | | | |
| | Լավատեսական | 20% | 9.5033 | 9.7233 |
| | Բազային | 60% | 7.0400 | 7.2600 |
| | Վատատեսական | 20% | 4.5767 | 4.7967 |
| Արտահանում, մլն. դրամ | | | | |
| | Լավատեսական | 20% | 3,161.75 | 3,356.75 |
| | Բազային | 60% | 2,807.00 | 3,002.00 |
| | Վատատեսական | 20% | 2,452.25 | 2,647.25 |
| Ներմուծում, մլն. դրամ | | | | |
| | Լավատեսական | 20% | 6,165.15 | 6,567.15 |
| | Բազային | 60% | 5,686.00 | 6,008.00 |
| | Վատատեսական | 20% | 5,206.86 | 5,608.86 |

Վերը նշյուսակում ներկայացված բազային կանխատեսումների հետ մեկտեղ (60% հավանականությամբ) Բանկը օգտագործում է նաև ցնցումային մակրոտնտեսական փոփոխականներ ակնկալվող պարտքային կորուստները լավատեսական (20% հավանականությամբ) և վատատեսական (20% հավանականությամբ) սցենարներով հաշվարկելու համար: Այս ցուցանիշները կշռվում են բազային սցենարի ցուցանիշների հետ մեկտեղ ակնկալվող պարտքային կորուստների վերջնական ցուցանիշը ստանալու համար:

## Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են այն ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ համանման գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվելու հանգամանքից:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ գործիքների քլիրինգի պայմանագրերը, հետգնման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի փոխատվության գլխավոր պայմանագրերը: Համանման ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի փոխառության և փոխատվության պայմանագրերը: Ֆինանսական գործիքները, այդ թվում՝ վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և ընդունում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Այս գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտազանցում կատարելու, անվճարունակ դառնալու կամ սնանկանալու դեպքում: Բացի այդ Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը մտադիր չեն հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

**հազ. դրամ**

| Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ | Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Ֆինանսական գործիքներ | Զուտ գումար |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 23,549,559 | - | 23,549,559 | (23,549,559) | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **23,549,559** | **-** | **23,549,559** | **(23,549,559)** | **-** |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | - | - | - | - | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **-** | **-** | **-** | **-** | **-** |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման, իրագործելի գլխավոր պայմանագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

**հազ. դրամ**

| Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ | Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավո-րության համախառն գումարներ | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար | Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորու-թյունների զուտ գումար | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Ֆինանսական գործիքներ | Զուտ գումար |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,746,414 | - | 6,746,414 | (6,746,414) | - |
| **Ընդամենը ֆինանսական ակտիվներ** | **6,746,414** | **-** | **6,746,414** | **(6,746,414)** | **-** |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (17,011,404) | - | (17,011,404) | (17,011,404) | - |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **(17,011,404)** | **-** | **(17,011,404)** | **(17,011,404)** | **-** |

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

## (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով:Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել կորուստների ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը կազմված է այլ բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերից, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդներից, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելներ՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և արդյունավետ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և այդ դրամական հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքի հաշվին ֆինանսավորման ներգրավման ծրագրերի մշակում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական հոսքերի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատությունն ապահովող ծրագրերի մշակում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության հսկողություն:

Ակտիվների և պարտավորությունների բաժինը կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի և ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Ակտիվների և պարտավորությունների բաժինը ճևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և փոխատվություններից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ:

Ակտիվների և պարտավորությունների բաժինն իրականացնում է իրացվելիության դիրքի հսկողություն օրական կտրվածքով և իրացվելիության կանոնավոր «ստրեսային թեսթեր»՝ շուկայական սովորական և ավելի խիստ պայմանները ներառող տարբեր սցենարների շրջանակում: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է Ռիսկերի կառավարման բաժնի և ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Ակտիվների և պարտավորությունների բաժնի կողմից:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով չզեղչված դրամական հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված ամենավաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված դրամական ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է չզեղչված պայմանագրային դրամական հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ փոխատվության հանձնառությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը բաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխավորությունը կարող է օգտագործվել:Վճարումները, որոնց մասին հաճախորդները պետք է ծանուցվեն, դիտարկվում են այնպես, ինչպես եթե ծանուցումն անմիջապես ներկայացված լիներ, բացառությամբ հաճախորդների ընթացիկ հաշիվների և ցպահանջ ավանդների, որոնց համար նշված են մարումների ակնկալվող ժամկետները: Այնուամենայնիվ Բանկն ակնկալում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումն այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որին Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված ավանդներին վերաբերող Բանկի անցյալ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | (Ներհոսքի)/ արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 7,423,237 | 382,500 | 5,422,238 | 2,996,415 | 17,722,515 | 3,279,917 | 37,226,822 | 34,488,813 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 356,185,087 | 34,927,937 | 72,038,201 | 107,275,162 | 31,440,265 | 70,768 | 601,937,420 | 593,223,433 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 4,906,704 | 654,511 | 3,054,746 | 6,087,421 | 40,713,121 | - | 55,416,503 | 54,573,055 |
| Ստորադաս փոխառություններ | 1,143,339 | - | 357,153 | 1,579,947 | 30,511,336 | 12,653,304 | 46,245,079 | 36,495,281 |
| Այլ փոխառություններ | 2,003,027 | 3,557,813 | 6,747,436 | 13,957,126 | 109,942,627 | 4,681,113 | 140,889,142 | 126,685,607 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **371,661,394** | **39,522,761** | **87,619,774** | **131,896,071** | **230,329,864** | **20,685,102** | **881,714,966** | **845,466,189** |
| **Փոխատվության հանձնառություններ** | **36,452,296** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **36,452,296** | **36,452,296** |

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների վերլուծությունն ըստ մարման ժամկետների 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 6 ամիս | 6-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | (Ներհոսքի)/ արտահոսքի ընդհանուր համախառն գումար | Հաշվեկշռ. արժեք |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 12,893,988 | 7,048,159 | 7,088,445 | 6,888,068 | 10,129,111 | 2,022,806 | 46,070,577 | 43,076,769 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 17,011,404 | - | - | - | - | - | 17,011,404 | 17,011,404 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 132,004,427 | 52,833,203 | 57,320,798 | 98,873,247 | 65,516,061 | 83,553 | 406,631,289 | 399,086,132 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 358,847 | 3,210,199 | 7,862,077 | 7,600,720 | 37,289,828 | - | 56,321,671 | 50,846,356 |
| Ստորադաս փոխառություններ | 1,549,562 | 1,154,356 | 1,094,713 | 2,156,604 | 49,767,027 | 9,250,207 | 64,972,469 | 50,414,125 |
| Այլ փոխառություններ | 3,989,012 | 5,824,499 | 13,739,728 | 9,706,765 | 103,060,455 | 14,813 | 136,335,272 | 120,913,209 |
| Այլ ֆինանսական պարտավորություններ | 461,232 | 3,880,637 | 3,051,943 | - | - | - | 7,393,812 | 7,393,812 |
| Զուտ մարված ածանցյալ պարտավորություններ | 20,621 | - | - | - | - | - | 20,621 | 20,621 |
| **Ընդամենը ֆինանսական պարտավորություններ** | **168,289,093** | **73,951,053** | **90,157,704** | **125,225,404** | **265,762,482** | **11,371,379** | **734,757,115** | **688,762,428** |
| **Փոխատվության հանձնառություններ** | **25,280,062** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **25,280,062** | **25,280,062** |

Վերը և ստորև ներկայացված աղյուսակներում հաճախորդներից ներգրավված միջոցներում ներառված են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Բանկը պարտավոր է վճարել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն ըստ ավանդատուի պահանջի՝ կորցնելով հաշվեգրված տոկոսները: Վերը ներկայացված աղյուսակում այս ավանդները դասակարգված են ըստ պայմանագրային մարման ժամկետների:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 247,353,690 | - | - | - | - | - | - | 247,353,690 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 73,561 | 79,022 | 1,038,564 | 4,535,502 | 2,528,957 | - | - | 8,255,606 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | - | 90,547 | 808,703 | 5,970,379 | 3,909,460 | 69,896 | - | 10,848,985 |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | - | 123,001 | 11,113,364 | 17,540,179 | 4,734,346 | - | - | 33,510,890 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | 1,675,211 | - | - | 25,339,429 | - | 27,014,640 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 20,528,933 | 3,020,626 | - | - | - | - | - | 23,549,559 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 15,704,060 | 37,817,854 | 95,597,882 | 261,472,206 | 142,038,626 | - | 11,704,607 | 564,335,235 |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 57,104 | 166,237 | 941,852 | 3,881,009 | - | - | - | 5,046,202 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 19,361 | 222,207 | 989,947 | 3,591,396 | 736,957 | - | 99,822 | 5,659,690 |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 3,768,376 | 2,546,638 | 4,385,758 | - | - | - | - | 10,700,772 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 11,162,394 | - | 11,162,394 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ | - | - | - | - | - | 11,235,119 | - | 11,235,119 |
| Առգրավված ակտիվներ | - | - | - | - | - | 3,028,455 | - | 3,028,455 |
| Այլ ակտիվներ | 2,080,176 | 189,450 | 2,672,652 | - | - | 1,437,702 | - | 6,379,980 |
| **Ընդամենը ակտիվներ** | **289,585,261** | **44,255,582** | **119,223,933** | **296,990,671** | **153,948,346** | **52,272,995** | **11,804,429** | **968,081,217** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 35,314 | - | - | - | - | - | - | 35,314 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 7,413,097 | 363,086 | 16,029,223 | 7,670,584 | 3,012,823 | - | - | 34,488,813 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 309,442,880 | 49,002,050 | 190,132,871 | 44,586,889 | 58,743 | - | - | 593,223,433 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 4,894,341 | 315,412 | 11,754,830 | 37,608,472 | - | - | - | 54,573,055 |
| Ստորադաս փոխառություններ | 1,042,671 | - | 23,934 | 23,985,000 | 11,443,676 | - | - | 36,495,281 |
| Այլ փոխառություններ | 2,000,252 | 3,078,393 | 16,554,283 | 100,816,265 | 4,236,414 | - | - | 126,685,607 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | - | - | 279,389 | - | - | - | - | 279,389 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | - | - | - | 918,445 | - | - | - | 918,445 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 37,939 | 77,307 | 354,050 | 1,923,342 | 8,980,619 | - | - | 11,373,257 |
| Հանձնառությունների գծով պահուստ | 116,222 | - | - | - | - | - | - | 116,222 |
| Այլ պարտավորություններ | 3,717,426 | 516,300 | 4,431,597 | - | - | - | - | 8,665,323 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **328,700,142** | **53,352,548** | **239,560,177** | **217,508,997** | **27,732,275** | **-** | **-** | **866,854,139** |
| **Զուտ դիրքը** | **(39,114,881)** | **(9,096,966)** | **(120,336,244)** | **79,481,674** | **126,216,071** | **52,272,995** | **11,804,429** | **101,227,078** |

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների փորձը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ ակնկալվող մարման ժամկետների:

| հազ. դրամ | Ցպահանջ և մինչև 1 ամիս | 1-ից 3 ամիս | 3-ից 12 ամիս | 1-ից 5 տարի | Ավելի քան 5 տարի | Անժամկետ | Ժամկետանց | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 144,353,912 | - | - | - | - | - | - | 144,353,912 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 323,197 | 139,695 | 328,036 | 3,058,640 | 2,967,442 | - | - | 6,817,010 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 88,864 | 155,750 | 282,669 | 5,541,529 | 5,394,171 | 139,145 | - | 11,602,128 |
| Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր | 353,263 | 592,527 | 5,620,577 | 29,066,323 | 3,192,773 | - | - | 38,825,463 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 3,255,612 | - | - | - | - | 1,691,000 | - | 4,946,612 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 6,746,414 | - | - | - | - | - | - | 6,746,414 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 26,971,795 | 23,059,924 | 121,233,308 | 242,571,649 | 106,226,222 | - | 6,901,292 | 526,964,190 |
| Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ | 43,322 | 187,342 | 5,647,337 | 2,390,538 | - | - | - | 8,268,539 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 41,031 | 71,111 | 310,302 | 992,485 | 436,361 | - | 172,915 | 2,024,205 |
| Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ | 430,846 | 2,833,607 | 7,421,796 | - | - | - | - | 10,686,249 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 10,240,337 | - | 10,240,337 |
| Հետաձգված հարկային ակտիվ | - | - | - | 185,898 | - | - | - | 185,898 |
| Այլ ակտիվներ | 2,375,790 | 2,777,413 | 2,008,052 | - | - | 925,015 | - | 8,086,270 |
| **Ընդամենը ակտիվներ** | **184,984,046** | **29,817,369** | **142,852,077** | **283,807,062** | **118,216,969** | **12,995,497** | **7,074,207** | **779,747,227** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 20,621 | - | - | - | - | - | - | 20,621 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 17,011,404 | - | - | - | - | - | - | 17,011,404 |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 12,798,545 | 6,887,130 | 13,430,651 | 8,556,905 | 1,403,538 | - | - | 43,076,769 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 131,252,194 | 51,539,948 | 152,505,404 | 63,718,571 | 70,015 | - | - | 399,086,132 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 111,329 | 2,696,535 | 13,759,546 | 34,278,946 | - | - | - | 50,846,356 |
| Ստորադաս փոխառություններ | 1,190,128 | 435,488 | 16,411 | 39,521,888 | 9,250,210 | - | - | 50,414,125 |
| Այլ փոխառություններ | 3,465,015 | 8,061,402 | 16,176,215 | 93,195,761 | 14,816 | - | - | 120,913,209 |
| Ընթացիկ հարկային պարտավորություն | - | - | 1,086,688 | - | - | - | - | 1,086,688 |
| Հանձնառությունների գծով պահուստ | 140,163 | - | - | - | - | - | - | 140,163 |
| Այլ պարտավորություններ | 461,232 | 3,880,637 | 3,051,943 | - | - | - | - | 7,393,812 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **166,450,631** | **73,501,140** | **200,026,858** | **239,272,071** | **10,738,579** | **-** | **-** | **689,989,279** |
| **Զուտ դիրքը** | **18,533,415** | **(43,683,771)** | **(57,174,781)** | **44,534,991** | **107,478,390** | **12,995,497** | **7,074,207** | **89,757,948** |

Աղյուսակում ներկայացված մարման ժամկետների վերլուծությունն արտացոլում է անցյալ ժամանակաշրջանների փորձը և հաճախորդների ընթացիկ հաշիվների փաստացի մարումների ծավալը:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկ ուներ միջազգային ֆինանսական կազմակերպության հետ ստորագրված 14,391,000 հազար դրամ (30,000,000 ԱՄՆ դոլար) գումարով երկարաժամկետ փոխառության պայմանագիր, որի գումարը չէր ելքագրվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները:

Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում.

| | 2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված | 2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված |
|---|---|---|
| Առ 31 դեկտեմբերի | 100.7% | 89% |
| Դեկտեմբեր ամսվա միջին ցուցանիշ | 94.5% | 79% |

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափի հետ համապատասխանությունը գնահատելու համար, որը չպետք է պակաս լինի 60%-ից:

# 31 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են ապահովել համապատասխանություն Բանկի կապիտալի համար գործող արտաքին պահանջներին և պահպանել բարձր պարտքային վարկանիշ ու կապիտալի լավ ցուցանիշներ՝ գործունեությանն աջակցելու և բաժնետիրական արժեքը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ տնտեսական պայմանների փոփոխությունների ու իր գործունեության ռիսկային բնույթին համապատասխան: Կապիտալը կառուցվածքը պահպանելու կամ դրա հետ կապված ճշգրտումներ կատարելու համար Բանկը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին կամ թողարկել արժեթղթեր: Կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականությունում և ընթացակարգերում տեղի չի ունեցել որևէ փոփոխություն նախորդ տարիների համեմատությամբ:

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 30,000,000 հազար դրամ (2018թ-ին՝ 30,000,000 հազար դրամ): 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի չափը համապատասխանում էր ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն կապիտալի պահանջներին:

Բանկը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես կապիտալ սահմանված հողվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 12%: 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը՝ հետագա փոփոխություններով, այդ թվում՝ շուկայական ռիսկերի ներառման հետ կապված փոփոխություններով, դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 2019թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված | 2018թ. հազ. դրամ Աուդիտի չենթարկված |
|---|---|---|
| 1-ին դասի կապիտալ | 93,090,744 | 87,918,917 |
| 2-րդ դասի կապիտալ | 22,059,312 | 27,240,435 |
| **Ընդամենը կապիտալ** | **115,150,056** | **115,159,352** |
| **Ընդամենը ռիսկով կշռված ակտիվները՝** | **781,286,761** | **637,670,106** |
| **Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)** | **14.74%** | **18.06%** |

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկի կշիռների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականը՝ հաշվի առնելով պահանջներին համապատասխանող ցանկացած գրավ կամ երաշխավորություն: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր կորուստների առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

# 32 Փոխատվության հանձնառություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու հանձնառություններ: Այս հանձնառությունները նախատեսում են վարկային ռեսուրսների տրամադրում հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների տեսքով:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ երրորդ անձանց հանդեպ հաճախորդների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Փոխատվության հանձնառությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է պարտքային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են փոխատվության հանձնառությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի:

Աղյուսակում փոխատվության հանձնառությունների գծով արտացոլված գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջությամբ տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն իրենց պայմանագրային պարտականությունները:

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Պայմանագրային գումար** | | |
| Վարկային քարտերի գծով հանձնառություններ | 16,219,615 | 13,602,109 |
| Ոչ ֆինանսական երաշխավորություններ | 9,745,780 | 2,362,080 |
| Ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ | 5,649,694 | 5,542,370 |
| Չօգտագործված օվերդրաֆտներ | 4,837,207 | 3,773,503 |
| | **36,452,296** | **25,280,062** |
| **Արժեզրկման գծով պահուստ** | (116,222) | (140,163) |

Բացի վերը նշված փոխատվության հանձնառություններից, Բանկն ունի չօգտագործված վարկեր և վարկային գծեր, որոնց օգտագործումը պետք է լրացուցիչ հաստատվի Բանկի կողմից: Բանկը համարում է, որ մնացորդների գծով պարտավորություններ չեն ստանձվել: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները, որոնց գծով պարտավորություններ չեն ստանձվել, կազմում են 16,588,493 հազար դրամ (2018թ-ին՝ 18,237,090 հազար դրամ):

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային փոխատվության հանձնառությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս հանձնառությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել մինչև կատարվելը:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է հանձնառությունների գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| | 2019թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Հանձնառություններ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 120,080 | 5,755 | 14,328 | 140,163 |
| Սկզբնավորված նոր հանձնառություններ | 112,346 | - | - | 112,346 |
| Ժամկետը լրացած հանձնառություններ | (22,837) | (5,231) | (326) | (28,394) |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (4,892) | 4,892 | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | - | (1,414) | 1,414 | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | (93,509) | (382) | (14,002) | (107,893) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **111,188** | **3,620** | **1,414** | **116,222** |

| | 2018թ. | | | |
|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **1-ին փուլ** | **2-րդ փուլ** | **3-րդ փուլ** | **Ընդամենը** |
| **Հանձնառություններ** | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի | 160,709 | 17,082 | 84,493 | 262,284 |
| Սկզբնավորված նոր հանձնառություններ | 80,514 | - | - | 80,514 |
| Ժամկետը լրացած հանձնառություններ | (66,889) | (17,082) | (7,320) | (91,291) |
| Տեղափոխում 1-ին փուլ | - | - | - | - |
| Տեղափոխում 2-րդ փուլ | (20,083) | 20,083 | - | - |
| Տեղափոխում 3-րդ փուլ | - | (14,328) | 14,328 | - |
| Կորստի պահուստի զուտ վերաչափում | (34,171) | - | - | (34,171) |
| Դուրսգրում | - | - | (77,173) | (77,173) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի** | **120,080** | **5,755** | **14,328** | **140,163** |

# 33 Պայմանական դեպքեր

## (ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունների վերջնական գումարը, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

## (բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

# 34 Գործարքներ կապակցված կողմերի հետ

## (ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթիդ»-ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 56.53% 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Բանկի վերջնական վերահսկող անձը և վերջնական շահառու սեփականատերն է պարոն Ռուբեն Վարդանյանը:

Բանկի մայր կազմակերպությունը չի հրապարակում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

## (բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ | **2,801,262** | **2,157,647** |

Այս գումարները ներառում են Խորհրդի և Տնօրինության անդամների դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 2019թ. հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % | 2018թ. հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադրույք % |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | 1,006,530 | 8.04% | 1,273,721 | 7.79% |
| Այլ ակտիվներ | 2,188 | - | 1,832 | - |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 987,153 | 6.31% | 460,725 | 5.74% |
| Ստորադաս փոխառություններ* | - | - | 5,924,274 | 6.00% |
| Այլ պարտավորություններ | 1,185,957 | - | 1,478,022 | - |

* Ստորադաս փոխառությունները ստացվել են Բանկի վերջնական վերահսկող կողմից (տես Ծանոթագրություն 27):

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Տնօրինության անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

| | 2019թ. հազ. դրամ | 2018թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Շահույթ կամ վնաս** | | |
| Տոկոսային եկամուտ | 87,384 | 96,310 |
| Տոկոսային ծախս | (31,792) | (361,765) |

## (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2019թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

| | Մայր կազմակերպություն | | Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր | | Անմիջական մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ | | Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ և կապակցված կողմեր | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին արդյու-նավետ տոկոսադր. % | հազ. դրամ | Միջին արդյու-նավետ տոկոսադր. % | հազ. դրամ | Միջին արդյու-նավետ տոկոսադր. % | հազ. դրամ | Միջին արդյու-նավետ տոկոսադր. % | Ընդամենը հազ. դրամ |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | | | |
| **Ակտիվներ** | | | | | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | - | - | - | - | 1,371,580 | 8.89% | 1,371,580 |
| Այլ ակտիվներ | - | - | 9,243 | - | 4,375 | - | 119 | - | 13,737 |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 378,387 | - | 197,134 | - | 133,145 | - | 1,007,886 | - | 1,716,552 |
| - Ժամկետային ավանդներ | - | - | - | - | 976,068 | 4.81% | 381,946 | 5.70% | 1,358,015 |
| Այլ փոխառություններ | - | - | 13,585,997 | 5.89% | - | - | - | - | 13,585,997 |
| Այլ պարտավորություններ | - | - | 10,443 | - | 359.13 | - | 123 | - | 10,566 |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ** | | | | | | | | | |
| Ստացված երաշխավորություններ | - | - | 8,870,606 | 1.10% | - | - | - | - | 8,870,606 |
| **Շահույթ (վնաս)** | | | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | - | - | - | - | - | - | 131,328 | - | 131,328 |
| Տոկոսային ծախս | - | - | (1,330,627) | - | (35,373) | - | (5,414) | - | (1,371,414) |
| Այլ եկամուտ | 572,268 | - | 2,984 | | | | 25,909 | | 601,161 |
| Գործառնական վարձակալության գծով ծախս | - | - | - | - | (1,313,124) | - | - | - | (1,313,124) |

Ստորև ներկայացված են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2018թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

| | Մայր կազմակերպություն | | Նշանակալի ազդեցություն ունեցող բաժնետեր | | Անմիջական մայր կազմակերպության դուստր կազմակերպություններ | | Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ և կապակցված կողմեր | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադր. % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադր. % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադր. % | հազ. դրամ | Միջին արդյունավետ տոկոսադր. % | Ընդամենը հազ. դրամ |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | | | | | | | | | |
| **Ակտիվներ** | | | | | | | | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | - | - | - | - | - | - | 4,061,715 | 6.66% | 4,061,715 |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** | - | - | 62,619 | 0.00% | 879,324 | 0.00% | - | - | 941,943 |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | | | | | | | | | |
| - Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ | 20,562 | 0.00% | 62,690 | 0.00% | 1,085,613 | 0.00% | 1,376,258 | 0.00% | 2,545,123 |
| - Ժամկետային ավանդներ | - | - | - | - | 659,326 | 4.00% | 77,155 | 6.47% | 736,481 |
| Այլ փոխառություններ | - | - | 21,215,696 | 6.04% | - | - | - | - | 21,215,696 |
| Այլ պարտավորություններ | - | - | 13,209 | 0.00% | - | - | - | - | 13,209 |
| **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ** | | | | | | | | | |
| Ստացված երաշխավորություններ | - | - | 13,323,384 | 1.05% | - | - | - | - | 13,323,384 |
| **Շահույթ (վնաս)** | | | | | | | | | |
| Տոկոսային եկամուտ | - | - | - | - | - | - | 575,789 | - | 575,789 |
| Տոկոսային ծախս | - | - | (1,384,459) | - | (21,291) | - | (337,771) | - | (1,743,521) |
| Գործառնական վարձակալության գծով ծախս | - | - | - | - | (1,627,177) | - | - | - | (1,627,177) |

# 35 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառում

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

– 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):

– 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

– 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի, գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, իսկ ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների և ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի հաշվեկշռային և իրական արժեքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | Հաշվեկշռային արժեք հազ. դրամ | Իրական արժեք հազ. դրամ | Չիրացված օգուտ/(վնաս) հազ. դրամ |
|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվություններ | 585,741,899 | 583,700,810 | (2,041,089) |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 33,510,890 | 34,902,288 | 1,391,398 |
| **Ընդամենը** | **619,252,789** | **618,603,098** | **(649,691)** |

| | Հաշվեկշռային արժեք հազ. դրամ | Իրական արժեք հազ. դրամ | Չիրացված օգուտ/(վնաս) հազ. դրամ |
|---|---|---|---|
| Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվություններ | 547,943,183 | 538,682,849 | (9,260,334) |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 38,825,463 | 40,193,704 | 1,368,241 |
| **Ընդամենը** | **586,768,646** | **578,876,553** | **(7,892,093)** |

Ստորև բերվող աղյուսակում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | | | |
| - Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ | - | 8,182,045 | - | 8,182,045 |
| - Ածանցյալ ակտիվներ | - | 73,561 | - | 73,561 |
| - Ածանցյալ պարտավորություններ | - | (35,314) | - | (35,314) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Ներդրումային արժեթղթեր | 1,631,420 | 9,217,567 | - | 10,848,987 |
| | **1,631,420** | **17,437,859** | **-** | **19,069,279** |

Ստորև բերվող աղյուսակում իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով ներկայացված է այն ֆինանսական գործիքների վերլուծությունը, որոնք չափվում են իրական արժեքով և որոնց համար բացահայտված է իրական արժեքը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

| հազ. դրամ | 1-ին մակարդակ | 2-րդ մակարդակ | 3-րդ մակարդակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | | | |
| - Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ | - | 6,691,791 | - | 6,691,791 |
| - Ածանցյալ ակտիվներ | - | 125,219 | - | 125,219 |
| - Ածանցյալ պարտավորություններ | - | (20,621) | - | (20,621) |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ | | | | |
| - Ներդրումային արժեթղթեր | - | 11,602,128 | - | 11,602,128 |
| | **-** | **18,398,517** | **-** | **18,398,517** |

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվը վաճառքելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայական դիտելի գները, և գնահատման այլ մոդելները: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ոչ ռիսկային և ուղենիշային տոկոսադրույքները, վարկային սփրեդերը և այլ հավելավճարները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնային գործիքների և բաժնային գործիքների ինդեքսի գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

Սովորական և ավելի պարզ ֆինանսական գործիքների, այդ թվում՝ միայն դիտելի շուկայական տվյալներ օգտագործող և ղեկավարության դատողություններ և գնահատումներ գրեթե չպահանջող տոկոսադրույքի և արժութային սվոպերի, իրական արժեքը որոշելու համար Բանկը կիրառում է ընդունված գնահատման մոդելները: Դիտելի գները և մոդելի ելակետային տվյալները սովորաբար հասանելի են շուկայում՝ ցուցակված պարտքային և բաժնային արժեթղթերի, բորսայում շրջանառվող ածանցյալ գործիքների և բորսայում չշրջանառվող պարզ ածանցյալ գործիքների, այդ թվում՝ տոկոսադրույքի սվոփերի համար:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը առաջնորդվել է հետևյալ ենթադրությամբ՝ արտարժույթով արտահայտված վարկերի գծով կիրառվող 8%-9.8% զեղչման դրույքները և ՀՀ դրամով արտահայտված վարկերի գծով կիրառվող 10.8%-13.8% զեղչման դրույքները կիրառվում են հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից ակնկալվող դրամական հոսքերը զեղչելու համար:

# 36 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

(i) 2020թ. փետրվարի 21-ին «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» ընկերությունն ամբողջությամբ ձեռք բերեց Բանկի կողմից լրացուցիչ թողարկված 320,000 դրամ անվանական արժեքով 124 բաժնետոմսերը՝ 770,031 դրամով մեկ բաժնետոմսի համար: Գործարքի արդյունքում Բանկի բաժնետերերի կազմը փոխվեց հետևյալ կերպ՝ «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) (56.47%), ՎՋԵԲ (17.76%), ԱՋԲ (13.94%) և «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» (11.83%).

2019թ. դեկտեմբերի 6-ին Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատեց երկու գործարք.

- «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթիդ»-ին պատկանող 8,788 սովորական բաժնետոմսերը, որոնք կազմում են բաժնետիրական կապիտալի 7.52%-ը, ձեռքբերումը Նուբար Աֆեյանի կողմից
- ձեռք բերված բաժնետոմսերի փոխանցումը Նուբար Աֆեյանի կողմից «Աֆեյան հիմնադրամ Հայաստանի համար» Ինկ. -ին:

Գործարքների իրականացումն ավարտվեց 2020 մարտի 11-ին: Գործարքների արդյունքում Բանկի բաժնետերերի կազմը փոխվեց հետևյալ կերպ: «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) (48.95%), ՎՋԵԲ (17.76%), ԱՋԲ (13.94%), «Ի-Էս-Փի-Էս Հոլդինգ Լիմիթիդ» (11.83%) և «Ափեյան հիմնադրամ Հայաստանի համար» Ինկ. (7.52%):

(ii) 2019թ. դեկտեմբերի 31-ից հետո COVID 19 բռնկման հետևանքով համաշխարհային շուկայում տեղի են ունեցել զգալի ցնցումներ: Այլ գործոնների հետ մեկտեղ, հիվանդության բռնկումը հանգեցրել է ֆոնդային բորսայի ցուցանիշների, նավթի և այլ ապրանքների գների կտրուկ անկման: Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Բանկը շարունակում էր իր գործունեությունն առանց ընդհատումների: Բանկի աշխատակիցների մի մասն անցել էր հեռավար աշխատանքի: Առևտրի կենտրոններում գտնվող Բանկի մասնաճյուղերի գործունեությունն ընդհատվել էր կենտրոնների փակման պատճառով:

COVID 19 բռնկման հետևանքով Բանկն ակնկալում է, որ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները կաճեն 2020թ-ին, մասնավորապես, հյուրանոցային ծառայությունների, մանրածախ առևտրի, սննդի և խմիչքների և աճշարժ գույքի ոլորտում գործող իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար:

Բանկը վարկային արձակուրդ է տրամադրել իր ֆիզիկական անձ վարկառուներին երկու ամիս ժամկետով՝ սկսած 2020թ. մարտի 13-ից: Արձակուրդի ժամանակահատվածում ֆիզիկական անձ վարկառուները կարող են չիրականացնել գրաֆիկով նախատեսված իրենց վարկերի մայր գումարների և տոկոսների վճարումները՝ առանց վարկային պատմության վրա որևէ բացասական հետևանքի: Հետաձգված վճարումները հավասարապես կբաշխվեն 2020թ. հունիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ այս հնարավորությունից օգտվել է միայն սահմանված պահանջներին համապատասխանող վարկառուների մոտ 30%-ը:

Բանկը դիտարկել է հիվանդության բռնկման ազդեցությունն իր իրացվելիության դիրքի և կապիտալի համարժեքության ցուցանիշի վրա տարբեր սթրեսային սցենարների ներքո, և ղեկավարությունը գտնում է, որ այն չի ունենա լայնամասշտաբ ազդեցություն Բանկի ցուցանիշների վրա:

Բացի այդ, կարգավորող մարմինը (ՀՀ կենտրոնական բանկը) մտադրություն է հայտնել ցուցաբերել աջակցություն Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածին, մեղմացնելով նորմատիվները և աջակցելով իրացվելիության հարցում, անհրաժեշտության դեպքում, և ՀՀ կառավարությունն իրականացնում է տնտեսության աջակցության ծրագրեր, որոնք նպատակաուղղված են COVID 19 հետևանքների հաղթահարմանը:

Այնուամենայնիվ, Բանկն ընդունում է, որ սահմանափակումների ժամկետի երկարաձգումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի, վերջինիս ֆինանսական վիճակի և գործառնական գործունեության արդյունքների վրա միջին ժամկետի և երկարաժամկետ հեռանկարում: Բանկը շարունակում է ուշադիր հետևել իրավիճակին և կձեռնարկի պատասխան քայլեր հնարավոր իրադարձությունների և հանգամանքների ազդեցությունը մեղմելու համար՝ դրանց առաջացմանը զուգահեռ: Բանկը քիչ հավանական է համարում սահմանափակումների երկարաձգումը 2020թ. մայիսի 14-ից հետո, քանի որ Հայաստանի Հանրապետության վարչապետը հայտարարել է, որ երկրում արտակարգ դրությունը կդադարի գործել նշված ամսաթվից:

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
## 31 դեկտեմբերի 2020թ.

Բանկի անվանումը՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք.Երևան, 0010, Վ. Սարգսյան 2, հեռ՝ 56 11 11

(հազար դրամ)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծնթ. | 01/10/2020-31/12/2020 | 01/01/2020-31/12/2020 | 01/10/2019-31/12/2019 | 01/01/2019-31/12/2019 |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտներ | 4 | 17,586,521 | 66,544,857 | 15,492,262 | 60,360,766 |
| Տոկոսային ծախսեր | 4 | (7,999,204) | (31,564,689) | (7,393,105) | (29,362,152) |
| **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵՎ ՆՄԱՆԱՏԻՊ ԵԿԱՄՈՒՏ** | | **9,587,317** | **34,980,168** | **8,099,158** | **30,998,614** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 5 | 1,507,260 | 5,250,022 | 1,698,562 | 5,439,164 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | 6 | (399,000) | (1,471,612) | (397,176) | (1,501,380) |
| **ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ** | | **1,108,260** | **3,778,410** | **1,301,386** | **3,937,784** |
| Իրական արժեքով ՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ (վնաս)/ օգուտ | 7 | (2,439,101) | (3,602,132) | (1,025,110) | 315,158 |
| Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ | 8 | 3,864,250 | 8,653,830 | 2,563,536 | 4,577,671 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ | | 253,156 | 572,460 | (42,507) | 345,547 |
| Այլ գործառնական եկամուտներ | 9 | 2,608,124 | 3,854,909 | 871,546 | 3,179,924 |
| Այլ գործառնական ծախսեր | 9 | (989,480) | (3,433,444) | (839,563) | (3,405,890) |
